

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ»

Դասընթացի ուսումնական ձեռնարկ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թեմա 1: «Մարդու իրավունքներ» առարկայի էությունը: «Մարդու իրավունքներ և զինվորական ծառայություն

Թեմա 2: «Կյանքի իրավունք»

Թեմա 3: «Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը»

Թեմա 4: «Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք»

Թեմա 5: «Արդար դատաքննության իրավունք»

Թեմա 6: «Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք»

Թեմա 7: «Արտահայտվելու ազատություն»

Թեմա 8: «Ազատ ընտրելու իրավունք»

Թեմա 9: «Խտրականության արգելքը»

Թեմա 10: «Մտքի, խղճի, կրոնի ազատություն»

Թեմա 11: «Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության առանձնահատկությունները»

Թեմա 12: «Գենդերը և անվտանգությունը զինված ուժերում»

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

### ՆՊԱՏԱԿԸ

Ուսումնական ծրագրի և ձեռնարկի նպատակն է ռազմական ինստիտուտների կուրսանտներին ծանոթացնել մարդու իրավունքների համընդհանուր կոնցեպտին՝ շեշտադրում կատարելով այն սկզբունքի վրա, որ զինված ուժեր մտնելով զինվորականների հիմնարար իրավունքներն ու ազատությունները չեն վերանում:

Մասնավորապես, ձեռնարկի նպատակն է՝

- Կուրսանտներին մատուցել **գիտելիքներ** մարդու իրավունքների և մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն ստանդարտների վերաբերյալ՝ կարևորելով վերջիններիս կողմից իրենց վերապահված լիազորությունների և գործառույթների իրականացման ընթացքում այդ ստանդարտներին ուշադրություն դարձնելու հանգամանքը
- Ուժեղացնել կուրսանտների **կարողությունները**՝ նրանց ապագա աշխատանքի և մասնագիտական գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով: Սոսկ տեսական գիտելիքների իմացությունը բավարար չէ դրանք պրակտիկայում մասնագիտական վարքագծի մեջ ինպլեմենտացնելու համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ապահովել նաև կարողությունների առկայությունը:
- Վերափոխել կուրսանտների մոտ առկա հնարավոր բացասական **վերաբերմունքը** մարդու իրավունքների ընդհանուր կիրառելիության և սկզբունքների նկատմամբ, այնպես, որ վերջիններս գիտակցեն իրենց աշխատանքի ընթացքում մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի կարևորությունը

### ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ուսումնական ձեռնարկը պատրաստվել է շեշտադրում կատարելով Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների վերաբերյալ **Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի 2010/4 հանձնարարականի** վրա: Ըստ այդմ, ուսումնական ծրագրի թեմատիկան ընտրվել է հաշվի առնելով հանձնարարականը: Ձեռնարկի

կազմման առանցքային աղբյուր հանդիսացել է **հանձնարարականի մեկնաբանությունները**, ինչպես նաև կազմակերպության կողմից նախկինում կազմակերպված դասընթացների ընթացքում կիրառված «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ուսումնական ձեռնարկը:

Ընդհանուր առմամբ՝ սույն ուսումնական ձեռնարկը կազմվել է հետևյալ նյութերի հիման վրա՝

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ Եվրոպական Կոնվենցիայի համապատասխան հոդվածների մեկնաբանություններ
- Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վերաբերելի նախադեպեր
- ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից պատրաստված ձեռնարկներ
- Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնևյան կենտրոնի կողմից թեմաներին վերաբերելի ուսումնասիրություններ
- «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից ոլորտի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ
- Այլ նյութեր

**ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 2010/4  
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ**

**Հանձնարարականի մեկնաբանություններ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հանձնարարականը վերաբերում է զինված ուժերի անձնակազմի կողմից աշխատանքի և ծառայության համատեքստում իրենց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացմանը:

**Ընդհանուր սկզբունքներ**

Հաշվի առնելով զինվորական կյանքի առանձնահատկությունները՝ զինված ուժերի անձնակազմը և անձնակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ, անկախ իր պաշտոնից, պետք է իրականացնի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ Եվրոպական Կոնվենցիայով, Եվրոպական Սոցիալական Խարտիայով և մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային փաստաթղթերով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները, որոնք վավերացվել են պետությունների կողմից:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածին և Եվրոպական Սոցիալական Խարտիայի 30-րդ հոդվածին համապատասխան, պատերազմի, արտակարգ դրության ժամանակ, երբ վտանգ է սպառնում մարդկանց կյանքին, պետությունները կարող են իրենց որոշ պարտավորությունների կատարումից շեղում թույլ տալ՝ տվյալ իրավիճակի պահանջներին համապատասխան և պայմանով, որ ձեռնարկված միջոցառումները անհամատեղելի չեն միջազգային իրավունքի ներքո ստանձնած այլ պարտավորությունների հետ:

Պարտավորություններից շեղումները սակայն թույլատրելի չեն հետևյալ իրավունքների մասով: կյանքի իրավունք, բացի պատերազմական թույլատրելի գործողություններից առաջացած մահվան դեպքերը, խոշտանգումների, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելք,

ստրկության և հարկադիր աշխատանքի արգելք, առանց օրենքի պատժի արգելք և կրկնակի պատասխանատվության ենթարկելու արգելքի սկզբունքները:

Հանձնարարականով նախատեսված իրավունքներն ու ազատությունները պետք է հարգվեն և իրականացվեն սկզբունքներին համապատասխան:

Հանձնարարականի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ զինված ուժերի անդամները զինված ուժեր մտնելով չեն կորցնում իրենց հիմնական իրավունքներն ու ազատությունները: Զինվորական պարտականությունների իրականացումը հնարավոր է արդարացնի որոշ իրավունքների և ազատությունների սահմանափակումը, որը կիրառելի չէ քաղաքացիների համար, սակայն զինված ուժերի անդամները, ինչպես յուրաքանչյուր անձ, պետք է ունենան պաշտպանված և հարգված իրավունքներ:

Հանձնարարականի նպատակը ԵՄ անդամ երկրներին իրենց զինված ուժերի ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության հարցում արդյունավետ միջոցների և ուղղությունների տրամադրումն է:

#### *«Զինված ուժերի անձնակազմ»-ի հասկացությունը*

Հանձնարարականի բացատրականում ծառայության մեջ գտնվող անձ հասկացությունը որպես հոմանիշ է օգտագործվում զինված ուժերի անձնակազմ եզրույթին: Ավելի լայն մեկնաբանության համաձայն, ծառայության մեջ գտնվող անձի կապը զինված ուժերի հետ դրսևորվում է հաշվի առնելով այն հանգամանքը, թե տվյալ անձը ժամկետային զինծառայող է, պահեստային, թե զինված ուժերի կամավոր մասնագետ: Վերջիններս նրանք են, ովքեր իրենց կամքով միանում են զինված ուժերին՝ ընտրելով զինվորական մասնագիտությունը անորոշ կամ նախապես որոշված ժամանակահատվածով:

Որոշ երկրներ ունեն նաև զինված ուժերի պահեստային ներուժ: Պահեստայինները զինված ուժեր կարող են մտնել կամ իրենց կամքով, կամ հարկադրաբար՝ ելնելով կոնկրետ իրավիճակից: Պահեստայինները կարող են լինել ինչպես սովորական քաղաքացիները, այնպես էլ զինված ուժերի անձնակազմի

ներկայացուցիչներ, ովքեր կանչվում են մոբիլիզացնող գործողությունների կատարման:

Ժամկետային զինձառայողները զիված ուժեր են մտնում ոչ իրենց կամքով, այլ պարտադիր զինձառայություն անցնելու նպատակով: Զինձառայողների կապը զինված ուժերի անձնակազմի հետ ժամանակավոր բնույթ է կրում:

Բոլոր երեք տեսակների համար ընդհանուր է համարվում այն հանգամանքը, որ նրանք բոլորը կաշկանդված են զինվորական կարգապահությամբ և հիերարխիայով: Միննույն ժամանակ, նրանց բոլորի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները պետք է պահպանվեն և հարգվեն:

Այնուամենայնիվ, զինված ուժերի կոնկրետ ներկայացուցչի պաշտոնը կարող է ազդել մարդու իրավունքների իրականացման վրա:

Զինված ուժերի անձնակազմի կողմից մարդու իրավունքների իրականացումը կարող է զինվորական կյանքի առանձնահատկություններից որոշ չափով ազդեցություն կրել և փոփոխվել: Հիմնական առանձնահատկությունը այս առումով կապված է զինվորական կարգապահության հետ, որի վերջնական նպատակը զինված ուժերի օպերացիոնալ մարտունակության ապահովումն է: Այն նկարագրվում է վարքագծի կանոնների պահպանմամբ, զինվորական կարգավորումներով և վերադասների հրամաններով: Հետևաբար, զինվորական կարգապահությունը միտված է կոորդինացնելու զինված ուժերի անձնակազմի գործողություններն ու վարքագիծը և նրանց միջև ձևավորվող հարաբերությունները՝ կարգուկանոն հաստատելու նպատակով:

## Թեմա 1: «Մարդու իրավունքներ» առարկայի էությունը: «Մարդու իրավունքներ և զինվորական ծառայություն»

### Մարդու իրավունքների հասկացությունը

Մարդու արժանապատվության պաշտպանության ձգտումը մարդու իրավունքների պաշտպանության հիմնական և կենտրոնական կոնցեպտն է: Վերջինիս շնորհիվ անհատը ընդհանուր մտահոգության և պաշտպանության առարկա է դառնում: Նման մոտեցումը հիմնված է համընդհանուր արժեքային համակարգի վրա, որը պահանջում է միջազգայնորեն ընդունված կանոնների ուժով մարդու իրավունքների պաշտպանություն, ինչը կարտացոլվի նաև պետությունների ներպետական օրենսդրության մեջ: Ներպետական օրենսդրության մակարդակով ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը սահմանում է. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից»:

20-րդ դարում մարդու իրավունքները զարգացել են որպես բարոյական, քաղաքական և իրավական հիմք: Մարդու իրավունքները դիտարկվում են որպես վախից և հետապնդումներից ազատ հասարակության երաշխիք: 21-րդ դարում արդեն սկսվեց կարևորվել ոչ միայն մարդու իրավունքների պաշտպանությունը, այլ նաև դրա մասին իրազեկումն ու կիրառումը<sup>1</sup>:

Գոյություն ունեն մարդու իրավունքների տարբեր սահմանումներ, մասնավորապես՝

Ա. Մարդու իրավունքները կոչված են ապահովելու յուրաքանչյուր անձի՝ հասարակության մնացած անդամների և պետական մարմինների կողմից իր մարդկային արժանապատվությանն ու պատվին համապատասխան վերաբերմունքի արժանանալու իրավունքը:

Բ. Մարդու իրավունքները ամեն տեսակ անարդարությունների դեմ պայքարելու բարոյապես արդարացված միջոց են:

<sup>1</sup> Understanding Human Rights, Manual on human rights education, European Training and Research Centre for Human Rights and Democracy, 2012



Գ. Մարդու իրավունքները ստիպում են, որ դատարաններն ու ոստիկանությունը պաշտպանեն հանցագործներին և ահաբեկիչներին՝ ի հաշիվ ժողովրդի մեծամասնության միջոցների և անվտանգության<sup>2</sup>:

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ<sup>3</sup>: Ուստի յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակության մեջ պետության գործունեության հիմնական ուղղություններից մեկը պետք է լինի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

«Մարդու իրավունքներ և ազատություններ» հասկացություններն ի հայտ են եկել դեռևս հնագույն դարաշրջաններում: Ազատության վերաբերյալ առաջին հիշատակումը հանդիպում է մ.թ.ա. 14-րդ դարում: Մարդու իրավունքները գոյություն ունեին դեռևս Հին Հունաստանում և Հին Հռոմում, դրանք ամրագրում էին օրենքի ու օրինականության արժեքն ու կարևորությունը: Մարդկության ամբողջ պատմությունն իրենից ներկայացնում է մարդու անընդմեջ պայքար պետության հետ՝ առավել շատ իրավունքներ ու ազատություններ ձեռք բերելու համար: Այդ պայքարը ներառում էր նաև արդեն իսկ նվաճած իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար առավել գործուն մեխանիզմներ ձեռք բերելու միտում: Մարդկության զարգացման յուրաքանչյուր փուլի հետ զուգահեռ ավելի շատ սոցիալական շերտեր են սկսում ձեռք բերել իրավունքներ ու ազատություններ: Իսկ ժամանակակից հասարակությունում արդեն յուրաքանչյուր մարդ, անկախ իր դիրքից, ունի որոշակի անօտարելի իրավունքներ ու ազատություններ:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական կոնցեպցիաները զարգացել են 18-19-րդ դարերում: Բացառապես դատավճռի հիման վրա անձին մեղավոր ճանաչելը, իրավախախտման և պատժի համաչափության սկզբունքը, պատշաճ իրավական ընթացակարգերի նախատեսումը, անմեղության կանխավարկածը, խոսքի, կրոնի ազատությունը, ազատ տեղաշարժման իրավունքը շարադրվել են դեռևս Ազատությունների մեծ խարտիայում (Magna Carta, 1215 թ.), իրենց հետագա զարգացումն են ստացել Հաբեաս Կորպուս Ակտում (Habeas Corpus Amendment Act 1679 թ.), Իրավունքների մասին բիլլում (The Bill of Rights, 1689 թ.), ԱՄՆ Անկախության հռչակագրում (The Declaration of Independence United States Code, 1776 թ.), Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում (Ֆրանսիա, 1789 թ.) և այլն:

---

<sup>2</sup> «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ուսումնական ձեռնարկ, ԵԱՀԿ

<sup>3</sup> История защиты прав человека; И. П. Мазитова; Accessed February 18 2010; Available from <http://www.law.edu.ru/doc/document.asp>.

Մարդու իրավունքների վերաբերյալ նախնական իրավական ձևակերպումներն առաջին անգամ տեղ են գտել 1215 թ. Անգլիական «Մագնա Կարտա» կոչվող փաստաթղթում, որը պայմանագիր էր անգլիական թագավորի և բարոնների միջև: Այդ պայմանագրով երաշխավորվում էր, որ ազատ մարդիկ չեն կարող ձերբակալվել, բանտարկվել կամ զրկվել իրենց ունեցվածքից այլ կերպ, քան դատարանի օրինական վճռով: Այլ կերպ ասած՝ դրանով կաշկանդվեց թագավորի կամ այլ արտոնյալ անձանց իրավունքը, որով մինչ այդ նրանք կարող էին ազատ մարդկանց կամայականորեն զրկել ազատությունից կամ ունեցվածքից:

Նշված իրավունքներն այսօրվա իմաստով մարդու իրավունքներ չեն կարող համարվել, քանի որ վերաբերում էին մարդկանց մի խմբի միայն՝ ազատ մարդկանց, ովքեր սեփական ունեցվածք ունեին: Սակայն, եթե հաշվի առնենք, որ դա ժամանակակից ընկալմամբ մարդու իրավունքների ձևակերպման և կիրառման առաջին հաջող փորձն էր, ապա դրա արժեքն անգնահատելի է:

1689 թ. անգլիական իրավունքների բիլլը պայմանագիր էր արդեն անգլիական պառլամենտի և թագավորի միջև: Այս պայմանագիրը նախորդի նման իրավունքներ էր վերապահում մարդկանց մեկ խմբի միայն, սակայն այն շարունակեց «Մագնա Կարտա»-ի տրամաբանությունը և թագավորի ու այլ արտոնյալների կամայականություններից պաշտպանվելու վահան ստեղծեց մարդկանց նաև այդ խմբի համար: Սակարելի է հզոր առաջընթաց քայլ համարել, քանի որ դրանով ուղղակիորեն ճանաչվում էր մարդկանց տվյալ խմբի ինքնիշխանությունը, ինչը բացառիկ կարևոր էր:

Ինչպես իրենց ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում այս պայմանագրերը հսկայական սնունդ տվեցին տարբեր երկրների հասարակություններում մարդու իրավունքների վերաբերյալ քննարկումների համար: Այդ հարցերին խորը կերպով անդրադարձել են հայտնի մտածողներ Ջոն Լոքը, Ժան-ժակ Ռուսոն և ուրիշներ:

Ըստ Ջոն Լոքի՝ բնական իրավունքը մարդու բնական վիճակն է, երբ մարդը ազատություն է վայելում և իրավունք ունի պաշտպանելու իրեն: Իսկ այնքանով, որքանով մարդը պաշտպանված է, նա պետք է պաշտպանի և պահպանի մնացած մարդկանց, և ոչ ոք չպետք է այլ անձի զրկի կյանքից, ազատությունից, առողջությունից կամ գույքից: Ըստ Լոքի՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի պատժել իրեն վնասողին և դրանով իսկ լինել բնության իրավունքի իրականացնողը, սակայն դա կարող է անել միայն այնքան ժամանակ, քանի դեռ այդ մարդու և մնացած մարդկանց միջև չի ձևավորվում այնպիսի պայմանավորվածություն, որն իր հերթին ձևավորում է որոշակի քաղաքական հասարակություն: Այդ համաձայնությամբ մարդկիկ իրենց ինքնիշխանությունը որոշակիորեն զիջում են կառավարությանը, որպեսզի վերջինս ապահովի

օրենքների կիրառումը այնքան ժամանակ, քանի դեռ արդարացնում է իրեն տրված վստահությունը: Իսկ երբ կառավարությունը սկսում է կամայականություն գործել և ունեցվածքի, ապա, ըստ Լոքի, կառավարությունը զրկվում է իշխանությունից, և վերջինս վերադառնում է մարդկանց:

Ըստ Ռուսոյի՝ յուրաքանչյուր անձ ունի ինքնուրույն կամք և շահեր, որոնք բնական ազատություններ են, և որոնց իրականացումը կարող է չհամընկնել ընդհանուրի կամքի և շահերի հետ: Հասարակության մեջ մարդը սոցիալական պայմանագրի է կնքում, որով զիջում է իր բնական ազատությունները և ձեռք է բերում քաղաքացիական ազատություններ ու սեփականության իրավունք իր ամբողջ ունեցվածքի նկատմամբ:

Սոցիալական պայմանագրի այս տեսությունը մեծապես ազդեց այն ժամանակվա մտածողության վրա՝ նախանշելով 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունը:

*Մարդու իրավունքների սերունդներ:* Ժամանակակից աշխարհում մարդու իրավունքները հանդիսանում են բնական իրավունքներ և ստացել են ավելի լայն մեկնաբանություն: Միջազգային իրավական փաստաթղթերում ընդունված է մարդու իրավունքները բաժանել առանձին կատեգորիաների կամ սերունդների.

- Առաջին սերնդին վերաբերում են քաղաքացիական և քաղաքական իրավունքները, որոնք ամրագրված են Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966 թ. միջազգային դաշնագրում: Այդ իրավունքներն ի սկզբանե ամրագրված էին ազգային օրենսդրություններում, իսկ դրանց միջազգային իրավական ամրագրմանը մեծապես նպաստել է Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Ընդունված է համարել, որ այդ սերնդի իրավունքները (կյանքի իրավունք, ազատության իրավունք, անձնական անձեռնմխելիության իրավունք, օրենքի առջև հավասարության իրավունք և այլն) համարվում են բնական, անօտարելի և պատկանում են յուրաքանչյուր մարդու ի ծնե, իսկ պետությունը պետք է ապահովի այդ իրավունքների իրականացումը՝ անկախ իր քաղաքական, տնտեսական, սոցիալական զարգացման մակարդակից:

- Երկրորդ սերնդի մեջ մտնում են տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, որոնք ամրագրված են Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում: Այս կատեգորիայի իրավունքների կենսագործման համար (աշխատանքի իրավունք, կյանքի բարենպաստ կենսապայմանների իրավունք, սոցիալական ապահովության իրավունք, հանգստի իրավունք, կրթության իրավունք և այլն) պահանջվում է պետության կողմից որոշակի գործողությունների իրականացում, և դրանց իրագործումը կախված է տվյալ պետության տնտեսական և սոցիալական պայմաններից: Այս իրավունքների ձևավորման գործում

հսկայական ազդեցություն են ունեցել 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած Հոկտեմբերյան մեծ հեղափոխության ձեռքբերումները և այլ երկրներում ծայր առած աշխատավորական շարժումները:

- Երրորդ սերնդի իրավունքների շարքին դասվում են կոլեկտիվ իրավունքները (ազգերի իրավունք, փոքրամասնությունների իրավունք, զարգացման իրավունք, միջազգային խաղաղության և անվտանգության իրավունք և այլն): Այս իրավունքները ծագել են ազգային-ազատագրական շարժումների արդյունքում և ամրագրված են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի Գաղութային երկրներին և ժողովուրդներին ազատություն շնորհելու մասին 1960 թ. հռչակագրում, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի Ազգային և էթնիկական, կրոնական և լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին 1984 թ. հռչակագրում, 1981 թ. Աֆրիկյան խարտիայում, եվրոպական տարածաշրջանային ակտերում և այլն:

Մարդու իրավունքների երրորդ սերունդը, ըստ էության, սահմանվում և պաշտպանվում է միջազգային կազմակերպությունների կողմից: Վերջիններս հսկում են, որ պետություններն անշեղորեն կատարեն մարդու կոլեկտիվ իրավունքների վերաբերյալ իրենց կողմից ընդունված որոշումները:

Հարկ է նշել, որ մարդու իրավունքների տարանջատումը նման սերունդների կամ կատեգորիաների խիստ պայմանական բնույթ է կրում, գրականության մեջ նման տարանջատումները շատ բազմազան են ու հաճախ չեն համընկնում միմյանց հետ: Ոչ բոլոր հետազոտողներն են համամիտ մարդու իրավունքների նման դասակարգման հետ՝ պնդելով, որ բոլոր իրավունքներն էլ անբաժան են, և ցանկացած իրավունքի կրող հանդիսանում է անհատը, իսկ իրավունքների տարանջատումը կրում է խիստ պայմանական բնույթ՝ արտացոլելով միայն այս ոլորտում առկա միջազգային իրավական նորմերի ստեղծման պատմական առանձնահատկությունները<sup>4</sup>:

*Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ինստիտուտին բնորոշ սկզբունքները:* Հարկ է նշել, որ միջազգային իրավական պաշտպանության ենթակա մարդու իրավունքներին բնորոշ են որոշակի սկզբունքներ, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, ինչպես նաև այլ ունիվերսալ և տարածաշրջանային ակտերում<sup>5</sup>:

Մասնավորապես, մարդու իրավունքների ունիվերսալության սկզբունքը նշանակում է, որ մարդու իրավունքների ոլորտում գործող լայն ճանաչում ստացած միջազգային իրավական նորմերը ենթակա են պարտադիր կատարման բոլոր պետու-

<sup>4</sup> Ibid 2

<sup>5</sup> Human Rights in the Developed World; Accessed February 10 2010; American Journal of International Law.

թյունների կողմից ողջ միջազգային հանրության հանդեպ՝ անկախ որևէ պետության ազգային, կրոնական, քաղաքական առանձնահատկություններից: Յուրաքանչյուր պետություն պարտավոր է պահպանել որոշակի համընդհանուր ճանաչում ստացած միջազգային իրավական նորմեր ոչ միայն իր քաղաքացիների հանդեպ, այլ նաև օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ:

Հավասարության սկզբունքն արտահայտվում է նրանում, որ պետությունները պարտավոր են հետևել և ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը յուրաքանչյուր անձի հանդեպ՝ անկախ վերջինիս ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, կրոնից կամ ցանկացած այլ նմանատիպ հիմքից:

Մարդու իրավունքների փոխկապվածության և անբաժանելիության սկզբունքին համապատասխան՝ միջազգային հանրությունը պետք է մարդու իրավունքները դիտարկի որպես գլոբալ երևույթ՝ հավասար և արդարացի հիմունքներով, միատեսակ մոտեցմամբ և ուշադրությամբ: Պետությունները պարտավոր են պաշտպանել մարդու և քաղաքացու բոլոր իրավունքներն ու հիմնական ազատությունները՝ լինեն դրանք քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային թե սոցիալական:

### **Մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ և տարածաշրջանային մեխանիզմները**

Մեր օրերում, երբ որևէ մեկը վկայակոչում է մարդու իրավունքները, նա վստահաբար նկատի ունի մարդու այն իրավունքները, որոնք ամրագրված են միջազգային և ներպետական իրավունքում, այլ ոչ այն իրավունքները, որոնք փիլիսոփայական քննարկման առարկա են: Նման լեզվախստական մոտեցումը միտված է մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, հետևաբար՝ ունի մեծ պահանջարկ:

Մարդու իրավունքների համընդհանուր հարգումը և պաշտպանությունը մարդկությանը հավերժ հուզող խնդիրներից մեկն է և ներկայումս դասվում է համաշխարհային հանրության առջև ծառայած կարևորագույն խնդիրների թվին: Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության ռեալ մեխանիզմներն ի հայտ են եկել համեմատաբար վերջերս: Իհարկե, մարդու իրավունքների պաշտպանության իրավական նորմեր և դրանց համապատասխան նաև պաշտպանության անհրաժեշտ մեխանիզմներ ինչ-որ ձևով եղել են տարբեր ժամանակաշրջաններում, բայց ընդունված է մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության իրական մեխանիզմների մասին խոսել միայն ՄԱԿ-ի ստեղծումից հետո, ինչը ընդունված է որպես մարդու իրավունքների պաշտպանության ունիվերսալ մեխանիզմ: Իրադրությունը սկզբունքորեն փոխվել է ՄԱԿ-ի կանոնադրության, Մար-

դու իրավունքների համընդհանուր հռչակագրի և այլ համաձայնագրերի ընդունումից հետո: Այս ակտերը ոչ միայն անդամ պետությունների համար սահմանում են մարդու իրավունքների ոլորտին վերաբերող իրավական պարտականություններ, այլ նաև նախատեսում են պետությունների կողմից ստանձնած պարտականությունների կատարմանը վերահսկող միջազգային իրավական մեխանիզմներ:

Մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերից հիմնարարը 1948 թ. Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն է<sup>6</sup>: Հռչակագրի ընդունումից հետո ՄԱԿ-ի կողմից ընդունվել են մի շարք այլ իրավական փաստաթղթեր, որոնց հիման վրա մարդու իրավունքների պաշտպանությունը ավելի է ուժեղացել և ամրապնդվել:

1966 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունվել են երկու կարևոր փաստաթղթեր՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը և Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Իրավական ուժ այս փաստաթղթերը ստացել են շուրջ 10 տարի անց՝ 1976 թվականին: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրով<sup>7</sup> նախատեսված է այնպիսի իրավունքների պաշտպանությունը ինչպիսիք են՝ կյանքի, ազատության, արդար դատաքննության, անձի ազատ տեղաշարժի, մտքի, խղճի ու դավանանքի ազատության, ընտանիքի, անձի անձեռնմխելիության և այլ իրավունքներ: Իսկ ահա Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագիրը նախատեսում է կրթության, սննդի, բնակարանի, առողջապահության, աշխատանքի հնարավորություն, աշխատանքի արդարացի և բարենպաստ պայմաններից օգտվելու իարվունքները և այլն<sup>8</sup>:

Այս երկու փաստաթղթերը ՄԱԿ-ի համընդհանուր հռչակագրի հետ միասին կազմում են Մարդու իրավունքների բիլլը, որը բեկումնային նշանակություն է ունեցել մարդու իրավունքների պաշտպանության գործընթացում և պատմության զարգացման համար:

ՄԱԿ-ի կողմից հետագայում ընդունված փաստաթղթերը ըստ պաշտպանության ոլորտի և թվականների հետևյալներն են՝

---

<sup>6</sup> [http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR\\_arm.pdf](http://www.un.am/res/Human%20Rights/Armenian%20Documents/UDHR_arm.pdf)

<sup>7</sup> ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հասանելի է հետևյալ հասցեում՝ <http://www2.ohchr.org/english/law/ccpr.htm>

<sup>8</sup> ՄԱԿ-ի Տնտեսական, Սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, հասանելի է հետևյալ հասցեում՝

<http://www2.ohchr.org/english/law/cescr.htm>. : Դաշնագրերը ՀՀ կողմից վավերացվել են 1993 թվականին

- Յեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիա, ընդունվել է 1948 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիա, ընդունվել է 1965թ-ին, ուժի մեջ մտել՝ 1969 թ-ին
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիա, ընդունվել է 1979թվականին, ուժի մեջ մտել՝ 1981-ին
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիա, ուժի մեջ է մտել 1987թ-ին
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ուժի մեջ է մտել 1990թ-ին
- Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա, ուժի մեջ է մտել 2003թ-ին
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին Կոնվենցիա, ուժի մեջ է մտել 2008թ-ին
- Բոլոր անձանց բռնի անհետացումներից պաշտպանության մասին կոնվենցիա, ուժի մեջ է մտել 2010թ-ին

ՄԱԿ-ի վերոնշյալ փաստաթղթերում ամրագրված դրույթների կիրառելիությունն ապահովելու համար ստեղծվում են նաև մոնիթորինգային մարմիններ: Յուրաքանչյուր կոնվենցիայի համար ստեղծվում է առանձին մարմին, որը վերահսկողություն է իրականացնում դրա կատարման նկատմամբ: Իսկ կոնվենցիան վավերացրած պետությունը պարտավորություն է ստանձնում այդ կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցներ ներկայացնել ՄԱԿ-ի համապատասխան մարմնին: Վերջիններս իրավասու են նաև պարբերական այցելություններ կատարել անդամ երկրներ:

ՄԱԿ-ի կողմից ընդունված փաստաթղթերից և հիմնադրված մարմիններից զատ գոյություն ունեն նաև մարդու իրավունքների պաշտպանության ռեգիոնալ կամ տարածաշրջանային մեխանիզմներ՝ Եվրոպական, Ամերիկյան, Աֆրիկյան, Արաբական երկրների և Խաղաղօվկիանոսյան երկրների<sup>9</sup>:

<sup>9</sup> The role of regional human rights mechanisms, study by Directorate-General for external policies, European Parliament, 2010

Եվրոպայում պաշտպանության հիմնական մեխանիզմները Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիան և Եվրոպական Դատարանն են: Դատարանի իրավասության մեջ են մտնում Եվրոպական Կոնվենցիայով և նրան կից արձանագրություններով նախատեսված իրավունքների խախտման դեպքերը: Գանգատ բերելու իրավունք ունեն ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձիք, ով պնդում է, որ դարձել է կոնվենցիայով կամ արձանագրությամբ նախատեսված իրավունքի խախտման զոհ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ոչ միայն ուղղակիորեն պաշտպանում է անհատի իրավունքներն ու ազատությունները, այլ նաև ազգային դատարանների որոշումների, վճիռների ու դատավճիռների վերանայման միջոցով պետություններին պարտավորեցնում է վերանայել և կատարելագործել ազգային օրենսդրության համապատասխան բնագավառները:

Ամերիկյան մեխանիզմի պարագայում գործ ունենք Ինտեր-Ամերիկյան համակարգի հետ, որը կազմված է Մարդու իրավունքների և պարտականությունների մասին Ամերիկյան հռչակագրից, Մարդու իրավունքների ինտեր-ամերիկյան Կոմիսիայից և Դատարանից: Այս համակարգի դեպքում Կոմիսիան կիսադատական դեր ունի և Դատարանին ներկայացված բողոքների համար գտիչ ֆունկցիա է իրականացնում: Ինչը նշանակում է, որ բողոքները ուղղակիորեն Դատարանին չեն հասցեագրվում, այլ նախ քննության են առնվում Կոմիսիայի կողմից, և հետո, ըստ անհրաժեշտության, ներկայացվում Դատարանին: Ընդունված է ասել, որ արդյունավետության առումով ինտեր-ամերիկյան համակարգը ավելի քիչ արդյունավետ է քան մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական մեխանիզմները:

Մարդու իրավունքների պաշտպանության Աֆրիկյան մեխանիզմը կազմված է Մարդու և ազգերի իրավունքների Աֆրիկյան խարտիայից և Կոմիսիայից: Համակարգը սակայն թերություններ ունի արդյունավետ գործելու հետ, ինչը կախված է հիմնականում քաղաքական կամքի բացակայության հետ:

Արաբական երկրների համար գործում է Մարդու իրավունքների Արաբական Խարտիան, որը ընդունվել է 2004 թվականին և մարդու իրավունքների Կոմիտեն: Այս մեխանիզմների արդյունավետությունը գնահատել դեռևս հնարավոր չէ, քանի որ բացակայում է ինստիտուցիոնալ պրակտիկան: Բացի այդ, դեռևս առկա են անհամապատասխանություններ մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր ստանդարտների հետ: Ինչպես Աֆրիկյան, այնպես էլ Արաբական



մեխանիզմի դեպքում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը փոքր է:

Ինչ վերաբերվում է Խաղաղ-օվկիանոսյան երկրներին, ապա այն ամենաքիչ զարգացածն է համարվում, որտեղ մարդու իրավունքների պաշտպանության ռեզիոնալ մեխանիզմներ, որպես այդպիսին, չկան<sup>10</sup>:

1975 թ. Պետությունների և կառավարությունների գլուխների հելսինկյան խորհրդաժողովը հիմնադրեց նոր անվտանգության ու կայունության ապահովման կառույց, որը սկզբում կոչվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցություն, այնուհետև՝ 1995 թ. հունվարից, վերանվանվեց՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ): Ներկայումս այն ունի 57 անդամակից պետություն

ԵԱՀԿ-ն կոչված է կանխարգելելու ու նախագգուշացնելու հնարավոր հակամարտությունները, կարգավորելու ծագած ճգնաժամերն ու հնարավորինս օգնելու հետկոնֆլիկտային վերականգնման գործընթացներին<sup>11</sup>: Անվտանգության ու կայունության ապահովման բարդ խնդիրներին ԵԱՀԿ մոտեցումները բազմակողմանի են և հիմնված են միմիայն փոխըմբռնման ու համագործակցության սկզբունքների վրա: ԵԱՀԿ մասնակից բոլոր պետություններն ունեն հավասար կարգավիճակ և Կազմակերպության ներսում որոշումներն ընդունվում են կոնսենսուսի սկզբունքով: Մասնակից պետությունները պարտավորված չեն որևէ պայմանագրով, ուստի ԵԱՀԿ հիմնադրույթները իրավաբանական պարտադիր ուժ չեն ենթադրում:

Այդ տարածաշրջանային կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններից մեկը մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն է<sup>12</sup>, որի իրականացման համար ԵԱՀԿ-ն կոչ է անում մասնակից պետություններին ազգային իրավունքի բոլոր ոլորտներում մշակել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության նույնատիպ իրավական նորմեր, ընթացակարգեր և մեխանիզմներ: Դրան զուգահեռ՝ ԵԱՀԿ-ն մեծ աշխատանք է կատարում նաև մարդու սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու բնագավառում:

<sup>10</sup> Ibid 9

<sup>11</sup> «Մարդու իրավունքներ», ուսումնական ձեռնարկ, Վ. Այվազյան, Երևան, 2002, էջ 293:

<sup>12</sup> Human Rights Protection Systems; Accessed February 01 2010; Available from <http://www.ohchr.org/EN/Library>.

Տեսաֆիլմ մարդու իրավունքների մասին

<http://ru.humanrights.com/what-are-human-rights.html>

## **Ի՞նչ է զինվորական ծառայությունը, և ովքե՞ր են համարվում զինծառայողներ**

«Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «զինվորական ծառայությունը զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայության տեսակ է»: Նույն հոդվածի համաձայն՝ «Զինծառայող համարվում են զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիները և ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտները»: Միննույն ժամանակ, ՀՀ զինված ուժերում ծառայում են ժամկետային զինծառայողներ և հատուկ քաղաքացիական ծառայողներ: Զինվորական ծառայությունը առանձնանում է պետական ծառայության այլ տեսակներից նրանով, որ զինվորական ծառայողները կոչված են զինված ուժերի կազմում անմիջականորեն իրականացնել ՀՀ անվտանգության շահերի պաշտպանությունը, ինչպես նաև կարևոր դեր են կատարում մարդու իրավունքների պաշտպանության գործում:

ՀՀ զինված ուժերի զինծառայողներ են սպաները, ենթասպաները, ռազմաուսումնական հաստատությունների ուսանողները, սերժանտները, ավագները և զինվորները, որոնք զինվորական ծառայություն են կատարում: Ինչպես և մի շարք իրավական համակարգերում, Հայաստանի Հանրապետությունում նույնպես ընդունված է զինծառայողներին որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելու սկզբունքը: Այս սկզբունքը նպաստում է, որ զինծառայողները զինվորական ծառայության պահանջների շրջանակներում կարողանան օգտվել այլ քաղաքացիների ունեցած ընդհանուր քաղաքացիական և սահմանադրական իրավունքներից: Մասնավորապես, զինծառայողներն օգտվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքներից և ազատություններից՝ հաշվի առնելով զինվորական ծառայության պայմաններից բխող սահմանափակումները: Զինծառայողների վրա դրվում են սահմանադրական, այլ համաքաղաքացիական պարտականություններ, ինչպես նաև ընդհանուր,

ծառայության և հատուկ պարտականություններ՝ սահմանված զինվորական ծառայության պայմաններով<sup>13</sup>:

Բոլորի, այդ թվում զինված ուժերի անձնակազմի, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը սոսկ Բարոյական պարտականություն չէ: Նման պահանջը մարդու իրավունքների միջազգային իրավունքի մասն է կազմում, ինչով պայմանավորված պետությունները և առանձին անձիք պարտականություն են կրում հարգել և պաշտպանել զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքները:

Համազգեստով քաղաքացի եզրույթը հին պատմություն ունի: Սակայն նորովի մեկնաբանվում է Եվրոպայի Խորհրդի և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության կողմից: Միննույն ժամանակ, առանձին երկրների կողմից այն կարող է տարբեր կերպ մեկնաբանվել՝ հաշվի առնելով տվյալ երկրի զինված ուժերի պատմությունը, բնույթն ու տեսակը: Ընդհանուր առմամբ համազգեստով քաղաքացի սկզբունքի էությունը հանգում է նրան, որ զինծառայողները նույն իրավունքներն ու պարտականությունները ունեն, ինչ մնացած քաղաքացիները: Այս սկզբունքը ենթադրում է նաև, որ որպես քաղաքացի նրա իրավունքներն ու պարտականությունները որոշ չափով պահպանվում են, սակայն զինծառայողը սկսում է կրել նաև զինվորական կյանքի պահանջները, օրենքներն ու կանոնները, ինչի ուժով՝ որպես քաղաքացի նրա իրավունքներն ու պարտականությունները որոշ առանձնահատկություններ են կրում: Օրինակ, զինծառայողը չի կարող զինծառայությունը ազատ և իր կամքով թողնել, ինչպես օրինակ կկարողանար քաղաքացիական կյանքում թողնել իր աշխատանքը:

Համազգեստով քաղաքացի սկզբունքի օգտին խոսացող տեսություններից մեկի համաձայն, եթե կառավարության կողմից զինված ուժերի նկատմամբ ադեկվատ հսկողություն է իրականացվում, ապա այն կնվազեցնի զինված ուժերը անիրավաչափ նպատակներով օգտագործելու հավանականությունը: Քանի որ ժողովրդավարության պարագայում իշխանությունը պատասխանատու է ընտրազանգվածին և հաշվետու իր հանրային ծառայությունների համար, և հանրային ծառայություն մատուցող բոլոր խմբերի է ներառյալ զինծառայողների, իրավական կարգավիճակը պետք է նմանատիպ լինի:

Մեկ այլ մոտեցման համաձայն համազգեստով քաղաքացի սկզբունքը զինծառայողի համար երաշխիքներ է ստեղծում զինված ուժերի անձնակազմից պաշտպանավելու համար:

---

<sup>13</sup> «Զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենք

Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիան ինքնին պահանջում է, որ պետությունները ապահովեն իրենց իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքները և ոչ միայն քաղաքացիների իրավունքները: Զինձառայողները նույնպես մտնում են այդ պաշտպանության ներքո: Իսկ Կոնվենցիայով նախատեսված իրավունքներն ու ազատությունները անխտրականորեն պետք է կիրառվեն նաև զինված ուժերի անձնակազմի համար: Իհարկե, նման մոտեցումը կարող է խախտվել և իրավունքների ու ազատությունների ծավալը փոփոխության ենթարկվի՝ հաշվի առնելով զինձառայության առանձնահատկություններն ու նպատակները<sup>14</sup>:

Զինձառայողներին՝ որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելը ակնհայտորեն բխում է զինված ուժերը հասարակության մեջ ինտեգրելու նպատակից՝ ի տարբերություն այն մոտեցման, թե զինված ուժերը մեկուսացված են քաղաքական և հասարակական կյանքից: Զինված ուժերի մարտունակության առաջնային հրամայականն է թիմային համախմբվածության և հրամանատարների ու նրանց ենթակաների միջև վստահության և հավատարմության պահպանումը: Սա առաջացնում է այնպիսի արժեքների ու չափանիշների անհրաժեշտություն, որոնք ավելի խիստ են, քան առհասարակ հասարակության մեջ ընդունվածները: Եթե զինված ուժերը ցանկանում են արդյունավետորեն ծառայել իրենց հասարակությանը, ապա դրանում տեղ չի գտնվի ճնշումների, հակասոցիալական վարքի դրսևորումների, իրավախախտումների, խտրականության, հետապնդումների և վարքի այլ անընդունելի դրսևորումների համար: Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական կազմը կարող է հանդես գալ զորամասերում տեղի ունեցող խախտումների պայքարի առաջին գծում: Նրանց ղեկավարումը կարևորագույն նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանքն ապահովելու համար: Այս առումով հրամանատարները պարտավոր են ակտիվ լինել (նախաձեռնող դեր ունենալ զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար) և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ իրենց ենթակաների անօրինական գործողությունները կանխելու համար: Որպես պետական ապարատի ներկայացուցիչներ՝ զինձառայողները պարտավոր են իրենց պարտականություններն իրականացնելու ընթացքում հարգել մարդու իրավունքները և պահպանել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը: Բայց զինձառայողները թե՛ զորամասերում, թե՛ մարտական պայմաններում իրենց

---

<sup>14</sup> The Soldier as a Citizen in Uniform: A Reappraisal, professor Peter Rowe

առջև դրված խնդիրներն իրականացնելիս միայն այն դեպքում կպահպանեն նշված իրավունքները, եթե իրենց սեփական իրավունքները ապահովված լինեն:

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից 2006թ-ին հաստատվել է անդամ պետությունների կողմից զինծառայողների՝ մարդու իրավունքների ապահովման կարևորությունը. «...զինված ուժերի անձնակազմից մարդասիրական իրավունքի նորմերի ու մարդու իրավունքների պահպանում չի կարելի ակնկալել, եթե մարդու իրավունքները երաշխավորված չեն հենց զինված ուժերի շարքերում: Հետևաբար, էական է, որ զինված ուժերի ներսում Եվրոպայի խորհրդի կողմից սահմանված ուղեցույցները՝ մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ, գուզակցվեն մասնակից պետությունների այնպիսի քաղաքականության հետ, որն ուղղված լինի զինվորականների շրջանում մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Զինծառայողների իրավունքների համատեքստում առանձնակի նշանակություն ունեն մարդու իրավունքների սահմանափակումների բնույթն ու աստիճանը: Զինծառայողների համար մեծ է արտակարգ իրավիճակներում կենտրոնական դեր ստանձնելու հավանականությունը, որի պայմաններում մարդու իրավունքների (այդ թվում նաև իրենց իսկ իրավունքների) գործողությունը կարող է կասեցվել: Միաժամանակ որոշ հանգամանքներ, որոնց պայմաններում գործում են զինված ուժերը, կարող են զինծառայողների իրավունքների ընդունելի սահմանափակման հիմք հանդիսանալ անգամ ավելի հանդարտ պայմաններում: Հիմնական խնդիրն այն է, թե որ իրավունքները կարող են սահմանափակվել, ինչ հանգամանքներում, դատավարական ինչպիսի երաշխիքների առկայությամբ և ինչ չափով:

Միջազգային իրավունքի նորմերով ամրագրվող մարդու իրավունքները կարելի է դասակարգել երեք խմբի.

1. իրավունքներ, որոնցից վերապահումներ անելն արգելվում է (անվերապահելի կամ բացարձակ իրավունքներ),
2. իրավունքներ, որոնցից վերապահումներ կարելի է անել արտակարգ իրավիճակների ժամանակ (մասամբ սահմանափակման կամ վերապահման ենթակա իրավունքներ),
3. իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով՝ հանրային որոշ հստակեցված շահերի համաձայն:

Զինվորական ծառայության առանձնահատկություններից ելնելով՝ միջազգային իրավունքը նախատեսում է զինծառայողների քաղաքական

իրավունքների սահմանափակումների հնարավորություն՝ հատկապես զինվորական կարգապահության, ազգային անվտանգության, պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների պահպանության անհրաժեշտությամբ պայմանավորված: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Էնգելի գործով ամրագրել է. «Արտահայտվելու ազատությունը, ինչպես որ այն երաշխավորված է 10-րդ հոդվածով, զինձառայողների նկատմամբ կիրառելի է ճիշտ այնպես, ինչպես պայմանավորվող պետությունների իրավագործության ներքո գտնվող ցանկացած անձի նկատմամբ: Այդուամենայնիվ, զինված ուժերի պատշաճ գործունեությունը դժվար է պատկերացնել առանց իրավական այնպիսի նորմերի, որոնք մշակվում են զինձառայողների կողմից զինվորական կարգապահությունը խախտելը կանխելու համար»: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ իրավաչափ է նաև զինվորականների կողմից քաղաքական կուսակցությանն անդամակցելը կամ որևէ քաղաքականության գործունեությամբ զբաղվելու արգելքը, քանի որ դրանք հետապնդում են իրավաչափ նպատակներ, մասնավորապես՝ ազգային անվտանգության և հասարակական անվտանգության պահպանումը և անկարգությունների կանխումը<sup>15</sup>: Եվրոպական կոնվենցիան իրավաչափ է համարում նաև զինձառայողների՝ ցույցերի և հավաքների մասնակցելու իրավունքի սահմանափակումները՝ համաչափության չափանիշներին բավարարելու պայմաններում: Միաժամանակ կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ «Սույն հոդվածը չի խոչընդոտում սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ»:

ՀՀ-ում զինձառայողների համար նախատեսված իրավունքների սահմանափակումները նախատեսվում են «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինձառայողն իրավունք չունի.

- 1) կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից,
- 2) լինել Ազգային ժողովի պատգամավոր, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցնել ընտրովի կամ այլ պաշտոններ,

---

<sup>15</sup> Rekvényi v. Hungary, 20 May 1999, Vol. 30, 2000, p. 519. Սույն գործում հարցը վերաբերում էր ոստիկանության աշխատակիցների իրավունքների սահմանափակումների իրավաչափությանը: Սակայն դատարանն ամրագրել է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև զինձառայողների նկատմամբ

- 3) անդամակցել որևէ քաղաքական կուսակցության, կրոնական կամ արհեստակցական միության,
- 4) ոչ ծառայողական նպատակների համար զինված ուժերում և այլ զորքերում օգտագործել նյութական արժեքներ, տեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցներ,
- 5) կազմակերպել գործադուլներ կամ մասնակցել դրանց,
- 6) պաշտոնեական դիրքն օգտագործել ի շահ քաղաքական կուսակցությունների, կրոնական, հասարակական միավորումների և դրանց գործունեության օգտին իրականացվող քարոզչության,
- 7) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ,
- 8) հոնորար ստանալ ծառայողական պարտականությունների կատարումից բխող հրապարակումների կամ էլույթների համար,
- 9) ծառայողական պարտականությունների համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումար կամ ծառայություններ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ժամկետային պարտադիր զինծառայողների համար նախատեսված են այլ սահմանափակումներ ևս: Այսպես՝ նրանք զրկված են տեղական ինքնակառավարման մարմինների և Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցելու իրավունքից<sup>54</sup>:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը սահմանում է զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները մի քանի նորմատիվ իրավական ակտերում: Ջինծառայողներին տրվում են «Ջինապարտության մասին», «Ջինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին», «Ջինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված իրավունքներ, երաշխիքներ և փոխհատուցում: Ելնելով համազգեստով քաղաքացիների սկզբունքից՝ բոլոր զինծառայողները, անկախ կոչումից և պաշտոնից, կրում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված պատասխանատվություն՝ հաշվի առնելով նրանց իրավական վիճակի առանձնահատկությունները: Ջինծառայողները կարող են ենթարկվել կարգապահական, վարչական, քաղաքացիաիրավական, նյութական և քրեական պատասխանատվության: Օրենսդրությամբ նախատեսված է նաև զինծառայողների նկատմամբ հասարակական ներգործության միջոցների կիրառման հնարավորություն զինվորական կարգապահության և հասարակական կարգի խախտման հետ կապված զանցանքների համար: Թույլ տրված իրավախախտման

համար զինճառայողը, որպես կանոն, ենթարկվում է մեկ տեսակի պատասխանատվության, սակայն իրավախախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկվելը չի ազատում քրեական պատասխանատվությունից, եթե արարքում առկա են հանցագործության հատկանիշներ, ինչպես նաև զինճառայողները չեն ազատվում իրավախախտմամբ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունից՝ անկախ պատասխանատվության կամ հասարակական ներգործության որևէ միջոցի ենթարկված լինելու հանգամանքից<sup>16</sup>:

#### Հարցեր քննարկման համար

- Արդարացվա՞ծ են արդյոք զինճառայողների քաղաքական իրավունքների սահմանափակումները:
- Ինչո՞վ է պայմանավորված զիված ուժերում հավասարության իրավունքի կարևորությունը:

## **Թեմա 2: «Կյանքի իրավունք»**

Կյանքի իրավունքը մարդու հիմնարար իրավունք է, քանի որ միայն կենդանի մարդը կարող է մասնակցել հասարակական կյանքին, ունենալ և իրականացնել իրավունքներ, կրել պարտականություններ: Այդ պատճառով կյանքի իրավունքը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մարդու իրավունքների շարքում: Պետության անվերապահ պարտականությունն է պաշտպանել իր իրավասության տարածքում գտնվող մարդկանց կյանքը, բացառությամբ այն դեպքերի, երբ անձի մահը վրա է հասնում պատերազմական գործողությունների հետևանքով, ինչը կարգավորվում է միջազգային մարդասիրական իրավունքի՝ պատերազմներ վարելու կանոնների վերաբերյալ նորմերով:

Մարդու կյանքի իրավունքի պաշտպանության առումով պետությունն ունի նյութական և դատավարական պարտավորություններ: Նյութական պարտավորությունները իրենց հերթին լինում են պոզիտիվ և նեգատիվ:

- Իր պաշտոնատար անձանց կողմից ապօրինի սպանություն կատարելուց զերծ մնալու պարտականությունը (նեգատիվ պարտավորություն):

<sup>16</sup> Ibid 2



- կյանքի պաշտպանությանը միտված քայլեր ձեռնարկելու պարտականությունը, մասնավորապես, որպեսզի կանխվեն կյանքի շրջանցելի կորստի դեպքերը (պոզիտիվ պարտավորություններ, որոնք պահանջում են իշխանություններից՝ ձեռնարկել ողջամիտ քայլեր)։

- կասկածելի մահվան դեպքերի քննության պարտականություն (դատավարական ասպեկտ)։ Եթե, այդուհանդերձ, անձը զրկվել է կյանքից, ապա պետությունը ունի դատավարական պարտականություն իրականացնել հետաքննություն, հայտնաբերել մարդու մահվան մեջ մեղավոր անձանց և օրենքով սահմանված կարգով պատժել մեղավորին։

Պետության կողմից ուժի կիրառման հետևանքով անձի՝ կյանքից զրկվելը, օրինակ, կարող է լինել ոստիկանական գործողությունների հետևանք, ուստի ոստիկանության գործողությունները պետք է մանրամասնորեն պլանավորված լինեն, հնարավորինս բացառեն մահացու ուժի կիրառումը, իսկ կիրառման անհրաժեշտության դեպքում այն հասցնեն նվազագույնի։ Անգամ այն դեպքում, երբ մահացու ուժի կիրառումը այլընտրանք չունի, դրա կիրառումը պետք է լինի համաչափ և անհրաժեշտ այն օրինական նպատակին հասնելու համար, որի համար իրականացվում է գործողությունը։

### **Հանձնարարականի մեկնաբանություններ**

Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 2-րդ հոդվածով ամրագրված է կյանքի իրավունքի պաշտպանությունը։ Մասնավորապես,

*«1. Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով։*

*Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը։*

*2. Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝*

*ա. ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,*

*բ. օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,*

*գ. խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»։*

Այս հոդվածի երաշխիքները գործում են նաև զինված ուժերի անձնակազմի համար: Զինված ուժերի անձնակազմի կյանքի իրավունքի պաշտպանության առանձնահատկությունները կապված են զինծառայության նպատակի և դրանից բխող առանձնահատկությունների հետ:

Չնայած որոշ վտանգավոր իրավիճակների առանձնահատուկ ռիսկերին՝ զինված ուժերի անդամները չպետք է այնպիսի իրավիճակներում հայտնվեն և վերաբերմունքի ենթարկվեն, ինչը նրանց կյանքը կոնի իրական ռիսկի ներքո՝ առանց զինծառայությունից բխող նպատակի: Հետևաբար, զինված ուժերի իրավասու մարմինները պատասխանատվություն են կրում ողջամիտ քայլեր ձեռնարկել, որպեսզի կատարվող գործողությունները և կիրառվող միջոցները զինվորականների կյանքին չվնասեն: Ողջամիտ քայլեր ձեռնարկելու պարտականությունը ենթադրում է նաև կյանքի համար ռիսկային իրավիճակներում բժշկական անհրաժեշտ միջոցների հասանելիության ապահովում:

Կոնվենցիայի երկրորդ հոդվածով սահմանված կյանքի իրավունքը որոշ դեպքերում կարող է պետությունների վրա պոզիտիվ պարտականություն դնել՝ պրակտիկ կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելու և անձանց պաշտպանելու առնչությամբ: Որպես ընդհանուր պարտավորությունների մաս, Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանի կողմից սահմանվել է նաև բավարար օրենսդրական կարգավորումներ ընդունելու անհրաժեշտությունը՝ զինծառայողների կյանքի իրավունքը ռիսկային իրավիճակներում պաշտպանելու համար: Մասնավորապես, Դատարանի նախադեպային իրավունքով հաստատվել է, որ պետության իրավասությունների մեջ է մտնում հատուկ ուշադրություն և հոգատարություն ցուցաբերել հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցող զինծառայողների նկատմամբ<sup>17</sup>:

Յուրաքանչյուր դեպքում, երբ զինծառայողը հայտարարում է, որ զինված ուժերի անձնակազմը թերացել է իր կյանքը պաշտպանելու հարցում, ապա պետք է նախ հստակեցվի, արդյոք իրավասու անձիք իմացել են կամ տվյալ պարագայում պետք է իմանային զինծառայողի կյանքին սպառնացող իրական վտանգի մասին: Եթե այո, ապա ինչ քայլեր են նրանց կողմից ձեռնարկվել ռիսկը չեզոքացնելու համար:

<sup>17</sup> Ataman v. Turkey, judgment of 27 April 2006, para. 54; see also Kilinc and Others v. Turkey, judgment of 7 June 2005, para. 40.

Զինճառայողների կյանքի իրավունքի պաշտպանությունը պահանջում է նաև մահվան դեպքում արդյունավետ քննության իրականացում՝ մահվան հանգամանքներն ու պատճառները վեր հանելու համար: Այս առումով սահմանված են 4 սկզբունքներ, որոնց պահպանումը միայն կարող է հանգեցնել զինված ուժերում մահվան դեպքերի արդյունավետ քննության.

- Քննությունը պետք է լինի անկախ՝ հատկապես այն դեպքերում, երբ կասկածներ կան, թե ինչ հանգամանքներում է անձը մահացել: Սալգինի գործում, որտեղ զինճառայողը մահացել էր զինվորական ծառայության ընթացքում, Դատարանի կողմից սահմանվել է, որ կյանքի իրավունքի պաշտպանության ընթացակարգային ասպեկտը պետք է հետաքննության անկախության տարր պարունակի, որը թույլ կտա բացահայտել մահվան հանգամանքներն ու պատասխանատվություն սահմանել: Դրա համար, անձիք ունենալու պատասխանատվություն են կրում հետաքննության իրականացման համար պետք է անկախ լինեն մահվանն առնչություն ունեցող անձանցից<sup>18</sup>
- Պետության պարտավորությունների մեջ է մտնում նաև մահվան դեպքերով ապացույցների հավաքման համար օրենսդրական և վարչական հիմքերի նախատեսումը, ինչը հիմք կհանդիսանա պատասխանատվության ենթարկելու համար
- Արդյունավետ քննության հաջորդ պահանջը վերաբերում է գործի քննության արագությանն ու ողջամիտ ժամկետներում քննությանը: Գործի քննության արագությունը նշանակում է, որ այն պետք է սկսվի մահվանից անմիջապես հետո՝ հնարավորինս շուտ, իսկ ողջամիտ ժամկետները նշանակում է, որ քննությունը չպետք է արհեստականորեն և չհիմնավորված կերպով երկարացվի:
- Վերջին չափանիշը պահանջում է հասարակական վերահսկողության առկայություն նման գործերի քննությանը, ինչը քննություն իրականացնող մարմինների մոտ հաշվետվողականություն կապահովի: Հանրային վերահսկողության աստիճանը յուրաքանչյուր գործով տարբեր կարող է լինել: Սակայն նվազագույն պահանջը այն է, որ առնվազն տուժողը պետք է ներգրավվի քննությանը՝ իր շահերի պաշտպանության համար:

Քննությունը պետք է նաև ամբողջական լինի, ինչը նշանակում է, որ որոշում կայացնելիս չպետք է օգտագործել չհիմնավորված տվյալներն ու անհրաժեշտ է

<sup>18</sup> McKerr v. UK, judgment of 4 May 2001, para. 112.

գործի բոլոր հանգամանքները պարզել, իսկ գործը կարճելիս ունենալ բավարար հիմքեր<sup>19</sup>:

### **Բժշկական օգնության տրամադրում**

Կյանքի իրավունքի պաշտպանությունը պետություններից պահանջում է համապատասխան մակարդակի բժշկական օգնության տրամադրում իր ընդդատության տակ գտնվող անհատներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Իլիանն ընդդեմ Թուրքիայի<sup>20</sup> գործով բանակայինները 6 ժամով ուշացրել էին մի անձի հիվանդանոց տեղափոխումը, ում նրանք ծանր մարմնական վնասվածքներ էին պատճառել, ինչն անդրադարձել էր նրա գլխուղեղի վրա: Հաշվի առնելով պատճառված վնասվածքների ծանրությունը, այդ թվում՝ նրան բուժօգնություն տրամադրելու պահի էական հետաձգումը՝ դատարանն արձանագրեց խոշտանգումներից զերծ մնալու իրավունքի խախտում: Այնուամենայնիվ, եթե դեպքն ի վերջո ավարտվում է մահվան ելքով, ապա կիրառելի է դառնում կյանքի իրավունքի խախտումը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից քննված Անգուելովն ընդդեմ Բուլղարիայի<sup>21</sup> գործով դատարանն ուսումնասիրեց կալանքի տակ պահվող մի կասկածյալի բուժօգնություն տրամադրելու ուշացումները: Երբ նրանք հասկացել էին, որ տուժողի վիճակը վատթարանում է, շտապ բուժօգնության մեքենա կանչելու փոխարեն կապվել էին տղային ձեռքակալած գործընկերների հետ: Պարեկային ծառայության մեջ գտնվող այդ սպաները վերադառնում են ոստիկանության բաժին, որպեսզի ճշտեն վիճակը: Այնուհետև սպաներից մեկը շտապ բուժօգնության մեքենան հեռախոսով կանչելու փոխարեն մեքենայով գնում է հիվանդանոց, ինչն առաջացնում է մոտ երկու ժամվա ձգձգում և ավարտվում է մահվան ելքով: Դատարանը այդ գործով եզրակացրեց, որ խախտվել է կյանքի իրավունքը՝ պայմանավորված բուժօգնություն տրամադրելու ձգձգումների հետ:

### **Մահապատիժ**

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մարդու իրավունքների վերաբերյալ հիմնարար միջազգային փաստաթղթերի ընդունողները չեն քննարկել մահապատիժը վերացնելու հարցը, իսկ ՄԻԵԿ-ում կյանքի իրավունքը

<sup>19</sup> Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի 2010/4 հանձնարարականի մեկնաբանություններ

<sup>20</sup> Իլիանն ընդդեմ Թուրքիայի, ՄԻԵԿ վճիռ, no 22494/93

<sup>21</sup> Անգուելովն ընդդեմ Բուլղարիայի, ՄԻԵԿ վճիռ, no. 38361/97

սահմանվել է այնպիսի վերապահումներով, որոնք հնարավոր են դարձրել մահապատժի կիրառումը: Մակայն դրանից ընդամենը մի քանի տասնամյակ անց այդ մոտեցումները վերանայվեցին: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային կից թիվ 6 և 13 արձանագրությունների ընդունմամբ վերացվեց մահապատիժը Եվրոպայի խորհրդի շրջանակներում նախ՝ խաղաղ, հետո՝ պատերազմական դրությունում: Խոշտանգումների արգելքը բացարձակ է, իսկ մահապատժի միջոցով մարդուն կյանքից զրկելը ոչ այլ ինչ է, քան խոշտանգում կամ անմարդկային վերաբերմունք: Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները ավելի են զարգացրել մահապատժի արգելքի մեկնաբանությունը և դրանում ներառել են նաև այն, որ արգելվում է անձին վտարել պետությունից իր քաղաքացիության պետություն, եթե այնտեղ նրա կատարած հանցանքի համար մահապատիժ կարող է նշանակվել: Հայաստանի Հանրապետությունը այն պետություններից է, որտեղ ներկայումս մահապատիժը վերացված է, և ոչ ոք չի կարող ենթարկվել նման պատժի ոչ խաղաղ, ոչ էլ պատերազմական ժամանակներում՝ անկախ իրավիճակից ու հանգամանքներից<sup>22</sup>:

### **Իրավական հիմքեր**

Մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և իրականացնելու, ինչպես նաև կյանքի իրավունքի վերաբերյալ դրույթները ներպետական օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված են հետևյալ կերպ.

**ՀՀ Սահմանադրության 47-**րդ հոդվածով յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը:

**Սահմանադրության 15-**րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

**Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-**րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կյանքի, ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք ունի:

**Քաղաքական և քաղաքացիական իրավունքների միջազգային դաշնագրի 6-**րդ հոդվածը, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին **Եվրոպական Կոնվենցիայի 2-**րդ հոդվածը նույնպես նվիրված են կյանքի իրավունքի պաշտպանությանը:

---

<sup>22</sup> «Ձինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ձեռնարկ, ԵԱՀԿ Երևանյան Գրասենյակ

**Կիլինսը և այլոք ընդդեմ Թուրքիայի<sup>23</sup>**

Սույն գործի շրջանակներում քննարկվել են տուժողի կյանքի իրավունքը պաշտպանելու առնչությամբ պետության պարտավորությունները: Մինչև զինվորական ծառայության հաշվառվելը Պրն Կիլինսը տառապել է աստիպիկ դեպրեսիայով և հիվանդության բացահայտման օրվանից գտնվել է բժշկական հսկողության ներքո: 1994 թվականին զինվորական բյուրոյի կողմից անցած բուժզննությունից հետո որոշում է կայացվում զինծառայության անցնելու մասին: Ծառայության ընթացքում Պրն Կիլինսը կարճաժամկետ հոգեբուժական խնամք է ստացել, ինչից հետո, կայազորի հրամանատարի պահանջով, հատուկ զննության է ենթարկվել, որի ժամանակ դիտարկվել է վերջինիս հոգեկան խանգարումն ու նյարդային ճգնաժամը: 1995 թվականի փետրվարի 22-ին Պրն Կիլինսը տեղափոխվում է Բսպարտայի զինվորական հիվանդանոց, որտեղ էլ նրա մոտ ախտորոշվում է նյարդային խանգարում: Մինչ կայազոր վերադառնալու հրաման արձակելը հրամանատարությունը որոշում է կայացնում Պրն Կիլինսին դեղամիջոցներով բուժում և եռօրյա հանգիստ տրամադրելու մասին: Ավելի ուշ՝ մայիսի 15-ին, Պրն Կիլինսը ընդգրկվում է կայազորի բանտի պահակախմբի աշխատանքների մեջ: Իրեն վերապահված պարտականությունների իրականացման համար վերջինիս տրամադրում են Կալաշնիկով հրացան/հրաձիգ: Նույն օրը Պրն Կիլինսը տրամադրված հրաձիգով ինքնասպանություն է գործում: Դեպքի առիթով զինվորական դատարանը հրամանատարին պատասխանատվության է ենթարկում անփութությամբ հանցանք գործելու համար:

Դիմողները՝ մահացածի ընտանիքի անդամները, պնդում են, որ զինվորական ծառայության ընթացքում Պրն Կիլինսի ինքնասպանությունը հանգեցրել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով պաշտպանվող կյանքի խախտմանը:

Սույն գործով Դատարանը հաստատել է, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածը դրական պարտականություն է նախատեսում պետությունների համար՝ ձեռնարկելու կանխարգելիչ բոլոր անհրաժեշտ միջոցները անձանց իրենք իրենցից կամ երրորդ անձանցից պաշտպանելու համար: Դատարանի կարծիքով հրամանատարության անփութությունը ավելին է եղել, քան սովորական անզգուշությունը կամ առողջապահության մասնագետների վատ համակարգման հետևանքները: Ներկայացված անփութությունը հանգեցրել է Պրն Կիլինսի մահվանը, ինչը հաստատում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման փաստը:

<sup>23</sup> Kılınc and Özsoy v. Turkey, no. 40145/98 (Sect. 2) (fr) – (7.6.05).

Դատարանը գտել է, որ զինված ուժերի համապատասխան մարմինները պետք է որ իմանային Կիլինչի հնարավոր ինքնասպանության մասին: Այն հարցին, արդյոք նույն մարմինները ձեռնարկել են բոլոր միջոցները ինքնասպանություն կանխելու համար, Դատարանը պատասխանել է, որ զինձառայության վերաբերյալ Թուրքիայի ներպետական օրենսդրությունը հստակ դրույթներ չի պարունակում այն անձանց նկատմամբ հսկողություն իրականացնելու վերաբերյալ, ում զինվորական պիտանեիությունը կասկածի տակ է դրվում: Մրանով պայմանավորված, հաստատված է համարվել, որ Կիլինչի նկատմամբ բժիշկների կողմից զինձառայության անցնելու որոշումից առաջ և հետո իրականացման ենթակա համապատասխան անհրաժեշտ ստուգումների և մոնիթորինգի առումով գործող օրենսդրությունը կարգավորման մասով թերի և անբավարար է եղել: Կիլինչի նկատմամբ դրված պարտավորություններում հստակություն չի եղել, ինչը, սակայն, տվյալ իրավիճակում որոշիչ նշանակություն է ունեցել, քանզի պատասխանատու մարմինները չեն ձեռնարկել բոլոր կանխարգելիչ միջոցառումներ Կիլինչին՝ իր իսկ անձին սպառնացող վտանգից պաշտպանելու համար:

Դատարանը գտել է, որ զինվորական տրիբունալի /որը որոշել է, որ բանակում Կիլինչի առողջական վիճակը այդքան էլ մտահոգիչ չէ, խնդիրներ կան, բայց լուրջ չեն/ որոշումն ու բժիշկների անփութությունը հանգեցրել է ավելի վատ հետևանքի, քան սովորաբար առողջական համակարգի մասնագետների վատ համակարգման ու անզգուշության հետևանքներն են:

#### **Բեկերն ընդդեմ Թուրքիայի<sup>24</sup>**

Մուստաֆա Բեքերը, հայտնաբերվելով գորամասում ձախ քունքային շրջանում հրազենային վնասվածքով, հիվանդանոցի ճանապարհին մահացել է: Նույն օրը կատարված դատաբժշկական փորձաքննությունը հաստատել է, որ մահը վրա է հասել դիմահար կրակոցի արդյունքում ուղեղի կենսական ֆունկցիաների սուր խանգարման հետևանքով: Դիակից որոշ հեռավորության վրա հայտնաբերված հրազենի փորձաքննությամբ պարզվել է, որ կատարվել է երկու կրակոց, և երրորդ կրակոցի փորձն է կատարվել: Պարզվել է, որ Մուստաֆան հրազենը գողացել է ծառայակցի պահարանից՝ փայտով կոտրելով դրա կողպեքը: Կրակոցի ժամանակ սենյակում գտնվող չորս ծառայակիցները հարցաքննվել են, նրանք բոլորը հայտնել են, որ չեն տեսել կրակոցի պահը: Ներկաներից մեկը, ով գտնվել է Մուստաֆայից հինգ մետր հեռավորության վրա, հայտնել է, որ չի տեսել կրակոցը, քանի որ շոկի մեջ փակել է դեմքը ձեռքերով: Քրեական գործով քննությունը դադարեցվել է այն հիմքով, որ Մուստաֆան ինքնասպան է եղել՝ կրակելով աջ քունքին, քանի որ իր մայրը դեմ է եղել իր ամուսնությանը: Վարույթն իրականացնող մարմինը հրաժարվել է հրապարակել քննության հետ կապված որևէ

<sup>24</sup> Beker v. Turkey, no. 27866/03, 24 March 2009.

փաստաթուղթ: Դիմումատուի՝ գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ դիմումը անհետևանք է մնացել:

Դատարանը սույն գործով փաստել է, որ Մուստաֆա Բեքերը մահացել է գորամասում, և բոլոր ականատեսները եղել են զինծառայողներ: Գործով քննությունն իրականացվել է զինվորական իշխանությունների կողմից, և նրա ընտանիքի անդամները չեն մասնակցել քննությանը: Հետևաբար, միայն զինվորական իշխանություններն են օժտված եղել մահվան պատճառները վեր հանելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու լիազորությամբ: Պետության անմիջական վերահսկողության տակ գտնվող տարածքում մահվան կապակցությամբ պետությունը պետք է ողջամիտ բացատրություն տա պատահարի վերաբերյալ:

Դատարանը գտել է, որ առկա են լուրջ բացթողումներ Մուստաֆայի մահվան քննության առնչությամբ, որի պայմաններում վստահելի բացատրություն տրված չէ: Դա բացատրվել է հետևյալով, նախ, համաձայն քննության՝ Մուստաֆան մահացել է կատարված երկրորդ կրակոցից, ինչպե՞ս է նախապատրաստվել երրորդ կրակոցը: Երկրորդ, Մուստաֆան, լինելով աջիկ, չէր կարող կրակել ձախ կողմից, և ինչպե՞ս են իշխանությունները եզրակացրել, որ կրակոցը եղել է աջ կողմից, եթե դատաբժշկական փորձաքննությունը հաստատել է, որ հրազենի մուտքի անցքը եղել է ձախ քունքային շրջանում: Երրորդ, տեղի չի ունեցել հրազենի և դրա կրակող մասի փորձաքննություն՝ ստուգելու մատնահետքերի առկայությունը: Չորրորդ, դատարանը չի ընդունում, որ չորս պատրաստված զինծառայողները, գտնվելով սենյակում, որտեղ երկու կրակոց է արձակվել, չտեսնեն այն կամ շոկից փակեն իրենց դեմքերը: Ավելին, դատարանը նկատել է, որ գործը քննող մարմինների կողմից որևէ փորձ չի կատարվել՝ պարզելու ճշմարտությունը: Հետևաբար, իշխանությունների կողմից կատարված քննությունն անարդյունավետ էր և թողնում էր բազում անպատասխան հարցեր, և դատարանը անընդունելի է համարել Մուստաֆայի կողմից կատարված ինքնասպանությունը: Իրապես, նման անփութությունը, գործի քննությունը վերսկսելու անպատրաստակամությունը կարող են վկայել ավելի ծանր հանցագործության պարտական մասին:

Դատարանը գտել է, որ Կառավարությունը ողջամիտ բացատրություն չի տվել Մուստաֆա Բեքերի մահվան կապակցությամբ, և հետևաբար, պետությունը պատասխանատու է միջադեպի համար՝ Կոնվենցիայի 2-րդ հոդվածով:

**ՀՀ զինված ուժերում Գևորգ Կոծինյանի մահվան դեքի և գործի ներկայացում**



2011 թ-ի փետրվարի 6-ին Լեոնային Ղարաբաղի Հաղթության շրջանի տարածքում տեղակայված զինվորական մասում արտակարգ միջադեպի հետևանքով մահացել էր ժամկետային զինծառայող Գ. Կոծինյանը: Վերջինիս դին հարազատներին հանձնվել էր փետրվարի 8-ի երեկոյան: Սկզբում երիտասարդի մահվան մասին հայտնել էին զինկոմիսարիատից և որպես պատճառ ներկայացրել՝ իբր նա ինսուլտ կամ ինֆարկտ էր ստացել: Գ. Կոծինյանի մորեղբայրը, ով ներկա էր եղել դիակերպմանը, հայտնել է, որ դիակերպման ժամանակ Կոծինյանի վրա հայտնաբերվել էին տարբեր բնույթի վնասվածքներ: Հարազատներին ներկայացված մահվան փաստը հավաստող բժշկական վկայականում որպես մահվան պատճառ նշված էր սրտի ռեֆլեկտոր կանգ, սակայն արձանագրված էին նաև հետևյալ վնասվածքները՝ կրծքավանդակի փափուկ հյուսվածքների, ձախ թոքի, սրտի արյունազեղումներ, աջ անրակի հողախախտ, աջից գոտկային շրջանի փափուկ հյուսվածքների, աջ երիկամի և մակերիկամի արյունազեղումներ: Ըստ մորեղբոր՝ դիակերպման ժամանակ բժիշկը պատասխանել է, իբր իր բոլոր հարցերին վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ, և եզրակացությունը միանշանակ էր, որ Կոծինյանը ենթարկվել է դաժան ծեծի:

Հետագայում տարածված տեղեկատվության համաձայն չորս զինծառայողներ, լինելով ալկոհոլի ազդեցության տակ, Կոծինյանին ծխելու և իրենց հետ բարբառով խոսելու համար ենթարկել էին ծեծի:

#### Նախաքննություն

Հարուցված քրեական գործի շրջանակներում շարքայիներ Տարոն Սուվարյանի և Վահե Աղաջանյանի նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից, ինչպես նաև 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ և 14-րդ կետերով՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից խուլիգանական դրդումներով՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահը:

Կրտսեր սերժանտ Մարգար Դավթյանի նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նաև 38-359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ նշված հանցագործությանը օժանդակելը, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ, 14-րդ կետերով և 375 հոդվածի 1-ին մասով՝ իշխանության չարաշահումը և իշխանության անգործությունը:

Ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանին մեղադրանք էր առաջադրվել 375 հոդվածի 1-ին մասով:

Ինչպես երևում է վերևում բերված հոդվածների բովանդակությունից, այս դեպքը որակվել է որպես «Կանոնագրքային կանոնների խախտման հետևանքով մահվան դեպք»:

Սույն գործով նախաքննության իրականացման ընթացքից Գ. Կոծինյանի ընտանիքը անտեղյակ և անիրազեկ է մնացել: Նախաքննություն իրականացնող մարմինը իրավահաջորդին չի տրամադրել այն բոլոր որոշումների պատճենները, որոնք կայացվել են, այդ թվում՝ քրեական գործի հարուցման, մեղադրյալներ ներգարվելու մասին որոշումների, նաև քննչական մարմնի եզրակացությունները, ինչը պարտավոր էր անել: Ինչի արդյունքում, տուժողի իրավահաջորդները փաստացիորեն նախաքննության իրականացման ընթացքում զրկված են եղել արդյունավետ պաշտպանության իրենց իրավունքի իրականացման հնարավորությունից:

Կոծինյանի ընտանիքի անդամները, համաձայն չլինելով նախաքննության ընթացքում մեղադրանք առաջադրված հոդվածների հետ, համարել են, որ մարդասպանների համար մեղմ հոդվածներ են դրվել, իսկ նախաքննությունն էլ ճիշտ ուղու վրա չէ, քանի որ մեղադրյալներին մեղադրանք չի առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, այն է՝ սպանության հատկանիշներով:

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, Ստեփանակերտի նստավայրում կայացնելով ժամկետային զինծառայող Գ. Կոծինյանի մահվան մեջ մեղադրվող զինծառայողների դատաճիռը, կրտսեր սերժանտ Մարգար Դավթյանին մեղավոր էր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-359 հոդվածի 3-րդ մասով, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ, 14-րդ կետերով և 375 հոդվածի առաջիկան մասով՝ իշխանության չարաշահումը և իշխանության անգործությունը՝ նրան ազատազրկման դատապարտելով 11 տարի 6 ամիս ժամանակով: Շարքայիններ Տարոն Սավարյանին և Վահե Աղաջանյանին մեղավոր էր ճանաչել քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ մասով, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ և 14-րդ կետերով՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից խուլիգանական դրդումներով՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահը՝ դատապարտելով ազատազրկման 11 տարի ժամկետով: Ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանին մեղավոր է ճանաչել քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 3 տարի ժամկետով և կիրառելով համաներում՝ ազատ արձակել դատարանի դահլիճից:

Գ. Կոծինյանի փաստաբանները ներկայացրել են վերաքննիչ բողոք: Վերաքննիչ բողոքով պահանջել են դատարանից ճանաչել Գ. Կոծինյանի կյանքի իրավունքի խախտման փաստը, քանի որ գտնում էին, որ կատարված սպանության համար պատասխանատու է նաև պետությունը: Փաստաբանները պնդել են, որ եթե պետության ներքո գործող կազմակերպության՝ ի դեմս պաշտպանության նախարարության, ենթակայության տակ գտնվող մարդ է մահացել, անկախ նրանից, թե հանցագործներն ովքեր են, պետությունն ինքը

պատասխանատու է: Փաստաբանները նպատակ են հետապնդել պահանջել նյութական փոխհատուցում՝ 2 մլն դրամի չափով և բարոյական վնասի փոխհատուցում՝ 5 մլն դրամի չափով: Փաստաբանները նաև նշել են, որ քաջատեղյակ լինելով, որ ՀՀ օրենսդրությունը բարոյական վնասի փոխհատուցում չի սահմանում, այդ հարցը բարձրացրել են որպես ռազմավարական նպատակ՝ նախադեպ ստեղծելու համար: Վերաքննիչ բողոքը սակայն մերժվել է: Գործով ներկայացվել է նաև վճռաբեկ բողոք, ինչը վերադարձվել է<sup>25</sup>:

## Դերային խաղ

Խաղային ուսուցումը իրականացվում է դատախազի միջոցով: Լսարանը բաժանվում է գույգ թվով խմբերի՝ առավելագույնը հինգ մասնակից կազմով: Յուրաքանչյուր խումբ հանդես է գալիս կա՛մ դիմումատուի, կա՛մ կառավարության անունից: Կողմերը գործը պետք է ներկայացնեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Դատարանի դերում հանդես է գալիս դասախոսը: Խմբերին տրամադրվում է մեկ ժամ ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 20 րոպե ժամանակ՝ իր դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դիմատու կողմը պետք է ներկայացնի երիտասարդի շահերը՝ պնդելով, որ խախտվել է նրա կյանքի իրավունքը: Կառավարությունը պետք է հերքի խախտման փաստը: Բանավոր ելույթները ներկայացնելուց հետո կողմերը կարող են հարցեր տալ միմյանց: Հարց ու պատասխանին հատկացվող ժամանակը չպետք է գերազանցի րոպեն: Դասախոսը հետևում է, որ հարցերը լինեն առարկայական, և իրավունք ունի օգնել կողմերին՝ ճիշտ ձևակերպել հարցերը : Դասախոսին իրավունք է վերապահվում նաև ըստ անհրաժեշտության հանել հարցերը: Երկու կողմերի տեսակետների ներկայացումը և հարցերի քննարկումը ավարտելուց հետո դասախոսը ներկայացնում է դատարանի վճիռը: Տվյալ դեպքում դասախոսը հայտնում է, որ սա իրական գործ է, որ լսվել և լուծվել է ՄԻԵԿ-ի կողմից (Brady v. UK, n.55151/00, Bubbins v.UK, n. 50196/99):

Առաջարկվող փաստեր

Տարբերակ 1

Փողոցներում հասարակական կարգը հսկող ոստիկանները ահազանգ են ստանում, որ հարևան շենքի բնակարաններից մեկում գողություն է կատարվում: Նրանք շտապում են դեպքի վայր և ականատես են լինում, թե ինչպես երկու երիտասարդ բնակարանից դուրս են հանում տարբեր կենցաղային իրեր: Նկատելով ոստիկաններին՝ նրանք փորձում են փախչել: Երիտասարդներից մեկը, ում ձեռքին մետաղյա ձող կար, շրջվում է դեմքով դեպի

<sup>25</sup> «Կյանքի իրավունքի ապահովումը ՀՀ-ում մահապատժի վերացումից հետո», հետազոտություն Հելսինկյան Քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2012թ

նստիկանները: Տեսնելով երիտասարդի ձեռքի անձանոթ առարկան՝ ուստիկաններից մեկն իր ատրճանակից կրակ է բացում և սպանում երիտասարդին:

## Տարբերակ 2

Փողոցներում հասարակական կարգը հսկող ոստիկանները ահագանգ են ստանում, որ հարևան շենքի բնակարաններից մեկում գողություն է կատարվում: Նրանք շտապում են դեպքի վայր և ականատես են լինում, թե ինչպես երկու երիտասարդ բնակարանից դուրս են հանում տարբեր կենցաղային իրեր: Նկատելով ոստիկաններին՝ նրանք փորձում են փախչել: Երիտասարդներից մեկը, ում ձեռքին խաղալիք զենք կար, շրջվում է դեմքով դեպի ոստիկանները: Տեսնելով երիտասարդի ձեռքի զենքը՝ ոստիկաններից մեկն իր ատրճանակից կրակ է բացում և սպանում երիտասարդին<sup>26</sup>:

---

<sup>26</sup> Խաղը վերցված է «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ձեռնարկից

**Թեմա 3: ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ,  
ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ  
ԱՐԳԵԼՔԸ**

**Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի ընդհանուր  
հասկացությունը, տարբերը<sup>27</sup>**

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ Կոնվենցիայի առաջին հոդվածի համաձայն՝ «Խոշտանգում է համարվում ցանկացած գործողություն, որով անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ հոգեկան ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ որի կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից, կամ նրանց դրդմամբ, կամ համաձայնությամբ»<sup>28</sup>:

Խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը բացարձակ բնույթ է կրում և ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկն է հանդիսանում: Ի տարբերություն մարդու և քաղաքացու որոշ այլ իրավունքների՝ այս արգելքը չի ենթադրում որևէ բացառություն: Այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ: Դրա շրջանցումը չի կարող արդարացվել և հիմնավորվել պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության կամ հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Խոշտանգումը և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն արգելվում է՝ անկախ գոհի վարքագծից:

Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի միջև առկա են որոշակի տարբերություններ, որոնք կապված են ինչպես արարքի ու վերաբերմունքի խստության ու դաժանության հետ: Խոշտանգումը միայն այն ան-

<sup>27</sup> Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ձեռնարկ, Մոդուլ 3

<sup>28</sup> Խոշտանգումների դեմ Միավորված ազգերի կազմակերպության Կոնվենցիա, Ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1984թ-ին

մարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն է, որը կիրառվում է դիտավորությամբ և պատճառում է լուրջ և դաժան տառապանքներ: Խոշտանգմանը, բացի դրան բնորոշ դիտավորության և դաժանության հատկանիշից, հատուկ է նաև նպատակայնության տարրը: Ինչպես արդեն նշվեց, խոշտանգում է համարվում այն գործողությունը, որով դիտավորությամբ անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից տեղեկություններ կորզելու, պատժելու կամ վախեցնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է առանձնացնել խոշտանգմանը վերագրվող հետևյալ հատկանիշները, որոնցով այն տարբերակվում է անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից.

- Խոշտանգումը գոհին պատճառում է առավել ուժեղ ցավ և տառապանք:
- Խոշտանգումը դիտավորությամբ կատարվող գործողություն է:
- Խոշտանգումը հետապնդում է անձից որոշակի տեղեկություն կամ խոստովանություն կորզելու նպատակ:

Միաժամանակ հարկ է նշել, որ համանման գործողությունները մի դեպքում կարող են որակվել որպես «խոշտանգում», մյուս դեպքում՝ որպես «անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք»: Սա նշանակում է, որ դրանց միջև սահմանը հստակ չէ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հանգամանքները:

Եթե խոշտանգումն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից տարբերակելու որոշակի չափանիշներն առկա են միջազգային իրավունքի նորմերում և Եվրոպական դատարանի վճիռներում<sup>29</sup>, ապա անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի տարբերակման խնդիրն ավելի բարդ է: Շատ դեպքերում անմարդկային վերաբերմունքը նաև նվաստացնող վերաբերմունք է<sup>30</sup>: Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործով կիրառված հարցաքննության մեթոդները Եվրոպական դատարանը համարել է ոչ միայն անմարդկային, այլև նվաստացնող, քանի որ դրանց կիրառումը գոհերի մեջ առաջացնում էր վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող էր ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը<sup>31</sup>:

Չնայած անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի միջև հստակ տարբերության բացակայությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովը և դատարանը փորձել են տալ դրանց սահմանումները և առանձնացնել դրանց տարբերակիչ հատկանիշները: Հանձնաժողովի սահմանման համաձայն՝ «Անմարդկային

<sup>29</sup> Aksoy v. Turkey, Judgment of 18 December 1996.

<sup>30</sup> Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի՝ Հունական գործով 1969 թ. նոյեմբերի 5-ի զեկույց:

<sup>31</sup> Ireland v. the United Kingdom, Judgment of 18 January 1978.

վերաբերմունք» հասկացությունը ներառում է այնպիսի վերաբերմունք, որով դիտավորությամբ պատճառվում է ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Վերաբերմունքը կամ պատիժը կարող է նվաստացնող համարվել, եթե այլոց առջև ստորացնում է անձին կամ նրան ստիպում է գործել իր կամքին կամ գիտակցությանը հակառակ»:

Ըստ դատարանի սահմանման՝ «նվաստացնող կարող է համարվել այն վերաբերմունքը, որը գոհերի մեջ առաջացնում է վախի, բարկության և ստորադասության զգացում, ինչը կարող է ստորացնել նրանց և կոտրել նրանց ֆիզիկական կամ բարոյական դիմադրողականությունը»<sup>32</sup>:

«Անմարդկային» և «նվաստացնող» հասկացությունների բովանդակությունը բացահայտված է Եվրոպական դատարանի մի շարք վճիռներում, որոնցում այդ հասկացություններն իրենց հետագա զարգացումն են ապրել<sup>33</sup>:

Խոշտանգումների և արգելված վերաբերմունքի այլ ձևերի տարբերակումը հիմնականում կախված է պատճառված տառապանքի ծանրության տարբեր աստիճաններից:

Խոշտանգման դեպքում անհրաժեշտ է ապացուցել կոնկրետ նպատակի առկայությունը, իսկ վերաբերմունքի այլ ձևերի դեպքում նման պահանջ չկա: Անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կարող է առաջանալ գործողություններ չձեռնարկելու, ոչ թե դիտավորյալ կատարված գործողությունների հետևանքով<sup>34</sup>:

Գործողությունը որպես «խոշտանգում կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք» դիտելու համար բավարար է, որ այդ վերաբերմունքը ունենա խստության նվազագույն աստիճան: Վերաբերմունքի խստության նվազագույն աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում տարբեր է, քանի որ կախված է բազմաթիվ հանգամանքներից, ներառյալ՝ նման վերաբերմունքի կիրառման տևողությունից: Այսպես՝ Ակսոյն ընդդեմ Թուրքիայի<sup>35</sup> գործով տուժողը ենթարկվել է այսպես կոչված «Պաղեստինյան կախադանի»՝ նրան մերկացրել են, ձեռքերը միասին կապել հետևում և կապված ձեռքերից կախել, որի հետևանքով անձը պարալիզվել է: Սա դատարանը դիտել է որպես խոշտանգման արգելքի խախտում: Դեպքը տեղի է ունեցել ազատությունից զրկելու վայրում:

<sup>32</sup> Տե՛ս, ի թիվս այլոց, Քենանն ընդդեմ Միացյալ Թագավորության և Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության գործերով վճիռները:

<sup>33</sup> Kurt v. Turkey, Judgment of 25 May 1998, Cuprus v. Turkey, Judgment of 10 May 2001.

<sup>34</sup> Ibid 43

<sup>35</sup> No. 21987/93, 18.12.1996, 1997 23 EHRR.

Երբեմն դժվար է որոշել «Խոշտանգում» եւ «այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք կամ պատիժ» հասկացությունների միջեւ սահմանները, եւ այդ գնահատականը կախված է գործի հանգամանքներից եւ կոնկրետ տուժողի տվյալներից<sup>36</sup>: Երկու հասկացությունները ներառում են հոգեկան եւ մարմնական դաժան վերաբերմունք, որ դիտավորությամբ պատճառվում է պետական պաշտոնյայի կողմից կամ պետական պաշտոնյայի համաձայնությամբ կամ գիտությամբ:

Դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը նույնպէս իրավաբանական սահմանումներ են: Դրանք վերաբերվում են դաժան վերաբերմունքին, որը պատճառվում է առանց հատուկ նպատակի, սակայն մտածված կերպով, անձին դնում է այնպիսի պայմանների մեջ, որոնք բերում են դաժան վերաբերմունքի կամ ինքնին դաժան վերաբերմունք են հանդիսանում: Նվաստացնող վերաբերմունքը կարող է պակաս ծանր ցավ կամ տառապանք պատճառել խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի ենթարկելու համեմատությամբ, այն վիրավորում եւ նվաստացնում է տուժողին:

Դաժան վերաբերմունքը, որ չի նույնացվում խոշտանգում հասկացության հետ, կարող է սահմանվել հետեւյալ հիմնական տարրերով.

- Մտածված ձեռով մտավոր կամ մարմնական զգալի ցավ կամ տառապանք պատճառելը,
- Պետական պաշտոնյաների կողմից կամ նրանց լռելյայն համաձայնությամբ կամ գիտությամբ:

Հաճախ դժվար է որոշել դաժան վերաբերմունքի տարբեր ձեւերի միջեւ սահմանները, քանի որ դա պահանջում է տառապանքի աստիճանի գնահատում, ինչը կարող է կախված լինել գործի հանգամանքներից եւ կոնկրետ տուժողի տվյալներից: Որոշ դեպքերում դաժան վերաբերմունքի որոշակի տեսակներ կամ ազատագրկման որոշակի պայմաններ, որոնք ինքնին խոշտանգում չեն, միմյանց հետ համակցությամբ կարող են համարվել խոշտանգում: Դաժան վերաբերմունքը արգելված է միջազգային իրավունքով, եւ նույնիսկ այն դեպքերում, երբ վերաբերմունքը հատուկ նպատակներ չի հետապնդում կամ խոսքը նվաստացնող

---

<sup>36</sup> Պայքար Խոշտանգումների դեմ, Ձեռնարկ դատախազների և դատավորների համար, Քննոր Ֆոլի, Էսսեքսի համալսարան, Մարդու Իրավունքների Կենտրոն



վերաբերմունքի մասին է, որը խոշտանգում որակավորվելու համար այնքան դաժան չէ, այդուհանդերձ, այն կարող է համարվել արգելված դաժան վերաբերմունք<sup>37</sup>:

Ազատագրկման վայրի պայմանները նույնպես կարող են բերել արգելքի խախտման: Այդպիսի պայմաններ կարող են համարվել ջեռուցման, օդափոխության, լուսավորության, սննդի և ջրի, բժշկական սպասարկման, գերբնակեցման և այլ հանգամանքները: Այսպես՝ Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի<sup>38</sup> գործով տուժողը պահվել է 8 անձի համար նախատեսված 17-21 քմ տարածք ունեցող խցում՝ 18-24 այլ ազատագրկված անձանց հետ միասին: Այդ անձինք հարկադրված են եղել քնել հերթով: Խցի լուսավորությունն անընդհատ միացված է եղել, ինչն անքնություն է պատճառել, օդափոխությունը բավարար չի եղել, զուգարանը առանձնացված չի եղել խցի բնակելի մասից: Տուժողը պահվել է սիֆիլիսով, տուբերկուլյոզով, այլ վարակիչ հիվանդություններով տառապող անձանց հետ, ինչի հետևանքով ինքն էլ է վարակվել տարբեր հիվանդություններով: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ դատարանը համարել է, որ նման նվաստացնող պայմանները տուժողին մտավոր տառապանքներ են պատճառել՝ ստորացնելով նրա մարդկային արժանապատվությունը:

Պետությունը նաև խոշտանգումները, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքը կանխելու, իսկ կատարման դեպքերում՝ արդյունավետ հետաքննություն իրականացնելու, մեղավորներին հայտնաբերելու և պատժելու միջոցներ ձեռնարկելու պոզիտիվ պարտականություն ունի: Պետության ձեռնարկած միջոցառումները պետք է արդյունավետ լինեն և ծառայեն իրենց նպատակին:

### **Հանձնարարականի մեկնաբանություններ**

Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերը ավելի հաճախ հանդիպում են փակ և կիսափակ հաստատություններում, երբ անձիք զրկված են ազատությունից կամ նրանց ազատությունը սահմանափակված է: Այդ իսկ պատճառով պետությունները պարտավորություն են կրում զինված ուժերում ծառայություն անցնող անձանց համար երաշխավորել խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից զերծ ծառայություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական Կոնվենցիայի ներքո խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի

<sup>37</sup> Ibid 56

<sup>38</sup> No. 27095/95, 15.07.02, 2003 36 EHRR 34.

արգելքը բացարձակ բնույթ է կրում: Պետությունները չպետք է որևէ պարագայում և իրավիճակում նման արարքները թույլ տան: Իսկ զինված ուժերում պետք է քայլեր ձեռնարկվեն զինված ուժերի անձնակազմին նման վերաբերմունքից պաշտպանելու համար: Պետությունները պարտավորություն են կրում ապահովել զինձառայության այնպիսի պայմաններ, որոնք կհամապատասխանեն անձի արժանապատվությանը, իսկ զինձառայության մեթոդներն ու ընթացքը զինձառայողներին տանջանքների ու սթրեսի չենթարկեն, որը կանցնի կարգապահության ապահովման համար կիրառվող մեթոդների խստությունը:

Սպառնալիքները, ֆիզիկական բռնությունները, դաժան արարողակարգերը, ոտնձգությունները, նվաստացումներն ու վատ վերաբերմունքի այլ ձևերը որոշ զինված ուժերում շարունակում են արդիական մնալ: Վատ վերաբերմունքի դեպքերը հաճախ արձանագրվում են և պատշաճ քննություն ստանում, հատկապես նոր զինձառայողների պարագայում: Զինձառայողների որոշ հատկանիշներ, ինչպիսիք են սեռը, սեռական կողմնորոշումը, էթնիկական ծագումն ու կրոնը կարող են ճնշումների ու անմարդկային վերաբերմունքի հավանականությունը մեծացնել, ինչով պայմանավորված, նման անձիք ավելի մեծ ուշադրություն են պահանջում: Նման վիճակները պահանջում են պետության կողմից մեղավորներին հայտնաբերելու ու պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

Եվրոպական դատարանի կողմից տրվել է խոշտանգումների և անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հասկացությունը: Ըստ այդմ, սահմավել է, որ վատ վերաբերմունքը պետք է խստության նվազագույն շեմին համապատասխանի, որպեսզի հնարավոր լինի որակել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի ներքո: Խստության մակարդակը հարաբերական է և կախված է գործի բոլոր հանգամանքներից, մասնավորապես՝ վերաբերմունքի բնույթն ու կոնտեքստը, իրագործման մեթոդներն ու եղանակները, արարքի տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական էֆֆեկտները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ հատկանիշները՝ սեռ, տարիք, առողջական վիճակ և այլն<sup>39</sup>:

Գործողությունները, որոնք անձի մոտ առաջացնում են վախ, հոգեկան և ֆիզիկական ցավ և նվաստության զգացողություն, բավարար չափով լուրջ են անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք որակվելու համար:

---

<sup>39</sup> Ireland v. UK, judgment of 18 January 1978, para. 162; Soering v. UK, judgment of 7 July, 1989, para. 100.

Ինչպես կյանքի իրավունքի պարագայում, խոշտանգումների դեպքում նույնպես պետություններից պահանջվում է նման դեպքերի արդյունավետ և անկախ քննություն: Քննությունը պետք է լինի արդարացի, անկողմնակալ և վերահսկող մարմիններից անկախ: Նմանապես, այն պետք է դեպքից հետո անմիջապես իրականացվի և հանգեցնի մեղավորների պատասխանատվությանը:

Խոշտանգումներից տուժած անձիք պետք է արդյունավետ պաշտպանության միջոցի հնարավորություն ունենան:

Պետության կողմից պահանջվում է նաև այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի վատ վերաբերմունքի արժանացած զինծառայողները առանց վախի զեկուցեն և բարձրաձայնեն նման դեպքերը: Սրա համար նախ պահանջվում է վստահելի միջավայր ստեղծել և երաշխավորել մեղավորների հայտնաբերումն ու պատասխանատվության ենթարկելը: Իսկ պատասխանատվության ենթարկելու համար առանձնակի կարևորություն է ստանում իրավական և վարչական հիմքերի նախատեսումը:

## ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

### Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի<sup>40</sup>

2000 թ. դեկտեմբերին դիմողը հետազոտվել է երկու բժշկական հանձնաժողովների կողմից և ճանաչվել պիտանի զինվորական ծառայության համար: Ծառայության երկրորդ ամսից՝ 2001 թ. փետրվարից, տառապել է ծնկի ցավերից: Ծնկի վիճակի կապակցությամբ նրա անմիջական պետը նրան ազատել է ֆիզիկական վարժանքներից և շարային վարժություններից: Պարզվել է նաև, որ ծնկի վիճակից ելնելով՝ դիմողը մի քանի անգամ բուժում է ստացել զորամասի բուժկետում: 2001 թ. մարտին կրտսեր սերժանտ Չ-ն դիմողի անմիջական պետի ներկայությամբ հրամայել է դիմողին և այլ զինվորներին կատարել ծնկի 350 վարժություն՝ որպես պատիժ բարաքները չմաքրելու համար: Դիմողն ուժասպառ է եղել վարժության ընթացքում և տարվել հոսպիտալ՝ շտապ օգնություն ստանալու նպատակով: Զինծառայողը տեղափոխվել է քաղաքացիական հիվանդանոց, որտեղ ստացել է բուժում, ինչից հետո ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար, զորացրվել՝ ճանաչվելով երկրորդ կարգի հաշմանդամ:

Սույն գործով դատարանը փաստել է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խստիվ պահպանում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներից մեկը: Այն բացարձակ իմաստով արգելում է խոշտանգումը կամ անմարդկային կամ

<sup>40</sup> Chamber v. Russia, no. 7188/03, ECHR 2008.

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը՝ անկախ հանգամանքներից և տուժողի վարքագծից: Կոնվենցիայի 3-րդ հոդվածի սահմաններում վատ վերաբերմունքը պետք է ունենա լրջության նվազագույն մակարդակ: Այդ նվազագույնի գնահատումը կախված է գործի բոլոր հանգամանքներից, ինչպիսիք են վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեկան ազդեցությունը, որոշ դեպքերում՝ զոհի սեռը, տարիքը և առողջական վիճակը: Կիրառված խոշտանգումն ու անմարդկային վերաբերմունքը ցանկացած դեպքում պետք է դուրս գան օրինական վերաբերմունքի կամ պատժի հետ կապված տառապանքի և նվաստացման անխուսափելի տարրերի սահմաններից: Պարտադիր զինվորական ծառայությունը հաճախ ներառում է այնպիսի տարր, ինչպիսին է անձին ազատությունից զրկելու միջոցը: Այդուհանդերձ, շատ գործողություններ, որոնք կարող են առաջացնել բանտարկյալների նկատմամբ նվաստացնող կամ անմարդկային վերաբերմունք, չեն կարող անցնել վատ վերաբերմունքի սահմանը, երբ դրանք իրականացվում են զինված ուժերում, պայմանով, որ դրանք կատարեն հատուկ առաքելություն զինված ուժերում, երբ, օրինակ, դրանք հանդիսանում են կռվի դաշտի համար սահմանված վարժանքների մի մասը: Այդուհանդերձ, պետությունը պարտավոր է ապահովել, որ անձը զինվորական ծառայություն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ, իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պահպանված են՝ տրամադրելով նրան համապատասխան բժշկական օգնություն:

Պետության առաջնային պարտականությունն է նվազագույնի հասցնել առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլև մարդկային տարրի պատճառով, երբ պետությունը քաղաքացիներին գորակոչում է զինվորական ծառայության: Համաձայն դատարանի մոտեցման՝ վերաբերմունքը համարվում է «անմարդկային», եթե այն կանխամտածված է, կատարվում է ժամկետով և պատճառում է կա՛մ փաստացի մարմնական վնասվածքներ, կա՛մ ուժեղ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք: Այն հարցը, թե արդյոք վերաբերմունքի նպատակը եղել է անձին տառապանք պատճառելը, հաշվի է առնվում հետագայում, սակայն նման որևէ նպատակի բացակայությունն արդյունքում չի կարող բացառել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտումը: Այսպես, հիշյալ սկզբունքները կոնկրետացնելով գործի փաստերին՝ դատարանը գտնում է, որ դիմողին հրամայված է եղել կատարել հատուկ հանձնարարություն՝ կքանիստ վարժություններ՝ որպես պատիժ բարաքները ոչ պատշաճ մաքրելու համար: Այդ հրամանը տրվել է նրա ժամանավոր հրամանատարի կողմից, սակայն դրան լռելյայն համաձայնել է վերադաս հրամանատարը, ով ներկա է եղել և չի առարկել հրամանին: Հետևաբար, այդ վերաբերմունքը դիմողի նկատմամբ իրականացվել է

դիտավորությամբ: Դիմողն ուժասպառ է եղել և չի կարողացել կառավարել ոտքերը: Չնայած որ նա և՛ զինվորական, և՛ քաղաքացիական հիվանդանոցում ստացել է բժշկական օգնություն, հասցված վնասվածքը հանգեցրել է առողջության երկարատև քայքայման: Դիմողն ազատվել է զինվորական ծառայությունից և դարձել է երկրորդ կարգի հաշմանդամ:

Դատարանը գտել է, որ տվյալ գործով դիմողը ենթարկվել է ֆիզիկական վարժությունների հարկադիր կատարման, որոնք նրան հասցրել են ֆիզիկական ուժասպառության: Այս պատիժն իրականացվել է դիտավորությամբ՝ դիմողի հրամանատարների կողմից, որոնք հստակ իմացել են նրա առողջական խնդիրների մասին, ինչպես նաև այն իրականացվել է առանց որևէ ծառայողական անհրաժեշտության, որը կարողարացներ այդ գործողությունները: Հետևաբար, նման հանգամանքներում այդ պատիժը դիմողին պատճառել է ֆիզիկական մեծ տառապանք և անցել լրջության նվազագույն աստիճանի սահմանները: Հետևաբար, դիմողը ենթարկվել է անմարդկային պատժի՝ հանգեցնելով Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման:

#### **Կայանկինն ընդդեմ Ռուսաստանի<sup>41</sup>**

Սույն գործի շրջանակներում դիմողը առաջին անգամ զինվորական կոմիսիայի կողմից բուժզննության է ենթարկվել 1977 թվականի փետրվարի 12-ին, ինչի արդյունքում զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել: Երկրորդ անգամ բժշկական զննություն կատարվել է 1988 թվականի հոկտեմբերին, իսկ մեկ տարի անց կատարված զննության արդյունքում դիմողը ծառայության համար պիտանի է ճանաչվել: Բժշկական զննության արդյունքների հետ համաձայն լինելով՝ դիմողը սկսում է ծառայությունը 1999 թվականի հունիսի 3-ին: Հինգ ամիս անց վերջինս կրկին բժշկական զննություն է անցնում՝ բողոքելով բանակում վատ վերաբերմունքի արդյունքում ծագած առողջական խնդիրներից: Հերթական բժշկական զննությունը դիմողի մոտ հայտնաբերել է ուղեղի սուր վնասվածքներ: Նույն տարվա դեկտեմբեր ամսին դիմողը ծառայության համար ոչ պիտանի է ճանաչվել, և լրացուցիչ զննության արդյունքում պարզ է դարձել, որ ուղեղի վնասվածքները ի հայտ են եկել զինվորական հաշվառումից առաջ, իսկ ֆիզիկական կոնկրետ ախտանշաններ չեն հայտնաբերվել:

Դիմողը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում բարձրացրել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածով պաշտպանվող իր իրավունքի խախտման հարցը՝ այն հիմնավորելով իր զինվորական հաշվառման, բանակում վատ վերաբերմունքի արժանանալու և բանակային իշխանությունների կողմից համապատասխան քննություն չիրականացնելու հանգամանքներով:

<sup>41</sup> Kayankin v. Russia, no. 24427/02, 11 February 2010

Սույն գործի շրջանակներում Դատարանը ապացուցված է համարել այն հանգամանքը, ըստ որի՝ իշխանությունները լուրջ հիմքեր չեն ունեցել հավատալու, որ զինվորական ծառայության անցնելով՝ դիմողը կենթարկվի Կոնվենցիայի երրորդ հոդվածով նախատեսված վերաբերմունքին: Այս ամենը բացատրվել է հետևյալով. բժշկական զննության ժամանակ դիմողը իր առողջական վիճակի վերաբերյալ գանգատներ չի ունեցել, բացի այդ, սովորական բժշկական զննությունը դիմողի հիվանդությունը չի արձանագրել: Հետևաբար, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում չի կատարվել: Դատարանը իր որոշումը հիմնավորել է հետևյալով՝

- դիմողի ներկայացրած ապացույցները հակասական են եղել,

- բավարար ապացույցներ չեն ներկայացվել, որոնք կհավաստեին բանակում դիմողի նկատմամբ առկա վատ վերաբերմունքը,

- ներկայացված հանգամանքների վերաբերյալ իրականացված ներքին հետաքննությունը արդյունավետ է ճանաչվել:

Չնայած այն հանգամանքին, որ սույն գործով Դատարանը Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, այնուհանդերձ առանձին մեկնաբանությամբ նշվել է, որ դիմողը զինծառայության հաշվառվելիս հիվանդ է եղել, և բանակում նրա կրած հնարավոր տանջանքները, ենթադրվում է, որ կարող էին հասցնել հոդված 3-ով արգելված վերաբերմունքի աստիճանին:

### **Իրավիճակային խնդիր 1<sup>42</sup>**

#### **/խոշտանգման միջոցով ստացված ապացույցների կիրառելիությունը/**

Չինձառայող Ա-ին առաջադրվել է մեղադրանք սպանություն կատարելու համար: Մեղադրանքի հիմքում ընկած է նրա ինքնախոստովանությունը, ինչպես նաև վկաներ Պ-ի և Ս-ի ցուցմունքները: Պ-ն պնդել է, որ տեսել է, թե ինչպես էր Ա-ն գծովել սպանվողի հետ դեպքից կես ժամ առաջ, իսկ Ս-ն պնդել է, որ տեսել էր, թե ինչպես էր Ա-ն կրակել սպանվողի վրա: Դատաքննության փուլում մեղադրյալը և երկու վկաները փոխել են իրենց ցուցմունքները՝ պնդելով, որ տեղյակ չեն սպանության մասին և որ իրենց ցուցմունքները տվել են նախաքննական մարմինների կողմից գործադրված խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի տակ:

Դատարանն ընդունել է, որ նրանք ենթարկվել են խոշտանգումների, սակայն այնուամենայնիվ դատապարտել է Ա-ին՝ հիմնվելով նրա ինքնախոստովանական ցուցմունքի, Պ-ի և Ս-ի ցուցմունքների, ինչպես նաև դատաձգաբանական, դատաբժշկական փորձաքննության տվյալների վրա:

<sup>42</sup> Իրավիճակային Խնդիրները /N1 և N2/ կազմվել են փորձագետ Արա Ղազարյանի կողմից



·ÉÈÇÝ, áñÇó í»ñçÇÝè áðß³Ã³÷ ÷ ÈÇÝáðÙ: Ð»³.³ÙáðÙ á³ñ½íaðÙ ÷, áñ Ñ³ñ³íÁ á³÷³½³Ýó áðÁ»Õ ÷ »Õ»É, áñÇ Ñ»³Ýúái ïÕ³Ù³ñ¹Á ë³ó»É ÷ .³Ý.áðÕ»ÕÇ íÝ³ë³íÙ " Ñá.»³Ý éáðñ È³Ý.³ñáðÙ:

ì»ñÉáðí»ù Ýß³í Çñ³íÇ×³íÁ òíñáá³³Ý íáÝí»ÝóÇ³ÙÇ 3-ñ¹ Ñá¹³íÇ á³Ñ³ÝçÝ»ñÇ Ý»ñúá " á³³ëÈ³Ý»ù Ñ»³Ù³É Ñ³ñóÇÝ.

- ²ñ¹Ùá±ù ³ÝÓÁ »ÝÃ³ñí»É ÷ ³ñ.»É³í í»ñ³μ»ñÙáðÝùÇ?

àñá»è½Ç áñáß»ù ³Ù¹ Ñ³ñóÁ, ³ÝÑñ³Á»ßí ÷ á³ñ½»É, Æ» ³ñ¹Ùáú áë³Ç³ÝÇ íáÕÙÇó ÌÇñ³é³í áðÁÁ »Õ»É ÷ Çñ³³á³÷, Çë³ ¹³ ÷ È áñáß»Éáð Ñ³Ù³ñ ³ÝÑñ³Á»ßí ÷ í»ñÉáðí»É, Æ» ³ñ¹Ùáú ÌÇñ³é³í áðÁÁ .»ñ³½³Ýó»É ÷ ³ÝÑñ³Á»ßíáðÁÙ³Ý è³ÑÙ³ÝÝ»ñÁª ïíÙ³É .áñíÇ Ñ³Ý.³Ù³ÝùÝ»ñÇ Ý»ñúá:

### ä³³ëÈ³Ý

Ò»ñμ³³É»ÉÇè ÌÇñ³é³í áðÁÇ ³ÝÑñ³Á»ßíáðÁÙáðÝÁ áñáß»ÉÇè »íñáá³³Ý ¹³³ñ³ÝÁ ÌÇñ³éáðÙ Ñ»³Ù³É á³÷áñáßÇáÝ»ñÁ.

- 1) ³ñ¹Ùáú áë³Ç³ÝÝ»ñÝ áðÝ»ó»É »Ý μ³³ñ³ñ Á³Ù³Ý³í áð ÑÝ³ñ³íáñáðÁÙáðÝ Çñ³íÇ×³íÁ .Ý³Ñ³³»Éáð, Ó»ñμ³³ÉÙ³Ý ùá»ñ³óÇ³Ý Ì³½Ù³í»ñá»Éáð Ñ³Ù³ñ, Æ» ë³Çá³í »Ý »Õ»É .áñí»É Ñ³Ýá³³ñ³ë³Çó, ù³ÝÇ áñ Çñ³íÇ×³íÁ Ì³.»É ÷ Ñ³Ý³ñ³íÇ,
- 2) ²ñ¹Ùáú Ó»ñμ³³ÉáðÙÝ Çñ³³Ý³óñ³í áë³Ç³ÝÝ»ñÇ ÆÇíÝ ÷ ³á»è .»ñ³½»Ýó»É ÷ Ó»ñμ³³ÉíáðÝ»ñÇ ÁíÇÝ,
- 3) ²ñ¹Ùáú Ó»ñμ³³ÉíáðÝ»ñÁ óáðó³μ»ñ»É »Ý ¹ÇÙ³ñáðÁÙáðÝ, Ññ³Á³ñí»É »Ý »ÝÃ³ñí»É áë³Ç³ÝÇ ùñÇÝ³³Ý á³Ñ³ÝçÝ»ñÇÝ:

²ÕμÙáðñ. '»ÉÈÇÝèíÇÝ ÁÝ¹¹»Ù È»Ñ³ë³ÝÇ, ÆÇí 27715 " 30209/96, 20/06/2002, ï»°è á³ñμ. 56-65:

**ԹԵՄԱ 4. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**



## **Հանձնարարականի մեկնաբանություններ**

Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 5-րդ հոդվածը երաշխավորում է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը և սահմանում է ձերբակալված ու կալանավորված անձի իրավունքները:

### **Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք**

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

ա. անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

բ. անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով,

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

դ. անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

ե. անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

զ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

2. Յուրաքանչյուր ձերբակալված իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է իր ձերբակալման պատճառների և ներկայացվող ցանկացած մեղադրանքի մասին:

3. Մույն հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի դրույթներին համապատասխան ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվում է դատավորի կամ այլ պաշտոնատար անձի մոտ, որն օրենքով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն և ունի ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունք կամ մինչև դատաքննությունն ազատ արձակվելու իրավունք: Ազատ արձակումը կարող է պայմանավորվել դատաքննության ներկայանալու երաշխիքներով:

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի

*կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:*

*5. Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման գոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման:*

Վերոնշյալ երաշխիքների պրակտիկ կիրառելիության ընթացքում Մարդու իրավունքների Եվրոպական Դատարանը /Դատարանը/ սահմանել է, որ 5-րդ հոդվածի 4-րդ մասը, որը հնարավորություն է տալիս վիճարկել ազատագրվման օրինականությունը, նախատեսում է, որ ազատությունից զրկված անձը իրավաբանական օգնության հասանելիություն պետք է ունենա: Օրինակ, վերանայված Եվրոպական Բանտային Կանոնների 23.1 Կանոնը սահմանում է, որ ազատությունից զրկված բոլոր անձիք իրավաբանական խորհրդատվության իրավունք ունեն և հիմնարկի ղեկավարությունը պետք է պայմաններ ստեղծի նման խորհրդատվության հասանելիությունը ապահովելու համար: Այս իրավունքը պետք է նախատեսվի նաև ներպետական օրենսդրությամբ և տարածվի նաև զինված ուժերի անձնակազմի նկատմամբ, ովքեր ձերբակալվել և ազատությունից զրկվել են: Ավելին, ազատությունից զրկված անձիք պետք է նաև իրենց ներկայացուցչի հետ մասնավոր, կամ առնվազն առանձ երրորդ անձանց ներկայության, հանդիպման հնարավորություն ունենան: Եվրոպական Բանտային Կանոնների 23.4 Կանոնի համաձայն ազատագրված անձի և նրա իրավական ներկայացուցչի միջև հարցերը պետք է կոնֆիդենցիալ մնան: Սա կարող է սահմանափակվել, առանձին՝ օրենքով նախատեսված դեպքերում, երբ դա անհրաժեշտ է անվտանգության և կարգի պահպանման համար: Զինված ուժերի անձնակազմի ազատությունից զրկված ներկայացուցիչը պետք է նաև հնարավորություն ունենա բժշկական զննություն անցնել և իր ընտրությամբ երրորդ անձի ձերբակալման փաստը տեղեկացնել:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխիք է ստեղծվում նաև ապօրինի ձերբակալման և ազատությունից զրկելու դեպքում փոխհատուցում ստանալու վերաբերյալ: Մասնավորապես, նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ երկրի ներպետական օրենսդրությամբ նման հնարավորություն չկա, ապա Կոնվենցիան վավերացրած երկիրը հոդված 5-ի ուժով կրում է նման պարտականություն:

Հատկանշական է, որ զինվորական ծառայությունը Կոնվենցիայի ներքո ազատությունից զրկում չի համարվում: Իսկ ազատ տեղաշարժվելու ազատության սահմանափակումները զինծառայության առանձնահատկություններից և նպատակից բխող սահմանափակումներ են: Ավելին, յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում

զինվորական կարգապահության համակարգը և այս առումով որոշ հայեցողական սահման ունի: Զինվորական ծառայությունը կարող է նախատեսել նաև կարճաժամկետ ազատազրկում՝ պատժելու նպատակով, ինչով պայմանավորված Դատարանը սահմանել է, որ զինվորական կարգապահությունը որակվում է հոդված 5.1-ի ներքո<sup>43</sup>:

Ազատությունից զրկելիս 5-րդ հոդվածի խախտումը հաստատվում է յուրաքանչյուր կոնկրետ գործի մանրամասն ուսումնասիրությունից և զինվորական կյանքի պահանջներից ելնելով: Այնուհանդերձ, կան որոշ չափանիշներ, որոնք պետք է հաշվի առնել ազատության սահմանափակման դեպքում: Մասնավորապես, ազատությունից զրկելը պետք է հիմնվի դատարանի որոշման վրա, որոշումը պետք է կայացվի իրավասու դատարանի կողմից, որը բավարար լիազորություններ ունի տվյալ գործը քննելու համար, որը անկախ է գործադիր մարմնից և ադեկվատ դատական երաշխիքներ է նախատեսում: Կոնվենցիայի 5.1 հոդվածով սահմանված «օրենքով նախատեսված ցանկացած պարտավարության կատարումն ապահովելու նպատակով» վերաբերում է այն դեպքերին, երբ օրենքը թույլատրում է անձի ազատազրկումը կոնկրետ պարտավորություն կատարելու համար: Հետևաբար, այդ դրույթի ներքո որակելու համար, ազատազրկումը չպետք է պատժիչ բնույթի լինի:

Կոնվենցիայի 5.2 հոդվածով սահմանված է, որ ձերբակալված յուրաքանչյուր անձ պետք է անհապաղ տեղեկացվի իրեն առաջադրված մեղադրանքի և ձերբակալման պատճառների մասին: Նույնը կիրառելի է նաև զինված ուժերի անձնակազմի պարագայում: Դատարանը սահմանել է, որ ցանկալի է, որ բանավոր կերպով ձերբակալման պատճառներին ծանոթացած անձը հետագայում նաև գրավոր տեղեկանք ստանա ձերբակալման պատճառների վերաբերյալ<sup>44</sup>:

Դատարանը սահմանել է նաև, որ ձերբակալված կամ բերման ենթարկված յուրաքանչյուր անձ պետք է անհապաղ դատական մարմնի ներկայացվի: Անհապաղության հարցը յուրաքանչյուր դեպքում որոշվում է հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները, ինչպես նաև զինվորական կյանքի առանձնահատկությունները: Օրինակ, 5 օր պահելը և հետո միայն զինծառայողին դատարան տանելը կալանքի որոշման համար, որն է կերպ չի արդարացվում: Նմանապես, Դատարանը որոշել է, որ զինվորական քրեական հանցանքների դեպքում զինծառայողներին 6-7 կամ 11 օր ազատազրկված պահելը և հետո միայն

<sup>43</sup> Engel and Others v. the Netherlands, op. cit., para. 57.

<sup>44</sup> Boyle v. UK, judgment of 8 January 2008, para. 38

դատարան տանելը, խախտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները: Դատական մարմինը, ուր բերվում է ձերբակալված անձը, պետք է իրավասու լինի ազատությունից զրկելու հարցը որոշելու համար, օրենքով պետք է ունենա համապատասխան լիազորություններ և անկախ լինի կողմերից:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածով նախատեսված է նաև, որ յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկել իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

Ազատությունից զրկելու հիմքերը և սպառիչ ցանկը նախատեսված է 5-րդ հոդվածի առաջին մասով: Մասնավորապես, ազատությունից զրկել թույլատվում է հետևյալ դեպքերում և միայն օրենքով սահմանված դեպքերում՝

- Անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո
- Անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովելու նպատակով
- Անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար
- Անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով
- Անձի օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը
- Անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական

կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով

Քաղաքացիների դեպքում կարգապահական պատասխանատվության ենթարկելը կամ միջոց կիրառելը հնարավոր է բնութագրվի որպես ազատությունից զրկում, մինչդեռ այն նույն կերպ չի մեկնաբանվում զինված ուժերի անձնակազմի պարագայում: Կարգապահական պատասխանատվությունը կամ միջոցը սակայն չի ազատվում 5-րդ հոդվածի պայմաններից, երբ այն ակնհայտորեն շեղվում է զինված ուժերում ծառայության բնականոն պայմաններից: Նման մեկնաբանության համար ուշադրություն պետք է դարձնել մի քանի հանգամանքների՝ կիրառվող պատասխանատվության միջոցի բնույթը, տևողությունը, էֆֆեկտները և իրականացման ձևը: Օրինակ, զինծառայողին վերադաս հրամանատարի կողմից 21 օր բաց կալանքի ենթարկելը զինվորական կարգապահության կանոններից չենթարկվելու համար չի որակվում որպես ազատազրկում՝ Կոնվենցիայի 5.1 հոդվածով սահմանված պարտականություններից որևէ մեկը կատարելու համար, այն դեպքում, երբ ձերբակալելը զինվորական կարգապահությանը չենթարկվելու արդյունք է և իր բնույթով պատժիչ է<sup>45</sup>:

Զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչների ազատությունից զրկելու որոշումը պետք է օրինական լինի և դատարանի կողմից սահմանվի: Օրինական համարվելու համար դատարանը պետք է անկախ համարվի և ադեկվատ դատական երաշխիքներ տրամադրի: Օրինակ, Իսպանական Քաղաքացիական հսկողության կողմից 6-օրյա տնային կալանքի որոշումը օրինական համարվել չի կարող, քանի որ այն անկախ դատական մարմին չի համարվել<sup>46</sup>:

Զինված ուժերի անձնակազմին ազատությունից զրկելիս պետք է ուշադրություն դարձնել նաև կոնկրետ իրավիճակին որակումներ տալու համար: Օրինակ, «թեթև կալանքը» որը պարունակել է կացարանի, ռազմական շինությունների և հատվածների սահմանափակում, երբ զինծառայողները արգելանքի տակ չեն եղել և շարունակել են իրենց պարտավարությունների կատարումը, ազատությունից զրկում չի համարվում: Նմանապես, երբ զինծառայողը 12-օրյա կալանքի է ենթարկվել և պարտավորություն է կրել չթողնել կալանքի կրման վայրը, սակայն արգելանքի տակ չի եղել և ազատություն է ունեցել, կրկին չի որակվում որպես ազատությունից զրկում:

---

<sup>45</sup> A.D. v. Turkey, judgment of 22 December 2005

<sup>46</sup> Dacosta Silva v. Spain, judgment of 2 November 2006, paras 43 and 44

Մյուս կողմից, խցում 24 ժամյա արգելանքը, երբ զինճառայողը զրկված է իր պարտավարությունների կատարումից, համարվում է ազատությունից զրկում:

Ընդհանուր առմամբ «ազատության» մասով այս իրավունքը վերաբերում է անձնական ազատությանը՝ դրա դասական իմաստով, այսինքն՝ անձի ֆիզիկական ազատությանը: Այն երաշխավորում է պետության կամայական ոտնձգությունների հետևանքով ձերբակալումից, կալանավորումից կամ այլ կերպով ազատությունից ֆիզիկապես զրկելուց անձի պաշտպանությունը:

«Անձնական անձեռնմխելիության» մասով այս իրավունքն անքակտելի է ազատության իրավունքից և փաստորեն հավասարեցվում է վերջինիս<sup>47</sup>: Անձնական անձեռնմխելիության իրավունքը ներառում է երաշխիք, համաձայն որի առանձին անձինք պետք է ձերբակալվեն և կալանավորվեն միայն օրենքով նախատեսված հիմքերով և ընթացակարգին համապատասխան: Անձնական անձեռնմխելիության իրավունքը չի վերաբերում, օրինակ, իրավաբանական, տնտեսական կամ հոգեբանական անձեռնմխելիությանը<sup>48</sup>:

Այս իրավունքը երաշխիք է ստեղծում կամայական ձերբակալությունների, կալանավորման կամ ցանկացած այլ կերպ անձին ազատությունից զրկելու արգելքի համար: Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի իրականացման համար անհրաժեշտ երկու տեսակի երաշխիքային պահանջներ: Առաջինը վերաբերում է ազատությունից զրկելու օրինականությանը. պետությունները կարող են անձին զրկել ազատությունից միայն որոշակի պայմաններ պահպանելու պարագայում: Երկրորդը վերաբերում է ձերբակալված կամ կալանավորված անձանց դատավարական երաշխիքներին. ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպքում պետք է նախատեսվեն երաշխիքներ, որոնք ամրագրված են վերը նշված 2-5-րդ կետերում, որոնք զլխավորապես կոչված են ապահովելու ազատությունից զրկելու օրինականության մասին որոշման (վերը նշված «ա»-«գ» կետերում նշված պահանջներին համապատասխանելու առումով) անհապաղ և պատշաճ կերպով ընդունումը:

Թեև ազատության իրավունքը չի ներառում ազատ տեղաշարժի իրավունքը, այնուամենայնիվ, հնարավոր են դեպքեր, երբ որոշակի պայմաններում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը համարվի ազատության իրավունքի խախտում: Մասնավորապես, այդպիսիք կարող են լինել «բաց բանտում», կարգապահա-

<sup>47</sup> Երոուսմիտն ընդդեմ Միացյալ Թագավորության. Comm. Report 12.10.78, para. 64.

<sup>48</sup> «Ազատության» և «անձեռնմխելիության» կապի ու հարաբերակցության մասին ավելի հանգամանալից տե՛ս Bozano v. France, Judgment of 18 December 1986, Timurtas v. Turkey, Judgment of 13 June 2000 գործերով վճիռներում, ինչպես նաև՝ Άϊίία Άϊϊάί, Άάάέα 0άδδθθ, Έάί Ըάάάέ. Άάδϊίáέθéáÿ éίίááίóèÿ í ιδáááó -áéίááéá è Άáδϊίáέθéáÿ ñíóèáèüíáÿ óáδδèÿ: ιδááί è ιδáèðèèá. l.1998, ñ.162.

կան գումարտակում կամ հոգեբուժական հիվանդանոցում որոշակի պայմաններով անձին պահելու դեպքերը<sup>49</sup>:

Հետաքրքիր են նաև բանտում՝ ազատությունից արդեն զրկված պայմաններում ազատության սահմանափակման ավելի խիստ միջոցներ կիրառելու և անձին ավելի սահմանափակ պայմաններում պահելու դեպքերը: Թեև դրանք, որպես կանոն, չեն կարող համարվել անձին ազատությունից զրկելու դեպքեր, սակայն կարող են լինել այնպիսի բացառիկ հանգամանքներ, որոնք կարող են համարվել ազատության իրավունքի միջամտություն<sup>50</sup>:

### **Անձին ազատությունից զրկելը մասնավոր անձանց կողմից**

Հարկ է նշել, որ իշխանական լիազորություն չունեցող անձանց կողմից որևէ անձի ազատությունից զրկելիս պետության պոզիտիվ պարտավորությունների բնույթի վերաբերյալ պարզ և բավարար պատկերացումներ չկան:

Թեև այս իրավունքի խախտման հետ կապված հիմնախնդիրների մեծամասնությունն առաջանում է դատավորների և պետական ծառայողների գործողությունների և որոշումների հետևանքով, այնուամենայնիվ, իշխանական լիազորություն չունեցող անձանց՝ կալանքի իրականացման հետ կապված գործողությունները նույնպես պետք է սահմանափակվեն և զսպվեն:

Ասվածը հիմնավորվում է Եվրոպական դատարանի մի շարք նախադեպային որոշումներով:

Նիելսենն ընդդեմ Դանիայի գործում դիմողը՝ 12-ամյա տղան, իր մոր պահանջով տեղավորվել էր հոգեբուժական հիվանդանոցում: Դատարանը որոշեց, որ քանի որ հոսպիտալացումը (հիվանդանոցում տեղավորելը) մոր ծնողական իրավունքի արտահայտությունն էր, որը երաշխավորվում էր Կոնվենցիայի 8-րդ հոդվածով և արդարացվում էր դիմողի հոգեկան վիճակով, և քանի որ նրա ազատության սահմանափակումներն զգալիորեն չէին տարբերվում նրանցից, որոնք կարող էին կիրառվել երեխայի նկատմամբ սովորական հիվանդանոցում, կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով ազատությունից զրկում տեղի չի ունեցել:

---

<sup>49</sup> *ի»è Guzzardi v. Italy*, Judgment of 6 November 1980, *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, Judgment of 18 June 1971, *Ashingdane v. the United Kingdom*, Judgment of 28 May 1985, *Nielsen v. Denmark*, Judgment of 28 November 1988, *Amur v. France*, Judgment of 25 June 1996, *ՇՅãã»è Ỳ³· ÛÇ»Éë»ÝÝ ÁÝ¹¹»Û , ³ÝÇ³ÛÇ. Comm. Report 12.03.87, 103-129 Ի»ã»ñ:*

<sup>50</sup> *ի»è Bollan v. the United Kingdom* (App. 42117/98), admissibility decision of 4 May 2000:

Կոնիարսկան ընդդեմ Միացյալ Թագավորության<sup>51</sup> գործի վերաբերյալ ընդունելիության որոշման մեջ դատարանը դիմողի 17-ամյա աղջկա դրությունը, որն ախտորոշվել էր որպես հոգեկան անհավասարակշիռ (պսիխոպատիկ) և տեղավորվել էր տեղական իշխանության հսկողությամբ ապահովված շենքում, տարբերակեց վերոնշյալ Նիելսենն ընդդեմ Դանիայի գործում դիմող Նիելսենի դրությունից այն հիմնավորմամբ, որ Կոնիարսկայի կալանքը որոշվել էր դատարանների կողմից, որոնք նրանկատմամբ ծնողական իրավունքներ չունեին:

Ենթադրվում է, որ այս հիմնավորումը բացառում է պետության, ծնողների կողմից անարդարացի կերպով ազատությունից զրկելուց երեխաներին պաշտպանելու համար միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը:

Նշված տարբերության հիմքերից ելնելով՝ կարող է նույնիսկ ենթադրվել, որ 5-րդ հոդվածի 1-ին կետը չի ներառում մասնավոր անձանց կողմից իրականացվող որևէ անձի ազատությանը միջամտությունների մեջ պաշտպանություն իրականացնելու պետության ցանկացած պոզիտիվ պարտավորություն:

Հարկ է նշել, որ պետական ծառայողները չեն կարող համապատասխան գործողություններ չիրականացնել այն դեպքում, երբ ազատությունից զրկելը չի համապատասխանում 5-րդ հոդվածի պահանջներին: Եվրոպական դատարանը Ռիերա Բլումեր և այլք ընդդեմ Իսպանիայի<sup>52</sup> գործով վճռում որոշել է, որ դիմողների ազգականներին, որոնք, ինչպես ենթադրվում էր, դարձել էին կրոնական աղանդի անդամներ, պահել էին հյուրանոցում՝ հոգեբույժի և հոգեբանի օգնությամբ «ապաժրագրավորելու» նպատակով: Այդ գործողություններն առաջարկվել էին նախնական դատական քննության ընթացքում, երբ դիմողները գտնվում էին կալանքի տակ: Սակայն ո՛չ տվյալ երկրի դատարանը, ո՛չ դիմողների ազգականները չունեին օրենքով նախատեսված որևէ լիազորություն այդ գործողությունների իրականացման համար: Քանի որ դիմողների ընտանիքների գործողությունները չէին կարող իրականացվել առանց իշխանությունների գործուն մասնակցության, դատարանը որոշեց, որ տեղի է ունեցել կոնվենցիայի 5-րդ հոդվածով պաշտպանվող այս իրավունքի խախտում:

Ըստ դատարանի՝ պետական մարմինները լուր համաձայնությամբ և հանդուրժողաբար չպետք է վերաբերվեն մասնավոր անձանց կողմից կատարվող և ազատությունից զրկմանը հանգեցրած գործողություններին, որոնք հակասում են կոնվենցիայի 5-րդ հոդվածին, ինչպես նաև պետական մարմինները չպետք է խրախուսեն մաս-

<sup>51</sup> St' u Koniarska v. the United Kingdom (App. 336770/96), admissibility decision of 12 October 2000:

<sup>52</sup> St' u Riera Blume and Others v. Spain, Judgment of 9 March 1999:



նավոր անձանց կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որոնցից իրենք նույնպես պետք է ձեռնպահ մնան:

## ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

### Էնգելն ու այլք ընդդեմ Նիդեռլանդների<sup>53</sup>

Սույն գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկել էր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում կարգապահական պատախանաստվության և հատկապես ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառման համապատասխանությունը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի դրույթներին: Դատարանի իրավական գնահատականը Դատարանը փաստել է, որ պետությունների զինված ուժերում կարգապահության պահպանման համակարգը օրյեկտիվորեն ենթադրում է զինծառայողների որոշ իրավունքների սահմանափակումներ: Նման համակարգի գոյությունը չի հակասում պետությունների պարտականություններին: Զինվորական կարգապահությունը, սակայն, դուրս չի մնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի շրջանակներից՝ Կոնվենցիայի 1-ին և 14-րդ հոդվածների համաձայն: Յուրաքանչյուր պայմանավորվող պետություն օժտված է որոշակի հայեցողությամբ՝ սահմանելու զինվորական կարգապահության իր համակարգը: Կարգապահական պատիժները, որոնք կարող են դիտվել որպես ազատությունից զրկում քաղաքացիների կամար, կարող են չունենալ նույն բնույթը զինծառայողների նկատմամբ կիրառվելու դեպքում: Այդուհանդերձ, զինծառայողների դեպքում Կոնվենցիայի 5-րդ հոդվածը կիրառելի է, կարգապահական պատիժը կրում է այնպիսի բնույթ, որը ակնհայտորեն ստաբերվում է զինված ուժերում կյանքի սովորական պայմաններից:

Դիմումատուներից Էնգելը կատարված իրավախախտման համար ենթարկվել էր նախնական երկօրյա խիստ ռեժիմում մեկուսացման: Հետագայում նրա նկատմամբ ընդունվել է կարգապահական պատիժ նույն ժամկետով, որը բողոքարկման հետևանքով անփոփոխ էր թողնվել նաև զինվորական դատարանի կողմից: Խիստ ռեժիմում մեկուսացման ձևով կարգապահական պատիժը ենթադրել է սերժանտների և շարքային զինծառայողների մեկուսացումը խցում պատժի ողջ ընթացքում, և հետևաբար՝ նրանք չեն կատարել իրենց բուն պարտականությունները: Նման մեկուսացման հնարավորությունը եղել է 1-14 օրվա ընթացքում:

Դատարանը փաստել է, որ չնայած իր կարճ ժամկետին՝ Էնգելի նկատմամբ կիրառված պատիժը կրել է ազատությունից զրկելու բնույթ: Խիստ ռեժիմում մեկուսացումը՝ որպես կարգապահական պատիժ, նախատեսված է եղել զինծառայողների նկատմամբ, ովքեր

<sup>53</sup> Engel and Others v. the Netherlands (Article 50), 23 November 1976,

կատարել են այնպիսի արարք, որը կուպիտ կերպով խախտել է զինվորական կարգապահությունը: Քանի որ այն նախատեսվել է որևէ արարքի կատարումից հետո, հետևաբար կրել է պատժիչ բնույթ: Հետևաբար, այն չի համապատասխանել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին: Դատարանում կառավարությունը հայտնել էր, որ կրած պատիժը հաշվանցվել է հետագայում ստացած կարգապահական տույժի կրման մեջ, և նա ազատվել է նշանակված պատիժը կրելուց: Մույն փաստի առթիվ Դատարանը հայտնել է, որ կայացված դատավճռում նախնական քննության ընթացքում ազատությունից զրկված ժամկետի հաշվանցելը չի վերացնում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի խախտումը, սակայն կարող է հետևանքներ ունենալ Կոնվենցիայի 50-րդ հոդվածի կիրառման դեպքում, քանի որ այդ միջոցը սահմանափակում է պատճառված վնասի չափը: Այսպիսով՝ Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի խախտում:

### **Իրավիճակային խնդիր<sup>54</sup>**

Խաղային ուսուցումը իրականացվում է դատախազի միջոցով: Լսարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերից մեկը պետք է ներկայացնի կառավարության շահերը, իսկ մյուսը՝ դիմումատուի:

Խմբերին տրամադրվում է 45 րոպե ժամանակ՝ փաստերին, կիրառման ենթակա իրավունքին ծանոթանալու և իրենց տեսակետները ձևակերպելու համար: Այնուհետև յուրաքանչյուր կողմի տրվում է 10 րոպե ժամանակ՝ դիրքորոշումը բանավոր ներկայացնելու համար: Դասախոսի թույլտվությամբ նյութը կարող են լրացնել խմբի մյուս մասնակիցները:

Ներկայացնողին հարցեր են տալիս դասախոսը և մյուս խմբի անդամները: Հարց ու պատասխանի տևողությունը չպետք է գերազանցի 5 րոպեն:

Կողմերի դիրքորոշումները լսելուց հետո դասախոսը ներկայացնում է դատարանի իրական գնահատականը<sup>55</sup> և դրա հիմնավորումները: Առկա է անձին ազատությունից զրկելու փաստ՝ համաձայն կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի:

### **Գործի փաստերը**

Անձը փոստային բաժանմունքում աղմուկ է բարձրացրել, որից հետո փոստային բաժանմունքի աշխատակիցները ոստիկան են կանչել, որոնք էլ անձի հարբած լինելու կասկածանքով նրան տեղափոխել են սթափարան: Անձը սթափարանում հարկադրաբար պահվել է 6 ժամ 30 րոպե:

Արդյո՞ք անձին սթափարանում պահելը կարելի է համարել ազատությունից զրկում:

<sup>54</sup> Խնդիրը վերցված է «Ձինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ձեռնարկից

<sup>55</sup> Witold Litwa v Poland, N26629/95, 04.04.2000.

## ԹԵՄԱ 5. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

### Հանձնարարականի մեկնաբանություններ

Յուրաքանչյուր անձի՝ ներառյալ զինված ուժերի անձնակազմի արդար դատաքննության իրավունքը արտացոլում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները: 6-րդ հոդվածի համաձայն՝

*«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:*

*2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:*

*3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.*

*ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,*

*բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,*

*գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,*

*դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,*

*ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:*

Հողվածում արտահայտված քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ, ինչպես նաև քրեական մեղադրանք եզրույթները Կոնվենցիայի ներքո ինքնուրույն մեկնաբանության են ենթարկվում, հետևաբար Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այս կապակցությամբ չի հետևում ներպետական օրենսդրությունների կողմից այդ եզրույթներին տրված մեկնաբանություններին:

Ինչ վերաբերվում է քրեական մեղադրանքին, ապա Դատարանի կողմից ձևավորվել են չափանիշներ, որոնք հաշվի են առնվում քրեական որակում տալու համար: Մասնավորապես, դրանք են՝ ներպետական օրենսդրության մեջ արարքի որակումը և դասակարգումը, խախտումը նախատեսով դրույթի բնույթը, սանկցիայի/պատասխանատվության նպատակը և պատասխանատվության միջոցի խստությունն ու բնույթը: Դատարանի կողմից մեղադրանք եզրույթը մեկնաբանվել է որպես իրավասու մարմինների կողմից անձին հանցանք կատարելու մեջ կասկածելու մասին պաշտոնական ծանուցումը:

Այն պահից սկսած, երբ որոշվում է քաղաքացիական իրավունքների կամ պարտականության հարցը, կամ անձին մեղադրանք է ներկայացվում, 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները սկսում են գործել: Այդ երաշխիքների մի մասը, ինչպես նաև Դատարանի կողմից ընդունված երաշխիքներ ևս կիրառելի են նաև զինձառայողների համար: 6-րդ հոդվածով սահմանված կիրառելի երաշխիքները ողջամիտ ժամկետում գործի քննությունն ու անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի քննության ապահովումն է:

Դատարանի կողմից ձևավորված լրացուցիչ երաշխիքները հետևյալն են՝

- Դատարանի հասանելիության իրավունքը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի բողոք ներկայացնել դատարան իր քաղաքացիական իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ: Սա սակայն բացարձակ իրավունք չէ և կարող է օրինաչափ նպատակ

հետապնդելու հիմնավորմամբ սահմանափակման ենթարկվել, եթե կիրառված միջոցները համաչափ են այդ նպատակին: Ամեն դեպքում սակայն սահմանափակումը չպետք է խարխլի այդ իրավունքի էությունը կամ Կոնվենցիայով նախատեսված այլ իրավունքներ խախտի

- Անձը, ում մեղադրանք է ներկայացվել, լրության և իր դեմ ցուցմունքներ տալուց հրաժարվելու իրավունք ունի
- Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մյուս կողմին հավասար հնարավորություններով հանդես գալ դատարանում, այնպես, որ մյուս կողմի համեմատ անբարենպաստ վիճակում չհայտնվի: Դատավարությունը պետք է մրցակցային լինի, ինչը նշանակում է, որ կողմերը պետք է քննվող ապացույցների վերաբերյալ տեղեկություն ունենան և հնարավորություն ունենան արդյունավետորեն մասնակցել դրանց քննությանը

Դատական որոշումները ներկայացվում են հրապարակայնորեն, դատական գործի քննության ու որոշման հրապարակման հրապարակայնության սահմանափակումներ ևս կան: Մասնավորապես, ինչպես նախատեսված է հոդված 6.1-ով մամուլի և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ դրա մի մասին՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա է պահանջում անչափահասների շահերի կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ եթե դա խիստ անհրաժեշտ է:

Զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչները քրեական գործով որպես մեղադրյալ ներգարվելուց հետո պետք է համարվեն անմեղ, քանի դեռ ապացուցված չէ տվյալ գործով նրանց մեղավորությունը: Սա նշանակում է, որ ապացուցման բեռը ընկած է մեղադրող կողմի՝ դատախազության վրա:

Զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչները, ում մեղադրանք է առաջադրվել, ունեն հետևյալ նվազագույն իրավունքները՝

- Տեղեկանալ իրեն հասկանալի լեզվով ներկայացված մեղադրանքի բնույթին ու մանրամասներին
- Ժամանակ և հարմարություններ պաշտպանությունը ապահովելու համար. Ժամանակի տևողությունը կախված է կոնկրետ գործի բարդությունից:

Պաշտպանները պետք է կանոնավոր և կոնֆիդենցիալ հանդիպումների հնարավորություն ունենան

- Ինքնուրույն կամ իր կողմից ընտրված փաստաբանի միջոցով պաշտպանություն իրականացնելու հնարավորություն: Դատարանը սահմանել է, որ ինքնուրույն պաշտպանությունը կազմակերպելը հնարավոր է սահմանափակման ենթարկվի, սակայն զինված ուժերի անձնակազմի ներկայացուցչի համար իրավական ներկայացուցիչ չապահովելը հանգեցնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի խախտման
- Առանց երրորդ անձանց մասնակցության փաստաբանի հետ գաղտնի խորհրդակցելու և զրուցելու հնարավորություն
- Իր դեմ ցուցմունքներ տված վկաներին հարցաքննելու իրավունք
- Անվճար թարգմանչական ծառայության իրավունք, եթե տվյալ անձը չի հասկանում դատավարության լեզուն

Զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչները, ովքեր չեն կարող իրենց միջոցների հաշվին պաշտպան վարձել, հնարավորություն ունեն դիմել անվճար իրավաբանական օգնության՝ հանրային պաշտպանի, եթե դատավարության արդյունավետությունը կախված է դրանից:

Բացի այդ, զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչները իրավունք ունեն պահանջել պատիժ ու պատասխանատվություն միայն բացառապես օրենքի հիման վրա: Սա նշանակում է, որ եթե կատարված արարքը այդ պահին հանցագործություն չի համարվել, ապա ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի դրա կատարման համար: Նմանապես, չպետք է նշանակվի ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել հանցագործության կատարման պահին:

Բացի այդ, արգելվում է կատարված մեկ արարքի համար երկու անգամ պատասխանատվության ենթարկելը: Օրինակ, զինված ուժերի անձնակազմը չի կարող նույն արարքի համար երկու անգամ պատասխանատվության ենթարկել և զինվորական դատարանների, և ընդհանուր իրավասության դատարանների կողմից:

### **Քրեական գործերով**

Արդար դատաքննության ընդհանուր սկզբունքները կիրառելի են քրեական համարվող դատավարության շրջանակում: Այն դեպքում, երբ կատարված

խախտումն ու իրականացվող քննությունը բնույթով կարգապահական է, ապա մոտեցումները տարբեր են:

Դատարանը սահմանել է, որ եթե զինճառայողի կողմից թույլ է տրվել զինված ուժերի կարգուկանոնի ապահովման խախտում, ապա կարելի է կիրառել ոչ թե քրեական պատասխանատվություն, այլ կարգապահական<sup>56</sup>:

Այն դեպքում, երբ զինված ուժերի անձնակազմին պատասխանատվության ենթարկելը իրականացվում է միայն զինվորական դատարանների կողմից, ապա բավարար երաշխիքներ պետք է նախատեսվեն զինվորական դատարանների անկախությունն ու անկողմնակալությունը ապահովելու համար: Դատախազությունը և հետաքննությունն իրականացնող մարմինները ամբողջությամբ պետք է առանձնացված լինեն պատասխանատվության հարցը որոշող մարմնից: Սա նշանակում է, որ դատավորների և դատախազների միջև հիերարխիա չպետք է լինի:

Զինված ուժերի անձնակազմի ներկայացուցչին, ում մեղադրանք է ներկայացվել, պետք է օգտվեն բոլոր այն երաշխիքներից, որոնք նախատեսված են սովորական քաղաքացիների համար:

### **Քաղաքացիական և այլ գործերով**

Եթե իրավահարաբերությունները քաղաքացիական ծառայողների միջև ծագել են աշխատանքային վեճից, ապա զինված ուժերի անձնակազմը հնարավոր է դուրս մնա հողված 6-ով նախատեսված պաշտպանության շրջանակից: Այնուհանդերձ, դատարանը սահմանել է նաև, որ հիմնավորված չէ, քաղաքացիական ծառայողների մոտ ծագած առօրյա աշխատանքային վեճերը, օրինակ աշխատավարձի հետ կապված, թույլտվություն ստանալու և նմանատիպ հարցերով, դուրս թողնել 6-րդ հողվածի պաշտպանության շրջանակից: Նման դեպքերում գործում է 6-րդ հողվածի կիրառման հավանականությունը: Եվ պետության վրա է մնում հակառակը պնդելու և հիմնավորելու պատասխանատվությունը:

### **Դատարանի մատչելիությունը**

Դատարանի մատչելիությունը արդար դատաքննության իրավունքի անբաժան տարրերից է: Անհատը պետք է հնարավորություն ունենա դիմելու դատարան՝ իր քա-

---

<sup>56</sup> Engel and Others v. Netherlands, op. cit., para. 82; Campbell and Fell v. UK, judgment of 28 June 1984, para. 68.

դաքացիական իրավունքի կամ պարտականության հարցը վճռելու համար: Այս իրավունքի արդյունավետ իրականացումը համապատասխան պարտականություն է դնում պետության վրա: Այդպիսի պարտականություններից կարող է լինել քաղաքացիական գործերով իրավական օգնության տրամադրումը: Պետությունն ազատ է իր հայեցողությամբ ձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն դատարանի մատչելիությունը, սակայն կարող են լինել նաև սահմանափակումներ, որպիսիք պետք է լինեն համաչափ և հետապնդեն իրավաչափ նպատակ: Դատարանի մատչելիության իրավունքը ներառում է ոչ միայն հայց հարուցելու իրավունքը, այլև վեճի կապակցությամբ վերջնական որոշում ստանալու իրավունքը: Վերջնական որոշումն իր հերթին պետք է պարտադիր ուժ ունենա և հնարավոր լինի իրականացնել: Եթե անձն իր քաղաքացիական իրավունքի իրականացման վերաբերյալ վերջնական դատական ակտ ունի, որը հնարավոր չէ իրականացնել, ապա խախտվում է դատարանի մատչելիության սկզբունքը: Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի<sup>57</sup> գործով Բուրդովի օգտին եղել է դատարանի վճիռ ռադիոակտիվ ճառագայթման ենթարկված լինելու համար հատուցում ստանալու վերաբերյալ, սակայն հատուցման վճարումը ուշացվել է: Պետության ֆինանսական դժվարությունները որպես նման հատուցումները տրամադրելու արդարացում երբեք ընդունելի չեն համարվում:

Վերջնական և իրացվելի որոշում ստանալու իրավունքը սերտորեն առնչվում է օրենքի գերակայության և իրավական որոշակիության սկզբունքների հետ:

### **Արդարացի լսումներ**

Յուրաքանչյուր գործով արդար դատաքննության իրականացումը դիտվում է ընթացակարգերի ամբողջության մեջ: Որոշ ոչ էական խախտումներ կարող են անտեսվել, երբ ընդհանուր ընթացակարգերն արդար են եղել, սակայն չի անտեսվի այն խախտումը, որը հանգեցրել է արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացմանը: Արդարացի լսումները դիտարկվում են հետևյալ հարցերի վերաբերությամբ՝ ապացույցների թույլատրելիություն, իր անձի դեմ ցուցմունքներ տալուց ազատ լինելու և լռելու իրավունք, կողմերի հավասարություն:

Ապացույցների թույլատրելիությունը առաջնային կարգով ներպետական օրենսդրությամբ կարգավորման ենթակա հարց է և դիտարկվում է դատական ընթացակարգերի՝ ընդհանուր առմամբ արդար լինելու լույսով:

Իր անձի դեմ ցուցմունք տալուց ազատ լինելու և լռելու իրավունքը էական է արդար դատաքննության համար: Սա նշանակում է, որ իշխանությունները պետք է

---

<sup>57</sup> Burdov v Russia, No 59498/00.



ապացույցներ ձեռք բերեն առանց անձի վրա ճնշում գործադրելու և իր կամքին հակառակ ցուցմունք տալուն հարկադրելու, ինչը կարող է ձախողել գործի արդար դատաքննության իրականացումը: Այս իրավունքը կհամարվի խախտված, եթե ոստիկանությունը օգտագործի գաղտնի գործակալների՝ անձից տեղեկություններ կորզելու համար: Օրինակ՝ ապացույցներ կորզելու նպատակով ոստիկանական գործակալի ներդրումը նույն բանտային խցում և հետագայում անձից գործակալի միջոցով ստացած տեղեկությունները որպես ապացույց դատարանում օգտագործելը ուղղակիորեն խախտում է լռելու իրավունքը<sup>58</sup>: Տվյալ դեպքում անձի ցուցմունքները չեն տրվել նրա նախաձեռնությամբ և կամքով, այլ արդյունք են ոստիկանական գաղտնի գործակալի հետևողական հարցադրումների և տեղեկություններ կորզելու ջանքերի, ինչը հոգեբանական ճնշում է անձի վրա, որն էլ ստիպել է վերջինիս իր կամքին հակառակ տեղեկություններ տրամադրել:

Լռելու իրավունքը բացարձակ իրավունք չէ, սակայն անձի լռությունը չի կարող նաև օգտագործվել նրա դեմ: Լռությունն անգամ որպես մեղքի անուղղակի ապացույց դիտելիս կխախտվի արդար դատաքննության իրավունքը: Առավել ևս արդարացի լսումների իրավունքը կխախտվի, եթե լռությունը հիմք համարվի անձին դատապարտելու համար:

Կողմերի հավասարությունը արդար դատաքննության իրավունքի հիմնարար տարրերից է, որը կիրառելի է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերով: Սա մեկնաբանվում է հետևյալ կերպ. յուրաքանչյուր կողմ պետք է ողջամիտ հնարավորություն ունենա ներկայացնելու իր գործը այնպիսի պայմաններում, որը նրան նվազ բարենպաստ վիճակում չի դնում հակառակ կողմի համեմատությամբ: Օրինակ՝ ապացույցների բացահայտման փուլում յուրաքանչյուր կողմ պետք է հնարավորություն ունենա իմանալու և իր մեկնաբանությունը կամ կարծիքը ներկայացնելու դատաքննությանը ներկայացված բոլոր ապացույցների վերաբերյալ:

Հրապարակային քննության իրավունքը և վճռի հրապարակման իրավունքը նույնպես արդար դատաքննության իրավունքի կարևոր տարրերն են, սակայն այս իրավունքները կարող են սահմանափակվել ներպետական օրենքով սահմանված որոշակի դեպքերում: Հրապարակային քննության իրավունքը ներառում է բանավոր լսումների անցկացման իրավունք՝ առնվազն մեկ դատական ատյանում: Քրեական գործերով մեղադրյալն իրավունք ունի ներկա լինել առաջին ատյանի դատարանում քննությանը, սակայն որոշ հանգամանքներում գործը կարող է քննվել նաև մեղադրյալի բացակայությամբ: Մյուս ատյաններում մեղադրյալի ներկայության անհրաժեշտու-

<sup>58</sup> Allan v UK, No48539/99, 05.11.02, para. 50.

թյան հարցը պայմանավորված է այդ աստիճաններում գործի քննության բնույթով ինչպես նաև նրանով, թե ինչպես են ներկայացված և պաշտպանված մեղադրյալի իրավունքները:

Ողջամիտ ժամկետում լսումների իրավունքը վերաբերում է ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական գործերին: Ժամանակի հաշվարկը սկսվում է վեճի հարուցման պահից և ավարտվում մինչև վերջնական որոշման օրինական ուժի մեջ մտնելը: Քրեական գործերով ժամկետը հաշվվում է սկսած այն պահից, երբ անձին մեղադրանք է ներկայացվել, կամ երբ նա ձերբակալվել է: Չկան հստակ սահմանված ժամկետներ, որոնք բոլոր դեպքերում ողջամիտ են համարվում, այլ յուրաքանչյուր դեպքում դրա տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործի բարդությունը, ինչ աստիճանի է յուրաքանչյուր կողմի մասնակցությունը ընթացակարգերի երկարաձգման հարցում, և դիմողի համար ինչ հարց է լուծվում: Ռոբինսն ընդդեմ Միացյալ Թագավորության<sup>59</sup> գործով ավելի քան 4 տարի տևած ծախսերի հատուցման հայցը պետական մարմնի պատճառով հետաձգման հիմքով համարվել է ողջամիտ ժամկետում արդարացի լսումների իրավունքի խախտում: Մեկ այլ գործով<sup>60</sup> քրեական դատավարությունը տևել է ավելի քան չորս տարի և ինը ամիս, ինչը դիտվել է որպես ողջամիտ ժամկետում արդարացի լսումների իրավունքի խախտում:

Օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանը պետք է օժտված լինի կատարման համար պարտադիր որոշումներ կայացնելու իրավունքով: Դատավորների անկախության հարցը քննելիս հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. դատավորի նշանակման եղանակը, որպես դատավոր գործելու ժամկետը, արտաքին ճնշումների գոյությունը, և այն, թե արդյոք դատարանը առերևույթ անկախ է: Դատարանը պետք է անկախ լինի ինչպես քննվող գործի կողմերից, այնպես էլ գործադիր իշխանության մարմնից:

Դատարանը պետք է վստահություն ներշնչի ինչպես կողմերին, այնպես էլ հասարակությանը: Դատարանի անկողմնակալությունը արտահայտվում է սուբյեկտիվ ու կանխակալ մոտեցումից կամ կարծիքից ազատ և օբյեկտիվ տեսանկյունից անաչառ լինելով:

## Անմեղության կանխավարկած

<sup>59</sup> Robbins v. UK, No 22410/93, 23.09.99, 1998 26 EHRR 527.

<sup>60</sup> Cherakrak v France, No 34075/96, 02.08.00.

Անմեղության կանխավարկածը նշանակում է, որ անձն անմեղ է հանցանքի կատարման մեջ այնքան ժամանակ, քանի դեռ նրա մեղքը հաստատված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով:

Անմեղության կանխավարկածը պահանջում է, որ դատարանի անդամները դատավարությունն սկսեն և իրականացնեն առանց մեղադրյալի վերաբերյալ կանխակալ կարծիքի, թե նա հանցանք է գործել: Հանցագործության կատարման ապացուցման բեռը և պարտականությունը կրում է մեղադրող կողմը՝ դատախազը, և որևէ չփարատված կասկած մեկնաբանվում է հօգուտ մեղադրյալի:

Արդար դատաքննության իրավունքը կխախտվի, եթե անձն առանց ապացույցների մեղավոր համարվի հանցագործության կատարման մեջ և դատապարտվի:

Անմեղության կանխավարկածը պահանջում է, որ դատավորները և դատախազները նույնիսկ մինչ դատավարությունն սկսելը ձեռնպահ մնան հանցագործության կատարման մեջ անձի մեղավորության մասին հրապարակային հայտարարություններ անելուց: Նույնիսկ այն դեպքում, երբ անձն ընդամենը ձերբակալվել է, և նրան դեռևս մեղադրանք չի առաջադրվել, անմեղության կանխավարկածը պետք է կաշկանդի այդ անձի մեղավորության վերաբերյալ հրապարակային արտահայտություններ անելուց:

### **Ջինվորական կարգապահությունը պետք է արդարացի լինի և ընթացակարգային երաշխիքները պետք է ապահովվեն**

Ջինված ուժերի առանձնահատկություններից մեկը, որով այն տարբերվում է այլ աշխատանքներից և ծառայություններից, վերաբերվում է զինվորական կարգապահությանը: Վերջինիս հիմնական նպատակը զինված ուժերի օպերացիոնալ արդյունավետության ապահովումն է: Ջինվորական կարգապահությունը բնութագրվում է վարքագծի կանոններին, զինվորական կարգավորումներին և վերադասների կողմից տրվող հրամաններից ենթարկվելու պարտականությամբ: Հետևաբար, զինվորական կարգապահությունը միտված է զինված ուժերի անձնակազմի գործողություններն ու վարքագիծը համակարգելուն և նրանց միջև կանոնակարգված հարաբերությունների ձևավորմանը: Ջինվորական կարգապահությունը կապված է մեծապես զինված ուժերի հիերարխիայի հետ և բխում է այն սկզբունքից, որ զինծառայողները պետք է ենթարկվեն վերադասների կողմից տրվող հրամաններին: Տրված հրամանին չենթարկվելը կամ գործող

զինվորական կանոնները չպահպանելը հանգեցնում են կարգապահական խախտման:

Զինվորական կարգապահության համակարգերը յուրաքանչյուր երկրում տարբեր են: Ինչը դիտարկվում է նաև որպես տվյալ պետության ազգային տարբերակիչ հատկանիշ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատել է, որ յուրաքանչյուր երկիր ինքն է որոշում զինվորական կարգապահության համակարգը և այդ առումով որոշ հայեցողական սահմանով է օժտված: Ըստ այդմ էլ, միայն այն գործողություններն ու վարքագիծը, որոնք սպառնում են զինվորական կարգապահությանը, աննտանգությանն ու կարգին կարող են բնութագրվել որպես կարգապահական խախտում: Իսկ դրա համար վրա հասնող պատասխանատվությունը պետք է խախտմանը համաչափ լինի: Խմբակային պատժամիջոցները, որոնց պարագայում պատասխանատվության է ենթարկվում նաև անձը, ով խախտմանը առնչություն չի ունեցել, արգելվում է:

Զինվորական կարգապահությունը պետք է նախատեսված լինի օրենսդրական կոնկրետ հիմքերով: Ներպետական օրենսդրությամբ պետք է նախատեսված լինի կարգապահական խախտման հասկացությունը և կոնկրետ խախտման համար վրա հասնող պատասխանատվության տեսակը: Պետք է օրենքով նախատեսվեն նաև պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը, պատժատեսակի տեսակն ու տևողությունը և պատասխանատվության ենթարկող իրավասու մարմինները:


Տուժողների շահերի լավագույն պաշտպանությունը պահանջում է, որ խախտումն արձանագրվելուց անմիջապես հետո ամբողջական քննություն իրականացվի:

**Քրեական պատասխանատվությունը որպես զինվորական հանցագործությունների կանխման միջոց և դրա ազդեցությունը<sup>61</sup>**

<sup>61</sup> «Կարգապահական քաղաքականության հիմնախնդիրները ՀՀ Զինված ուժերում», զեկույց պատրաստված Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ կողմից, 2014թ


Վերջին չորս տարիների զինվորական քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ զինվորական հանցագործությունների թիվը շարունակական աճ է ապրում, իսկ կարգապահական պատասխանատվության՝ տույժերի թիվը նվազում է:

**Գծապատկեր 1.** Զինվորական հանցագործությունների և կարգապահական տույժերի դինամիկան 2008-2012թթ.:



ՀՀ Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով՝ զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության բացակայության դեպքում, հարուցված գործերի թիվը 2012թվականին մոտ հինգ անգամ ավելացել է 2008թվականի համեմատությամբ: Գրեթե նույն չափով աճ է նկատվել նաև ՀՀ Քրեական օրենսգրքի 360-րդ, 375-րդ, 376-րդ հոդվածների առնչությամբ:

**Գծապատկեր 2.** ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով դատապարտված զինձառայողների թվի դինամիկան 2008-2012թթ.:




Ինչպես երևում է այս գծապատկերից, 359-րդ հոդվածով դատապարտվող անձանց թիվը տարեցտարի շարունակական աճ է արձանագրել:

2008թ. ցուցանիշի համեմատ,

- 2010թ. համապատասխան ցուցանիշն աճել էր ավելի քան **2 անգամ**,
- 2011թ.՝ ավելի քան **3 անգամ**,
- 2012թ.՝ **5 անգամ**:

ՀՀ Քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածով դատապարտումների թիվը ամենամեծն է նաև ընդհանուր զինվորական հանցագործությունների ցանկում: Սա բացատրվում է նրանով, որ այս հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զինվորական փոխհարաբերությունների կանոնակարգային կանոնների համար, ինչը պրակտիկայում տարածվում է գրեթե բոլոր այն տեսակի խախտումների վրա, որտեղ զինվորները խփել, քաշքշել կամ այլ կերպ անհանդուժողություն են դրսևորել միմյանց նկատմամբ:

**Գծապատկեր 2.** ՀՀ քրեական օրենսգրքի **360-րդ հոդվածով** դատապարտված զինծառայողների թվի դինամիկան 2008-2012թթ.:




360-րդ հոդվածով դատապարտվող անձանց թիվը նույնպես տարեցտարի շարունակական աճ է արձանագրել:

2008թ. ցուցանիշի համեմատ,


- 2010թ. համապատասխան ցուցանիշն աճել էր մոտ **2 անգամ**,
- 2011թ.՝ ավելի քան **4 անգամ**,
- 2012թ.՝ մոտ **3.5 անգամ**:

**Գծապատկեր 3.** ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածով դատապարտված զինձառայողների թվի դինամիկան 2008-2012թթ.:



Ինչպես տեսնում ենք, 375-րդ հոդվածի պարագայում նույնպես նկատվում է դատապարտված անձանց ցուցանիշի շարունակական աճ:

**Գծապատկեր 4.** ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածով դատապարտված զինձառայողների թվի դինամիկան 2008-2012թթ.:



Նման փոփոխության առանցքային պատճառն, ըստ հետազոտության արդյունքների (ինչը հաստատվել է հետազոտության գրեթե բոլոր մասնակիցների՝ զինձառայողներ, հրամանատարական կազմ, ռազմական ոստիկանություն, զինվորական դատախազների կողմից), ոչ թե զինված ուժերում հանցագործությունների տարածվածության շարունակական աճն է, այլ զինված ուժերում քրեական պատասխանատվության խստացման միջոցով կարգապահության ամրապնդման որդեգրված քաղաքականությունը: Եթե նախկինում դրսևորվող նմանատիպ վարքագծի համար այլ մոտեցում էր դրսևորվում, օրինակ, հաշվի էր առնվում խախտում թույլ տված ծառայողի անձը և այլ հանգամանքներ, որոնցով պայմանավորված վերանայվում էր “պատիժ” կիրառելու հարցը, հիմա օրենքով սահմանված պատասխանատվությունը կիրառվում է բոլորի նկատմամբ առանց բացառությունների:

Ընդհանուր առմամբ, զինված ուժերում արձանագրված զինվորական հանցագործությունների քանակական աճի վրա հիմնվելով կարգապահության ամրապնդման ներկայիս քաղաքականությունը հիմնվում է խախտումների համար խիստ պատասխանատվություն կիրառելու մոտեցման և ոչ թե հնարավոր խախտումների նախականիման և կանխարգելման կարողությունների և հնարավորությունների զարգացման վրա:

Նման քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը պայմանավորվել է զինված ուժերում կարգապահության հաստատման համար գործող այլ միջոցների



անարդյունավետությամբ կամ դրանց կիրառման պրակտիկայի, համապատասխան կարողությունների, հետևողականության և հնարավորության բացակայությամբ:

Այս է պատճառը, որ կարևորվել է քրեական պատասխանատվության զսպիչ ազդեցությունը, ըստ որի՝ բանակում կարգապահության պահպանման համար անհրաժեշտ է քրեական պատասխանատվությունը պահել, ինչը խստության մթնոլորտ ու կարգապահություն է ապահովում: Դատվելու վտանգը ստիպում է, որ կարգապահությունը բարձրանա, ինչով պայմանավորված էլ զինված ուժերում խախտման դեպքերը հիմա նվազել են:

Այնուամենայնիվ, ըստ դատախազների, ներկայիս քաղաքականությունը բացասական ազդեցություն է թողնում զինված ուժերի գործունեության արդյունավետության վրա, քանի որ քրեական պատասխանատվության հետևանքով որակյալ կադրերը հեռանում են:

Բացի այդ, խախտվում են նաև զինծառայողների իրավունքները (մասնավորապես արդար դատաքննության իրավունք), երբ պատշաճ գնահատականի չեն արժանանում խախտման վերաբերյալ այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են խախտման դրդապատճառը, վայրը, ժամը, հետևանքը: Արդյունքում, զինված ուժերում պարտադիր ծառայություն անցած զինծառայողների մի մասը գորացրվում է հանցագործության համար դատապարտված անձի կարգավիճակով, ոչ միայն այն պատճառով, որ թույլ է տվել խախտում, այլ նաև այն պատճառով, որ զինված ուժերում խախտումների կանխարգելման/վերահսկողության մեխանիզմները պատշաճ կարգով չեն գործել, հաճախ չի պահպանվել դատավարության կարգը և այլն:

Հատկապես սպաների նկատմամբ վերջին շրջանում խստացված մոտեցումը դատախազները համարում են չարդարացված: Նրանց պնդմամբ, բանակում կարգապահության ամրապնդման և հանցավորության մակարդակի նվազեցման համար անհրաժեշտ է ոչ թե պատիժների խստացում, այլ՝ կադրային խնդիրների լուծում. սպայական կազմի պատրաստվածության բարձրացում և ուժեղացում: Ավելին, ներկայումս սպաների նկատմամբ տարվող խիստ պատժողական քաղաքականությունը համարում են ոչ արդյունավետ, քանի որ նման խստությունը դրդում է կրկնահանցագործության:

## **Կարգապահական պատասխանատվությունը որպես զինված ուժերում կարգապահության ամրապնդման միջոց և դրա ազդեցությունը**

ՀՀ Ձինված ուժերում կարգապահական պատասխանատվությունն ընկալվում է որպես “պատիժ” և դրա կիրառելիության արդյունավետությունը գնահատվում է բացառապես այն ենթատեքստով, թե որքանով է այդ պատասխանատվությունը՝ որպես պատիժ, խիստ և որքանով կարող է հանգեցնել զինծառայողների կողմից նմանատիպ խախտումների կանխարգելմանը:

2012թվականին ընդունված “Ձինված ուժերի կարգապահական կանոնագրքով” սահմանված ոչ բոլոր կարգապահական տույժերի կիրառումն է ներկայումս հնարավոր կամ արդյունավետ: Սահմանված 10 օրից մինչև մեկ ամիս ժամկետով կարգապահական վաշտ ուղարկելու կարգապահական տույժը բոլոր գորամասերում չէ, որ հնարավոր է իրականացնել, քանի որ կարգապահական վաշտեր ձևավորված են միայն Երևանում և Ստեփանակերտում<sup>62</sup>:

Միաժամանակ կարգապահական վաշտ տեղափոխելը՝ որպես տույժ, զինված ուժերի անձնակազմի կողմից քիչ արդյունավետ է գնահատվում. ի տարբերություն նախկինում գործող մեկուսացմանը, այս դեպքում վաշտում անցկացրած օրերը ծառայության ընդհանուր ժամկետին չի ավելանում և փաստացի նվազ զսպող դեր է թողնում զինվորի կարգապահության վրա: Սահմանված կարգապահական տույժերը ընդհանուր առմամբ քիչ արդյունավետ են գնահատվել, քանի որ նկատողությունը կամ խիստ նկատողությունը որևէ ազդեցություն չի ունենում զինծառայողների վրա և նպատակին չի ծառայում: Մեկուսացման՝ որպես տույժ, բացակայության պայմաններում համեմատաբար խիստ տույժ է համարվում արձակուրդի տրամադրման հետաձգումը կամ հերթական արձակուրդից զրկելը:


Առավել ազդեցիկ կարգապահական պատասխանատվություն է դիտարկվել Կարգապահական կանոնագրքով նախատեսված «այլ գորանոցային վիճակի բերել» տույժը, որն ինչ-որ չափով այլընտրանք է մեկուսացմանը:

Այնուամենայնիվ հետաքրքրական է, որ հետազոտության ընթացքում կարգապահական տույժերի քանակական տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ զինված ուժերում թե Կարգապահական կանոնագրքի ընդունումից առաջ և թե հետո ամենահաճախ կիրառվող կարգապահական տույժը նկատողությունն է, իսկ

<sup>62</sup> Այս տվյալը համապատասխանում է 2013թվականի նոյեմբեր ամիսն առկա վիճակին:

այնուհետ՝ խիստ նկատողությունը: Պետք է նշել, որ Կարգապահական կանոնագրքով մոտ 13 տեսակի կարգապահական խախտումների համար նախատեսվում է նկատողություն կամ խիստ նկատողություն, և այս հանգամանքը ևս ազդեցություն է ունենում տվյալ տեսակի կարգապահական տույժի հաճախ կիրառելիության վրա:

**Գծապատկեր 1.** 2008-2012թթ. ՀՀ զինված ուժերում առավել տարածված կարգապահական տույժերի կիրառության դինամիկան:



Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել նաև, որ զինված ուժերում ժամկետային զինձառայողների կողմից կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան կայացած չէ և գրեթե չի գործում: Մի դեպքում բողոքարկումը դիտարկվել է ավելի բացասական հետևանք առաջացնող միջոցառում, երբ տույժի մասին որոշումը բողոքարկող զինձառայողներին այնուհետ ավելի խիստ են վերաբերում: Մյուս դեպքում էլ նույնիսկ, եթե դա չի առաջացնում վերաբերմունքի փոփոխություն բացասական առումով, նշանակված կարգապահական տույժի փոփոխության որևէ կերպ չի հանգեցնում:

Չկայացած պրակտիկայի մեկ այլ գործոն է նաև իրավական իրազեկվածության ցածր մակարդակը. զինձառայողների մեծ մասը տեղյակ չէ այն մասին, որ

կարգապահական տույժերը տրվում են գրավոր հրամաններով և իրենք ունեն դրանց հետ ծանոթանալու ու բողոքարկման իրավունք: Այն քիչ թվով զինծառայողները, որոնք տեղյակ են եղել գրավոր հրամանների առկայության փաստին, անհմաստ են համարել նույնիսկ դրանց բովանդակությանը ծանոթանալը:

Իրենք՝ ժամկետային զինծառայողները, բողոքների բացակայությունը բացատրել են դրա ոչ արդյունավետությամբ և առավել խիստ պատիժների ենթարկվելուց խուսափելու ցանկությամբ:

Սա է պատճառը, որ բողոքարկման ֆորմալ մեխանիզմների փոխարեն զինծառայողները նախընտրում են որոշման փոփոխության վրա ազդել “արտաքին կապերի” միջոցով:

### **Զինված ուժերում «ոչ ֆորմալ պատիժների» կիրառումը և դրանց ազդեցությունը**

Զինված ուժերում տեղի ունեցող խախտումների դեմ պայքարի իրավական մեխանիզմներից բացի, խախտումների կանխարգելման վրա ազդեցություն ունեն նաև “ոչ ֆորմալ պատիժները”: Այս պատիժների կիրառումն իրականացվում է թե՛ հենց զինվորների, թե՛ հրամանատարության կողմից: Թեև, ըստ հետազոտության արդյունքների մասնակիցների, նման պատիժների տարածվածությունը սկսել է նվազել (օրինակ՝ նվաստացնող աշխատանքի պրակտիկայի, կոլեկտիվ պատիժների և ստորև ներկայացվող այլ տեսակի պատիժների), այնուամենայնիվ, արդյունավետության տեսանկյունից, դրանք դեռևս էական նշանակություն են ունենում խախտումների կանխարգելման վրա:

Ըստ ժամկետային զինծառայողների, նախկինի համեմատ նվազել է “ոչ ֆորմալ այնպիսի պատժի” կիրառությունը, ինչպիսին զինվորին արժանապատվությունը նվաստացնող աշխատանք հանձնարարելն էր: Պատճառն այն է, որ հիմա սանհանգույցի ընդհանուր մաքրությունն ապահովելու հիմնական պատասխանատվությունը կրում են վարձու աշխատողները: Զինվորները սահմանափակվում են “իրենց տարածքում” մաքրություն անելու պարտավորությամբ:

Թեև սանհանգույցի մաքրությամբ զբաղվում են ոչ զինծառայողները, սակայն որոշ զորամասերում սանհանգույցի հարակից տարածքը ևս դիտարկվում է որպես

անարգված վայր՝ «գառլախ»<sup>63</sup> տարածք, որի մաքրությունը համարվում է նվաստացուցիչ և դիտարկվում որպես «ոչ ֆորմալ» պատիժ:

Հատկանշական է, որ նվաստացուցիչ աշխատանքի՝ որպես “ոչ ֆորմալ պատժի” պրակտիկան տարբերվում է ըստ տվյալ գորամասում ներդրված մշակույթի և “բարքերի”: Եթե որոշ գորամասերում, օրինակ, ծխախոտի մնացուկները հավաքելը դիտարկվում է որպես նորմալ, «ոչ դատապարտելի» երևույթ, ապա մի շարք գորամասերում այս աշխատանքը դեռ պարսավելի է, զինվորի պիտակավորման ռիսկ ունեցող: Սա պայմանավորված է տվյալ գորամասի հրամանատարական կազմի վարքագծով: Տարբեր հարցվողներ մատնանաշել են, որ հրամանատարի սեփական վարքագիծը զինված ուժերում նման երևույթների վերացման հիմնական երաշխիքն է:

Որպես “ոչ ֆորմալ պատիժ”, բավականին արդյունավետ է համարվել ՀՀ զինված ուժերում տարածում ունեցող կոլեկտիվ պատիժների կիրառության պրակտիկան, երբ անձի կատարած արարքի համար պատժվում էր զինվորական կոլեկտիվը: Այս պատիժներն ազդեցիկ էին այն առումով, որ պատժված կոլեկտիվը բարոյական ճնշում էր գործադրում կարգազանց զինձառայողի վրա: Սակայն, ինչպես նշել են սպաները, կոլեկտիվ պատիժների պրակտիկան աստիճանաբար դուրս է մղվում:

Զինձառայողների կողմից “ոչ ֆորմալ պատժի” տեսակների շարքում ներկայացվել է նաև շարքի դիմաց զինձառայողին պարսավելը: Հետազոտության ընթացքում ժամկետային զինձառայողները հաճախ են նշել այն մասին, որ զգուշացել են այս կամ այն խախտումը կատարելուց՝ ձառայակիցների շարքի առջև քննադատության և հրապարակային ամոթանքի չարժանանալու համար:

---

<sup>63</sup> Արձակագիր Հովհաննես Բշխանյանը հետևյալ կերպ է նկարագրում «գառլախ» վայրերի հետ կապված սահմանափակումները. ««Գառլախ» բառը թուրքերենից է եկել, նշանակում է՝ կեղտոտ, անարգված, փչացած: Հայկական բանակում գառլախը նույն անարգվածն է, և գորամասերն ունեն իրենց գառլախ տարածքները, որին դիպչողն ինքը գառլախվում է, դառնում անարգված: Գառլախ տարածքն էն տեղն է, որ ինչ-որ ժամանակ օգտագործվել է որպես պետքերը հոգալու տեղ, որտեղ ծառի տակ միզել են կամ կղել: Գործող զուգարանն էլ է գառլախ տարածք: Գառլախում կարելի է քայլել, բայց ինչ-որ բան վերցնելը տաբու է: Գառլախը սեփական կամ ուրիշի կեղտին դիպչելն է կամ կեղտի հետ առնչություն ունեցող տարածքում որևէ առարկայի դիպչելը: Եթե որևէ մեկը գառլախ տարածքում ընկած բան վերցնի, ինքն էլ է գառլախվում ու գորքն իրան ընդունում է որպես գառլախ: Ոչ ոք իրեն՝ գառլախին չի կպնում, ոչ ոք հետը հաց չի ուտում, կարծես թե գառլախվածն էլ է համարվում գառլախ տարածք ու վրան կպցրած է «անարգված է» ցուցանակը: Ու կար կատակ՝ ասում էին, որ եթե ընկնես զուգարան, չհեղնես. գառլախվել ես: Բայց եթե գառլախ տարածքում ընկնում է սրբության (մայր, հայր, քույր, եղբայր, սիրած աղջիկ, կին, երեխա) նկարը կամ նամակը, դրանց տերը պարտավոր է ընկած իրը վերցնել: Այս դեպքում սուրբ իրը վերցնողը գառլախ չի համարվում, հակառակը, եթե չվերցնի, ինքը սրբապիղծ կհամարվի, քանի որ իր սրբության նկարը թողել է գառլախ տարածքում:

<http://hovic.livejournal.com/tag/Գառլախ>:

Նույն կերպ զսպիչ և կանխարգելիչ միջոց է այլ զինծառայողների ներկայությամբ դատական ակտի հրապարակումն ու կալանավորումը, ինչպես նաև «ծնող կանչելու» դպրոցում կիրառվող միջոցը՝ դիտարկվելով որպես ամենազդեցիկը:

Ժամկետային զինծառայողները նշել են նաև “ոչ ֆորմալ պատժի” այնպիսի միջոցի մասին, ինչպիսին ծեծն է: Այնուամենայնիվ, մտահոգիչ է ոչ միայն ծեծի հանգամանքը, այլ զինծառայողների վերաբերմունքն այդ երևույթին. զինծառայողների մի մասը ծեծը համարում է ընդունելի և նորմալ: Բացի այդ, այն դրսևորվում է ոչ թե կոնկրետ զինվորի կողմից դրսևորված իրավախախտ վարքագծի կապակցությամբ, այլ նաև այնպիսի դեպքերում, երբ չկա որևէ խախտում, սակայն “ցուցադրաբար” ուժի գործադրումը կիրառվում է ընդհանուր “կանխարգելիչ” ազդեցություն թողնելու նպատակով:

**ԹԵՄԱ 6. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՒ  
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ, ԲՆԱԿԱՐԱՆԻ ԵՎ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

**Իրավունքի հասկացությունը<sup>64</sup>**

Անձի անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը նախատեսված է Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 8-րդ հոդվածով:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

հՀ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է այն պայմանները, որոնց առկայությամբ թույլատրվում է 1-ին կետում թվարկված իրավունքների սահմանափակումները: Դրանում նշվում են, որ «չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Դատարանի կողմից կողմից ձևավորված նախադեպային իրավունքից բխում է, որ անձնական և ընտանեկան կյանքը «հարգելու» իրավունք ասելով չպետք է ենթադրել միայն պետության կողմից պասիվ վարքագծի դրսևորում, այսինքն՝ ձեռնպահ մնալ անձնական և ընտանեկան կյանքին միջամտելուց: Քանի որ «հարգանք» ասելով

<sup>64</sup> «Չինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ձեռնարկ, Մոդուլ 6

պետք է հասկանալ նաև անձի՝ պետության կողմից պաշտպանվելու պոզիտիվ իրավունքը:

Անձանց ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը ապահովելու համար գործում է պետությունների պոզիտիվ պարտավորությունները<sup>65</sup>: Ինչը նախատեսված է նաև 8-րդ հոդվածի 2-րդ կետում, որում ասվում է. «Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն իրավունքի իրականացմանը ...»:

### **Անձնական կյանք**

Եվրոպական դատարանի պրակտիկան վկայում է, որ կոնվենցիայի 8-րդ հոդվածում նշված «անձնական կյանք» հասկացությունն այն աստիճան տարրորոնակ է, որ «դատարանը հնարավոր չի համարում կամ էլ անհրաժեշտ՝ փորձելու տալ սպառնիչ բնորոշում «անձնական կյանք» հասկացությանը...»:<sup>66</sup>

Այդուհանդերձ, ինչպես հանձնաժողովը, այնպես էլ դատարանը փորձել են բնութագրել «անձնական կյանք» հասկացությունը: Հանձնաժողովն իր որոշման մեջ նշել է. «Մասնավոր կյանքը հարգելու իրավունքը հանդիսանում է անձնական կյանքին չմիջամտելու իրավունք, իրավունք՝ ապրել այնպես, ինչպես ցանկալի է, առանց անձնական կյանքի մանրամասերը հրապարակելու ..., սակայն մասնավոր կյանքի իրավունքը դրանով չի սպառվում: Այն որոշակի առումով ներառում է նաև այլ մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու և պահպանելու իրավունքը, հատկապես մարդու անհատականության զարգացման և իրացման համար զգացմունքային բնագավառում»:

«Անձնական կյանք» հասկացության վերաբերյալ դատարանն արդեն հիշատակված Նիմիեցյան ընդդեմ Գերմանիայի գործով վճռում նշում է, որ անթույլատրելի կլինեն սահմանափակել անձնական կյանքի հասկացությունը «ներքին շրջանակով», որով կարող է յուրաքանչյուրն ապրել իր սեփական անձնական կյանքով, ինչպիսին ինքն է նախընտրում, և այդտեղից բացառել ամբողջությամբ այդ շրջանակի մեջ չմտնող արտաքին աշխարհը: Անձնական կյանքի հարգանքը պետք է նաև ներառի որոշակի աստիճանով այլ անձանց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու իրավունքը:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքների արդյունավետ պաշտպանության համար կարևոր է, որպեսզի ազգային իրավակիրառող մարմիններ

<sup>65</sup> X and Y v. the Netherlands, Judgment of 26 March 1985.  
Costello-Roberts v. the United Kingdom, Judgment of 25 March 1983.  
<sup>66</sup> Niemietz v. Germany, Judgment of 16 December 1992.



րը կարողանան հստակ սահմանազատել այն փոխհարաբերությունները, որոնք կազմում են «անձնական կյանք» հասկացության բաղադրիչները:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածը սահմանազատում է «անձնական կյանք» և «ընտանեկան կյանք» հասկացությունները: Սրանով պայմանավորված՝ մարդկանց միջև գոյություն ունեցող որոշ փոխհարաբերություններ, որոնք չեն ներառվում 8-րդ հոդվածով նախատեսված և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված «ընտանեկան կյանք» հասկացության շրջանակում, Եվրոպական դատարանի կողմից դիտարկվում են որպես անձնական կյանքի բաղկացուցիչ մաս և, նրա կարծիքով, ենթակա են դատական պաշտպանության:

Եվրոպական դատարանի պրակտիկայի համաձայն՝ դրանց թվին կարելի է դասել դեռևս չամուսնացած անձանց միջև փոխհարաբերությունները, սեռական կյանքին առնչվող, այդ թվում՝ որդեգրված երեխաների և նրանց որդեգրողների միջև փոխհարաբերությունները և այլ հարաբերություններ:

### **Ընտանեկան կյանք**

Սպառիչ սահմանված չեն այն հարաբերությունները, որոնք ընկնում են ընտանեկան կյանք եզրույթի պաշտպանության ներքո: Ինչի մասին է վկայում նաև Դատարանի նախադեպերի ուսումնասիրությունը:

Եթե վերլուծենք նախադեպային իրավունքում ամրագրված դիրքորոշումները, կարող ենք եզրակացնել, որ դատարանը չի ձգտում սպառիչ կերպով սահմանել, թե որ կոնկրետ փոխհարաբերություններն են մտնում «ընտանեկան կյանք» հասկացության շրջանակի մեջ: Օրինակ՝ Մարքսն ընդդեմ Բելգիայի<sup>67</sup> գործով դատարանը հաստատեց, որ «ընտանեկան կյանքը» 8-րդ հոդվածի իմաստով ներառում է մոտ ազգականների միջև հարաբերությունները, օրինակ՝ մի կողմից՝ պապի ու տատի, մյուս կողմից՝ թոռների միջև փոխհարաբերությունները, քանի որ նման ազգականները կարող են կարևոր դեր խաղալ ընտանեկան կյանքում, իսկ մեկ այլ գործով տվեց միանգամայն լայն մեկնաբանություն և ընտանեկան կյանքի ճանաչման մեջ ներառեց այնպիսի հարաբերություն, ինչպիսին է փաստացի հոր և երեխայի միջև հարաբերությունը, որի մոր հետ հայրը դադարեցրել էր համատեղ բնակությունը դեռևս երեխայի ծնվելուց առաջ: Այսպես՝ Բուգհանեմին ընդդեմ Ֆրանսիայի<sup>68</sup> գործով դատարանը, ընդունելով ֆրանսիական կառավարության կասկածն այն մասին, թե արդյոք գոյություն ունեցել է ընտանեկան կապ պարոն Բուգհանեմիի և տիկին Ս-ի միջև, զուրկ չեն հիմքերից, քանի որ նրանք իրենց երեխայի ծննդից շատ ամիսներ առաջ այլևս համատեղ չէին ապ-

<sup>67</sup> Marckx v. Belgium, Judgment of 13 June 1979.

<sup>68</sup> Boughanemi v. France, Judgment of 24 April 1996.

րում, նշեց, որ «ընտանեկան կյանք» հասկացության մեջ, որի վրա հիմնվում է 8-րդ հոդվածը, ընդգրկվում են նաև կապերը, որոնք գոյություն ունեն անձի և նրա երեխայի միջև, նույնիսկ եթե հայրը և մայրը համատեղ չեն բնակվում, և անկախ նրանից՝ երեխան ծնվել է ամուսնությունից թե արտամուսնական կապից:

Դատարանը, ընդունելով, որ ծնողների և երեխաների միասին լինելն ընտանեկան կյանքի հիմքն է կազմում, սահմանում է, որ հարազատ քույրերը և եղբայրները կարող են իրենց մեջ հարաբերությունների շրջանակներում ունենալ ընտանեկան կյանքի իրավունք՝ անկախ երեխաների և ծնողների միջև հարաբերությունից: Ավելին, դատարանի կարծիքով, նույնիսկ այն ժամանակ, երբ երեխան վերցվում է պետական խնամքի տակ, ապա այդ փաստով բնական ընտանեկան հարաբերությունները չեն դադարում<sup>69</sup>: Ներկայումս նման հարաբերությունների թվին ավելացել են նաև նույն սեռի անձանց միջև ամուսնության գրանցման, ինչպես նաև նման «ընտանիքների» կողմից երեխաների որդեգրման հետ կապված իրավաբանական խնդիրները:

Ինչպես վկայում են դատարանի կողմից քննության առնված Բերեհաբն ընդդեմ Նիդեռլանդների<sup>70</sup> գործի տվյալները, այն դեպքում, երբ վիճարկվում է այն հարցը, թե ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի նկատմամբ միջամտությունն իրավագործ է եղել, թե ոչ, դատարանն արյունակցական կապը դիտում է որպես մեկնարկային նախապայման ընտանեկան կյանքի առկայությունը հաստատելու համար: Անհրաժեշտ է նշել, որ դատարանի նախադեպային իրավունքն ընդունում է, որ փոքրահասակ երեխաներն ունեն 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքներ իրենց ծնողների նկատմամբ: Ընդ որում՝ դատարանը նույնիսկ չի ընդունում, որ փոքրահասակ երեխաների և նրանց ծնողների համատեղ բնակությունն անհրաժեշտ պայման է նրանց միջև «ընտանեկան կյանքի» առկայությունը հաստատելու համար:

Դատարանը պնդում է, որ որդեգրողների և որդեգրվածների միջև հարաբերությունները ևս սկզբունքնորեն պետք է պաշտպանվեն կոնվենցիայի 8-րդ հոդվածի դրույթներով: Մինևույն ժամանակ, երեխայի և նրա որդեգրողների միջև կապերն ընտանեկան կյանք համարելու համար կարևորվում են այն հարցերը, թե արդյոք երեխան սերտ անձնական կապեր ունեցել է իր իսկական ծնողների հետ, և թե երեխան որդեգրող ընտանիքի խնամքի տակ որքան ժամանակ է գտնվում: Որքան երկար է երեխան մնացել որդեգրած ծնողների պաշտպանության ներքո, այնքան առավել հավանական է, որ դատարանը կճանաչի ընտանեկան կապերի առկայությունը:

<sup>69</sup> Olsson v. Sweden, Judgment of 24 March 1988.

<sup>70</sup> Berrehab v. the Netherlands, Judgment of 21 June 1988.

Եվրոպական դատարանի կարծիքով՝ «ընտանեկան կյանք» հասկացության մեջ կարող են ներառվել նաև քեռու, հորեղբոր, մորաքրոջ, հորաքրոջ և նրանց եղբորդիների կամ քրոջորդիների միջև փոխհարաբերությունները, եթե գոյություն ունեն սերտ անձնական կապերի առկայության վերաբերյալ կոնկրետ ապացույցներ:

Ընդունված մոտեցման համաձայն ամուսնական կապի խզման դեպքում չեն դադարում այդ կապի արդյունքում ստեղծված այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն ծնողների և նրանց երեխաների միջև: Դատարանի կարծիքով՝ ընտանեկան կյանքը չի ավարտվում նաև այն դեպքում, երբ ամուսիններն այլևս միասին չեն բնակվում<sup>71</sup>: Ընտանեկան կյանքը չի ավարտվում նաև այն դեպքում, երբ երեխային խնամակալության հանձնելու վերաբերյալ որոշում է ընդունվում<sup>72</sup>:

### **Բնակարանի անձեռնմխելիությունը**

«Բնակարան» բառը լայն մեկնաբանության է ենթարկվում, ըստ որի բնակարան կարող են համարվել ինչպես բնակության համար նախատեսված, այնպես էլ այդպիսի նպատակային նշանակություն չունեցող ծառայողական շինությունները, որտեղ անձը կարող է իրականացնել որոշակի մասնագիտական և գործարար գործունեություն: Դիտարկվող իրավունքը չի ենթադրում, որ անձը կամ անձինք պարտադիր պետք է բնակվեն տվյալ բնակարանում<sup>73</sup>: Որոշ դեպքերում՝ առանձին անձի և հասարակության շահերը հավասարակշռելու պահանջի առկայությամբ, երբ սեփականատերը սեփականության հրատապ անհրաժեշտություն չունի, իսկ վարձակալի շահերը պաշտպանության կարիք ունեն, այս իրավունքի գործնական պաշտպանությունը չի պահանջում, որ յուրաքանչյուր ընտանիք ունենա առանձին տուն, և որ տան տերը ցանկացած դեպքում իրավունք ունենա իրեն վերադարձնելու վարձով տրված սեփականությունը<sup>74</sup>: Բնակարանի հարգման իրավունքին սերտորեն առնչվում են բնակության վայրի խուզարկություն և բռնագրավում իրականացնելու հետ կապված հարցերը: Խուզարկության իրավաչափության տեսակետից կարևոր է, թե խուզարկությունը կանոնակարգող օրենքը պարունակում է արդյոք հետևյալ դրույթները, թե ոչ<sup>75</sup>.

- Խուզարկություններ կարող են անցկացվել բնակարաններում և անշարժ այլ օբյեկտներում միայն այն դեպքում, եթե հիմնավոր կասկած կա, որ այնտեղ ինչ-որ բան է թաքնված, ինչպես առարկաներ, այնպես էլ այն տեսակի արժեքներ, որոնք պետք է բռնագրավվեն, կամ որ կարող են ճանաչվել որպես հանցագործության կատարման ապացույցներ:

<sup>71</sup> Berrehab v. the Netherlands, Judgment of 21 June 1988.

<sup>72</sup> Margareta and Roger Andersson v. Sweden, Judgment of 25 February 1992.

<sup>73</sup> The Gillow v. the United Kingdom, Judgment of 24 November 1986.

<sup>74</sup> Velosa Barreto v. Portugal, Judgment of 21 November 1995.

<sup>75</sup> Camenzind v. Switzerland, Judgment of 16 December 1997.

- Խուզարկություն չի կարող անցկացվել կիրակի օրը, հասարակական տոների ժամանակ կամ գիշերը, «բացառությամբ հատուկ դեպքերի կամ էլ վտանգի սպանալիքի դեպքում»:

- Խուզարկության սկզբում այն իրականացնող պաշտոնատար անձինք պարտավոր են փաստաթղթերով հաստատել իրենց լիազորությունները և իրազեկել շինությունն զբաղեցնող անձին խուզարկության նպատակների մասին, ինչպես նաև ապահովել այդ անձի, նրա մտերիմների կամ այլ ներկայացուցիչների ներկայությունը խուզարկությունն իրականացնելիս:

- Սկզբունքորեն պարտադիր է նաև իշխանության պաշտոնատար անձանց ներկայությունը՝ երաշխավորելու համար, որ խուզարկությունն անցկացվում է առաջադրված խնդրի ստույգ համապատասխանությամբ:

- Խուզարկությունն անցկացնելու մասին արձանագրությունը պետք է ձևակերպվի անմիջապես՝ խուզարկությանը մասնակցած անձանց ներկայությամբ: Քաղաքացիների խնդրանքով նրանց պետք է տրամադրվի խուզարկության անցկացման իրավունք տվող փաստաթղթերի պատճենները և խուզարկություն անցկացնելու արձանագրությունը:

- Փաստաթղթերի բռնագրավում իրականացնելու համար պետք է լինեն հատուկ սահմանափակումներ:

- Կասկածյալն իրավունք ունի, որ նրա փաստաբանը մասնակցի խուզարկությանը ցանկացած հանգամանքում:

- Ցանկացած անձ, որին վնաս են հասցրել «հետաքննության միջոցները», կարող է զանգատվել դատարան:

- «Կասկածյալը», որի կարծիքով ինքն անհիմն կերպով է քննության կանչվել, կարող է պահանջել համապատասխան փոխհատուցում՝ կրած վնասի դիմաց:

Որպես կանոն, խուզարկությունը պետք է անցկացվի դատարանի որոշման հիման վրա: Այդ կանոնից պետության օրենսդրությամբ նախատեսված շեղումները կարող են կոնվենցիայի 8-րդ հոդվածի հետ համատեղելի լինել միայն այն դեպքում, եթե նման իրավիճակը կարգավորող օրենքները, որոնք սահմանում են խուզարկության անցկացման կարգը, նախատեսում են անձի պաշտպանության բավարար երաշխիքներ:

### **Նամակագրության գաղտնիություն**

Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է նաև անձի նամակագրության պաշտպանության իրավունքը: Վերջինս անձի՝ մյուսների հետ առանց որևէ միջամ-

տության և գրաքննության հաղորդակցության մեջ մտնելն է: Դատարանի ձևավորած նախադեպային իրավունքի համաձայն՝ նամակագրության պաշտպանությունը վերաբերում է հաղորդակցության նշանակությանը և մեթոդներին, այլ ոչ թե բովանդակությանը: Հետևաբար, եթե խախտվել է անձի նամակագրության գաղտնիությունը, ապա անհրաժեշտություն չկա քննության առնել հարցն ըստ էության, այսինքն՝ արդյո՞ք տեղի է ունեցել անձնական կյանքի խախտում, թե՞ ոչ<sup>76</sup>:

«Նամակագրություն» հասկացությունը, բացի գրավոր հաղորդակցվելու ավանդական ձևերից, ինչպիսիք են փոստը, հեռագիրը, հեռախոսագրույցը, ներառում է նաև կապի ժամանակակից մյուս ձևերը՝ ֆաքսը և էլեկտրոնային փոստը: Քլասը և այլք ընդդեմ Գերմանիայի<sup>77</sup> գործով վճռում դատարանը, վերլուծելով հեռախոսագրույցների գաղտնի լսումն ու ձայնագրումը, նշում է, որ «թեև հեռախոսագրույցները կոնկրետ նշված չեն 8-րդ հոդվածի 1-ին կետում, դատարանը, ինչպես և Հանձնաժողովը, գտնում է, որ նման գրույցները ներառվում են այդ հոդվածում բովանդակվող «անձնական կյանք» և «նամակագրություն» հասկացությունների մեջ»:

Այս իրավունքի միջամտություն կհամարվի նաև մասնավոր հեռախոսագրույցների գաղտնի լսումը, անկախ դրանց բովանդակությունից, նույնիսկ եթե դրանք առնչվում են հասարակական շահին<sup>78</sup>: Սակայն ահաբեկչական հանցագործությունների հետ կապված իրավիճակներում այս իրավունքի սահմանափակման համար ավելի լայն հնարավորություններ են տրվում պետությանը՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված իրավունքների, ազատությունների և շահերի գործուն ու համարժեք պաշտպանության նպատակով<sup>79</sup>:

Թեև բանտարկյալների անձնական կյանքին ու նամակագրության իրավունքին միջամտությունը նույն կերպ երաշխավորվում է, սակայն որոշակի դեպքերում՝ ազատազրկման վայրերում անկարգությունների և հանցագործությունների կանխման նպատակով, բանտարկյալների նամակագրության իրավունքի ավելի խիստ սահմանափակումը նույնպես կարող է արդարացված համարվել:

### **Անձի անձեռնմխելիությունը**

Անձի անձեռնմխելիությունը դիտարկվող իրավունքի շրջանակներում հանգում է նրա բարոյական և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանությանը: Այս ոլորտին են վերաբերում պետության պոզիտիվ պարտավորությունները, որոնք վերաբերում են այնպիսի իրավական և ընթացակարգային պայմանների ապա-

<sup>76</sup> A. v. France, Judgment of 23 November 1993.

<sup>77</sup> Klass and Others v. Germany, Judgment of 6 September 1978.

<sup>78</sup> A. v. France, Judgment of 23 November 1993, Halford v. United Kingdom, Judgment of 25 June 1997.

<sup>79</sup> Klass and Others v. Germany, Judgment of 6 September 1978, 42, 48 և 59 կետեր:

հովմանը, որոնց առկայությամբ կերաշխավորվեն անհատների ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը:

### **Հանձնարարականի մեկնաբանություններ**

Ընդհանուր առմամբ անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը զինված ուժերի անձնակազմի նկատմամբ կիրառելի է այնքանով, որքանով որ կիրառելի է քաղաքացիների նկատմամբ: Այնուամենայնիվ, զինվորական ծառայությունը կարող է անձնական ու ընտանեկան կյանքի միջամտության որոշակի տարրեր պարունակել:

«Անձնական կյանք»-ը ներառում է անձի ֆիզիկական ու հոգեբանական անձեռնմխելիությունը, սոցիալական անհատականացումը, գենդերային ինքնորոշումը, անունը, սեռական կողմնորոշումն ու սեռական կյանքը<sup>80</sup>:

Նամակագրությունը ներառում է հեռախոսային կապի հաղորդակցությունը, էլեկտրոնային նամակագրությունը և ինտերնետի անձնական օգտագործումից հավաքվող ինֆորմացիան: Ջինված ուժերի անձնակազմի նամակագրությանը միջամտություն թույլատրվում է, եթե միայն պահպանվում են և առկա են միջամտության համար անհրաժեշտ պայմաններն ու չափանիշները:

Մասնավոր նամակագրությունը վերաբերում է այն նամակարությանը, որի պարագայում նամակների բովանդակությունը խիստ անձնական է և ուղղված է նեղ շրջապատի՝ ընտանիքի անդամներին կամ ընկերներին:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի երկրորդ մասը անդամ պետություններին հնարավորություն է տալիս անձնական ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության նկատմամբ որոշ սահմանափակումներ կիրառել, պայմանով, որ սահմանափակումներն ու միջամտությունը օրենքով նախատեսված է, իրավաչափ նպատակ է հետապնդում և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում:

Միջամտության համար անհրաժեշտ այդ պայմանները կիրառելի են նաև զինված ուժերի անձնակազմի պարագայում: Ավելին, պետություններին այս առումով որոշակի հայեցողական սահման է տրված, ինչը նշանակում է, որ սահմանափակում կիրառելիս պետությունները որոշակի ազատություն ունեն: Սակայն, նման սահմանափակումները հետագայում կարող են Դատարանի կողմից քննության

---

<sup>80</sup> Pretty v. the United Kingdom, judgment of 29 April 2002, para. 61.

ենթարկվել՝ դրանց արդարացված ու հիմնավորված լինելու հարցը որոշելու նպատակով:

Յուրաքանչյուր պարագայում, որպեսզի անձնական ու ընտանեկան կյանքի միջամտությունը իրավաչափ լինի, այն պետք է բավարարի վերոնշյալ երեք պայմանները:

«Օրենքով սահմանված կարգով» նշանակում է, որ սահմանափակման համար օրենսդրական հիմքեր կան, այսինքն գոյություն ունի օրենսդրական ակտ, որով նախատեսված է սահմանփակում կիրառելու հնարավորությունը: Օրենսդրական հիմքը պետք է հնարավորինս պարզ և հասկանալի լինի, որպեսզի անձը հասկանա և կանխատեսի դրա հետևանքները: Ավելին, պետք է պաշտպանական միջոցներ գործեն կամայականությունների դեմ:

Զինված ուժերում հնարավոր է գործեն սահմանափակման հնարավորություններ, որոնք նախատեսված լինեն զինված ուժերի կարգապահության ուղեցույցերով: Նման սահմանափակումը վերջնական արդյունքում կարող է համարվել օրենքով նախատեսված, եթե օրենսդրական ամրագրում ունեն և դրանց կամայական կիրառման համար պաշտպանության միջոցներ կան, օրինակ կայացված որոշման վերանայման հնարավորություն:

«Իրավաչափ նպատակ» եզրույթը իր մեջ ներառում է ազգային անվտանգության, հանրային անվտանգության, երկրի տնտեսական կայունության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, այլոց իրավունքների ու շահերի, ինչպես նաև բարքերի ու առողջության պահպանման վերաբերյալ հարցերը:

Իսկ «Ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ» լինելու հանգամանքը որոշվում է, եթե տվյալ միջոցը կիրառվել է ճնշող սոցիալական կարիքի համար և եթե կիրառված միջոցները համաչափ են նպատակներին: Ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ լինելու հացը որոշելիս Ղատարանը հավասարակշռում է անհատի իրավունքներն ու հանրային շահը՝ համաչափության սկզբունքի կիրառմամբ:

Զինված ուժերի պարագայում զինձառայողի իրավունքների սահմանափակումները իրականացվելիս հավասարակշռումը պահպանվում է զինված ուժերի շահերի առնչությամբ, օրինակ վերջինիս օպերատիվությունն ապահովելու նպատակով կամ ազգային անվտանգության ապահովման համար և այլն:

Այնուհանդերձ, զինձառայողի իրավունքի սահմանափակումը նման նպատակով թույլատրելի կլինի, եթե ազգային անվտանգության կամ զինված ուժերի օպերատիվության դեմ ռիսկը բավարար չափով հիմնավորված է:

Այն դեպքում, երբ հոդված 8-ը վերաբերում է անձի խիստ անձնական կյանքին, ապա առավել լուրջ պատճառներ են անհրաժեշտ իրավունքի միջամտությունը հիմնավորելու համար: Օրինակ, զինված ուժերի անձնակազմի կողմից զինձառայողի անձնական կյանքի, նրա սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հարցերի միջամտությունը վերջինիս անձնական կյանքը հարգելու իրավունքի ուղղակի միջամտություն է, և հիմնավորված կլինի, եթե լուրջ խախտման կամ հանցագործություն կատարած լինելու կասկածներ կան: Ձինված ուժերի անձնակազմի ներկայացուցչին իր սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնորոշման պատճառով զինձառայությունից հեռացնելը կամ նրա նկատմամբ հետապնդումներ իրականացնելը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում է հանդիսանում, եթե նման միջամտությունը բավարար կերպով չի հիմնավորվում:

Ձինվորները զինված ուժեր ծառայության իրենց կամքով չեն անցնում, հետևաբար նրանք իրենց ընտանիքներից բաժանվելու և շփումները դադարեցնելու կամարտահայտություն չեն հայտնում: Հետևաբար, իրավիճակները, որոնց պարագայում զինվորները ստտպված են դադարեցնել իրենց ընտանիքների հետ շփումները, պետք է հիմնավորվեն իրավիճակի անհրաժեշտությամբ: Նմանապես, շփումների արգելքը չպետք է որպես կարգապահական պատիժ կիրառվի, ինչը կորակվի որպես իշխանության չարաշահում:

Ձինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչների համար առանձնակի կարևորվում է մտերիմների հետ շփումները պահպանելը: Մտերիմների մեջ մտնում են հարազատները և զինձառայողի հետ մտերիմ հարաբերություններ ունեցող այլ անձիք, օրինակ՝ ծնողները, թոռները, մոտ ընկերները: Այդ իսկ պատճառով պետք է բոլոր պայմանները ստեղծվեն կապի ու շփումների պահպանման համար: Որոշ դեպքերում բջջային հեռախոսները հնարավոր է կապի լավագույն միջոցը չհանդիսանան և անվտանգության նկատառումներից ելնելով հնարավոր է դրանց օգտագործումը սահմանափակվի կամ նույնիսկ ամբողջությամբ արգելվի: Այնուհանդերձ, կապի պահպանման համար այլ միջոցներ պետք է ապահովվեն: Որոշ Եվրոպական երկրներ ներդրել են հատուկ համակարգեր, որոնք թույլ են տալիս հատուկ փոստային համակարգերի կամ էլեկտրոնային կապի միջոցով նամակագրություն կատարել:



Հայրության համար տրվող արձակուրդը նույնպես պաշտպանվում է այս հոդվածի ներքո, անկախ այն հանգամանքից զինձառայությունը իր բնակության երկրում է անցնում, թե այլ երկրում: Այս կապակցությամբ երեխաներ ունեցող զինձառայողներին տրվող հնարավորությունները եվրոպական երկրներում աճում են: Օրինակ Ֆրանսիայի պաշտպանության նախարարությունը ուժեղացրել է անչափահաս երեխաներ ունեցող զինձառայողների սոցիալական պաշտպանությունը: Հոլանդիայում փոքրահասակ երեխա ունեցող մայրերը կես դրույքով աշխատելու հնարավորություն ունեն և այլն: Հայր զինձառայողների համար նախատեսված է հայրական արձակուրդ և այլն: Ռումինիայում նախատեսված է երեխայի խնամքի ու ծննդյան արձակուրդ, Չեխիայում իգական սեռի ներկայացուցիչները ընտենական հրատապ հարցերով կարող են մինչև 13 օր տևողությամբ արձակուրդ ստանալ:

## ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

### Բեքը և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության<sup>81</sup>

*Սույն գործի շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիտարկել է դիմողների ներկայացված բողոքը, որի համաձայն՝ վերջիններիս սեռական կյանքին միջամտությունն ու զինված ուժերից նրանց պաշտոնանկությունը առաջացրել է Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածների խախտում: Դիմողները պնդել են նաև, որ ներպետական դատական ատյաններում զրկված են եղել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից: Երեք դիմողներն էլ ընդգրկված են եղել Թագավորության օդային զինված ուժերի կազմում և երկար տարիներ աշխատանքային պարտականություններում հաջողությամբ են հանդես եկել: Սակայն նրանց համասեռամոլության փաստը հաստատվելուց հետո մի շարք հարցազրույցներ են տրվել նրանց մասնավոր կյանքի մանրամասների վերաբերյալ, ինչից հետո նրանք ազատվել են աշխատանքից: Դատարանը սույն գործով նշել է, որ դիմողների անձնական կյանքի հետաքննությունն ու համասեռամոլության հիմքով նրանց աշխատանքից ազատելը որակվում է որպես մասնավոր կյանքի միջամտություն, ինչը խախտում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը և չի համապատասխանում ժողովրդավարական հասարակության պահանջներին: Դատարանը նշել է նաև, որ կատարվածը կարող է որակվել նաև որպես դիմողների արտահայտվելու ազատության միջամտություն, սակայն սույն գործով արտահայտվելու ազատությունը մասնավոր կյանքը հարգելու իրավունքի համեմատ երկրորդական է: Հետևաբար*

<sup>81</sup> Beck and Others v. the United Kingdom, nos. 48535/99, 48536/99 and 48537/99, 22 October 2002.

*Դատարանը անհրաժեշտ չի համարել փաստերը քննարկել հոդված 10-ի ներքո: Հաստատվել է նաև դիմողների համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների բացակայության հանգամանքը: Այսպիսով՝ Դատարանը գտել է, որ պետությունը չի կատարել իր պարտականությունը՝ պաշտպանելու անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, ինչպես նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի ապահովման առումով, ինչի արդյունքում խախտվել են Կոնվենցիայի 8-րդ և 13-րդ հոդվածները:*

### **Հարցեր քննարկման համար**

- Ինչ տարրեր է պարունակում 8-րդ հոդվածով նախատեսված անձնական ու ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը?
- Որոնք են զինվորական ծառայությամբ պայմանավորված այս իրավունքի առանձնահատկությունները?
- Որ դեպքերում է թույլատրվում սահմանափակումներ կատարել?
- Կխախտվի անձի անձնական կյանքը հարգելու իրավունքը, եթե առանց նրան տեղեկացնելու իր վերաբերյալ հեռուստատեսությամբ նյութ տարածվի?
- Որ դեպքերում կխախտվի զինծառայողի նամակագրության իրավունքը, եթե ընտանիքին ուղարկված նամակը գրաքննության ենթարկվի?

## ԹԵՄԱ 7. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

### Իրավունքի հասկացությունը<sup>82</sup>

Գաղափարներ ու կարծիքներ տարածելու և ստանալու յուրաքանչյուր անձի իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից մեկն է, ինչը ընդհանուր առմամբ պաշտպանություն է ստանում անձի արտահայտվելու ազատության միջոցով: Այն ներառում է կարծիք ունենալու, տեղեկություն ու գաղափար ստանալու ու փոխանցելու ազատությունը:

Քաղաքական խոսքի ազատությունը արտահայտվելու իրավունքի կարևոր ձևերից մեկն է: Իշխանություններին քննադատող ընդդիմադիր քաղաքական գործչի արտահայտվելու ազատության իրավունքի սահմանափակումը օրինակ համարվում է արտահայտվելու ազատության խախտում:

Քաղաքական բանավեճի առկայությունը ժողովրդավարական հասարակության կարևորագույն բաղկացուցիչներից է, քանի որ այն հնարավորություն է տալիս մարդկանց տեղեկանալու և կարծիք կազմելու քաղաքական առաջնորդների հայացքների վերաբերյալ: Հասարակական կազմակերպությունների դերը նույնպես մեծ է հանրային քաղաքական նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ մեկնաբանություններ և քննադատություններ կատարելու հարցում: Հարկ է ընդգծել, որ քաղաքական գործիչը պետք է պատրաստ լինի նաև քննադատության, և նրա վերաբերյալ քննադատությունների թույլատրելի սահմանները որոշելիս անպայման հաշվի է առնվում այն հանգամանքը, որ քաղաքական գործիչ դառնալով՝ անձը կամավոր կերպով հանրության առջև առավել բաց է դարձնում իր հայացքները, լայնորեն արտահայտում դրանք, ուստի պետք է պատրաստ լինի ավելի ուժգին քննադատության, քան կարող է ունենալ սովորական մարդը, ով քաղաքական գործիչ չէ: Քաղաքական գործիչների վերաբերյալ լրագրողական խոսքի ազատությունը կարող է ավելի լայն լինել և իր մեջ պարունակել չափազանցության տարրեր, որոնք ոչ մի դեպքում չպետք է անտեղի գնահատողական-վիրավորական բնույթ կրեն:

<sup>82</sup> «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման» ձեռնարկ, Մոդուլ 7

Հանրային իշխանության և կառավարության քննադատության սահմանները ավելի լայն են, ինչի համար քրեական հետապնդման իրականացումն անթույլատրելի է, քանի որ դա պետության կողմից բռնության կիրառում է անձի նկատմամբ:

Մյուս կողմից դատական իշխանության հեղինակության պահպանման և անկախության ապահովման համար թույլատրվում է իրականացնել արտահայտվելու ազատության սահմանափակումներ: Այս սահմանափակման նպատակն այն է, որ հասարակությունը և՛ հարգանք, և վստահություն ունենա դատարանների նկատմամբ, որոնք պետք է իրականացնեն իրենց գործունեությունը և լուծեն իրավական վեճերը:

### **Հանձնարարականի մեկնաբանություններ**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանվել է, որ արտահայտվելու ազատությունը վերաբերելի է նաև զինված ուժերի անձնակազմին, նշելով, որ՝ հոդված 10-ը չի դադարում գործել զինված ուժերի զորամասերի դարպասանների մոտ<sup>83</sup>:

Արտահայտվելու ազատությունը ներառում է կարծիք ունենալու, կարծիք ու մտքեր հայտնելու և փոխանակելու իրավունքը:

Տեղեկություն ստանալու իրավունքը ներառում է ՋԼՄ-ներով, ռադիոյով, հեռուստատեսությամբ ու ինտերնետով տեղեկություն ստանալու իրավունքը, քանի դեռ աղբյուրը օրինական է:

Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պարզաբանում է նաև, որ արտահայտվելու իրավունքը ուղեկցվում է որոշ պարտականություններով, ինչը նպատակ ունի կանխել այլ հիմնարար իրավունքների խախտումները, ինչպես նաև ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության և հանրային անվտանգության պաշտպանությունը, գաղտնիության կանոնների խախտման կանխարգելումը և դատարանների անխաթար գործունեությունը:

Արտահայտվելու ազատության իրավունքի համար նախատեսված են նաև թույլատրելի սահմանափակումներ: Այս իրավունքի սահմանափակման թույլատրելիության հարցը որոշելիս հաշվի է առնվում զինվորական կյանքի

---

<sup>83</sup> Grigoriades v. Greece, 25 November 1997

առանձնահատկություններն ու զինված ուժերի անձնակազմի զինվորական ծառայությամբ պայմանավորված հատուկ պարտականությունները:

Նույնիսկ այն դեպքում, երբ իրավունքը սահմանափակվում է զինված ուժերի օրինական շահերի նպատակով, պետք է պահպանվի համաչափություն սահմանափակման և այդ նպատակների միջև: Համաչափության հարցը յուրաքանչյուր դեպքում կախված է հետապնդվող նպատակից: Այն դեպքում, երբ սահմանափակումը հիմավորվում է ազգային անվտանգության կամ զինվորական կարգապահության ապահովման նպատակներով, ապա համաչափությանը հարցը կարող է ավելի խիստ դրվել: Միննույն ժամանակ, նման սահմանափակումները պետք է զինվորականներին կամայականություններից պաշտպանվելու հնարավորություն տան:

Արտահայտելու ազատության իրավունքի սահմանափակումները, դրա իրականացման արգելքը կամ իրականացման պայմանները գործում են հիմնականում այն դեպքում, երբ այդ իրավունքը իրականացվում է հրապարակային ձևով՝ օրինակ հեռուստատեսությամբ: Այնուհանդերձ, արտահայտվելու ազատության իրավունքի յուրաքանչյուր սահմանափակում կամ արգելք պետք է ամրագրված լինի օրենքով, այսինքն ներպետական օրենսդրությամբ սահմանափակումը հստակ կարգավորում ունենա, և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակության մեջ, այսինքն սոցիալական ճնշող պահանջ պետք է լինի, որտեղ կիրառված միջոցները համաչափ են հետապնդվող նպատակին:

Դատարանի կողմից 10-րդ հոդվածի խախտում չի հաստատվել օրինակ նման դեպքերում.

- զինծառայողը ազատագրվել է, երբ նյութեր է տարածել և ֆրանսիական բանակին կոչ արել Գերմանիայից հեռանալու վերաբերյալ,
- կամ երբ գերմանացի զինծառայողը հեռուստատեսությամբ քննադատել է զինվորական քաղաքականությունն ու զինված ուժերը և այլն

Դատարանի կողմից 10-րդ հոդվածի խախտում ճանաչվել է օրինակ նման դեպքերում.

ա)թերթի տարածման արգելք, որում հրապարակվել են քննադատական ոճով նյութ, որը սակայն չի վերաբերել զինված ուժերի կարգապահությանն ու ենթակայությանը, ինչպես նաև զինձառայության նպատակին<sup>84</sup>

բ) երբ ենթասպային ձերբակալել են իր ղեկավարին բողոքի երկար նամակ ուղարկելու համար, որտեղ դատարանը գտել է, որ ենթասպայի կալանավորումը ժողովրդավարական հասարակության մեջ անհրաժեշտ չի եղել, բացի այդ խախտվել է համաչափությունը կիրառված միջոցի և նպատակի միջև<sup>85</sup>

Առանձնակի կարևորություն է ներկայացնում զինված ուժերի անձնակազմին զինված ուժեր մուտք գործելուց հետո համապատասխան ինֆորմացիային հասանելի դարձնելն ու իրենց պարտականությունների մասին տեղեկացնելը: Նման տեղեկություն պետք է տրամադրվի նաև զինձառայողների ծնողներին: Տեղեկատվությունը, մասնավորապես, պետք է վերաբերվի զինձառայության բոլոր ասպեկտները, ներառյալ զինվորական կարգապահությունը, վարքագծի կանոնակարգը, նշելով թե ինչն է համարվում անընդունելի վարքագիծ, ինչպես նաև իրենց իրավունքների, բողոքարկման եղանակների, աշխատանքի, կրոնի, առողջության և անվտանգության ապահովման վերաբերյալ տեղեկատվություն:

Նախկին զինձառայողները, ինչպես նաև զինձառայության մեջ գտնվող զինված ուժերի ներկայացուցիչները զինված ուժերում պահպանվող իրենց անձնական տվյալների հասանելիության իրավունք ունեն:

Փաստաթղթերի ու տեղեկատվության հասանելիությունը ընդհանուր կանոն է, ինչը սակայն որոշ դեպքերում կարող է սահմանափակվել: Այս կապակցությամբ պետք է նշել, որ յուրաքանչյուր փաստաթուղթ կոնկրետ նպատակի համար է պահպանվում և ազգային անվտանգությունն ու պաշտպանությունը հնարավոր է օրինաչափ նպատակ համարվեն սահմանափակումներ կիրառելու համար: Որոշ երկրներում նման սահմանափակումները նախատեսված են Սահմանադրությամբ: Կիրառվող յուրաքանչյուր սահմանափակում պետք է համաչափ լինի հետապնդվող նպատակին: Ինչ վերաբերում է սահմանափակման բնույթին, ապա ակնհայտ է, որ ավելի խիստ սահմանափակման համար ավելի լուրջ հիմնավորումներ են անհրաժեշտ: Իսկ տեղեկատվության հասանելիության ամբողջական արգելքը պետք

<sup>84</sup> Le Cour Grandmaison and Fritz v. France, European Commission of Human Rights, 6 July 1987

<sup>85</sup> Grigoriades v. Greece, 25 November 1997

է հնարավորինս կոնկրետ և լուրջ պաստարկներով հիմնավորվի: Զինված ուժերի անձնակազմը իր հերթին պարտականություն է կրում չտարածել տեղեկություն և զինված ուժերի, ինչպես նաև իրենց պարտավորությունների վերաբերյալ:

## ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

### **«Դեր Բգել»-ն ու Գուբին ընդդեմ Ավստրիայի<sup>86</sup>**

Գործի շրջանակներում քննվել է պետության կողմից հրատարակության և զինծառայողի արտահայտվելու ազատության սահմանափակման օրինականության և հիմնավորվածության հարցը: Դիմողներից առաջինը՝ «Vienna-based association»-ը, ավստրիական բանակում ծառայող զինվորների համար նախատեսված ամսագրի («Դեր Բգել») հրատարակությունն է: Բանակային կյանքի վերաբերյալ վերջինիս հոդվածները հաճախ քննադատական բնույթ ունեին և ըստ այդմ այդ բնույթի տեղեկություններ էին պարունակում: 1987 թվականի հուլիսի 27-ին ընկերությունը դիմել է պաշտպանության նախարարին՝ «Դեր Բգել»-ը գործող երկու այլ զինվորական ամսագրերի հետ գորանոցներում տարածելու խնդրանքով: Հրատարակության կողմից ներկայացված խնդրանքին որևէ պատասխան չի տրվել: Միայն 1989 թվականի մարտի 10-ի նամակով հաստատվել է, որ «Դեր Բգել»-ի տարածումը գորանոցներում արգելվում է: Զինված ուժերի վերաբերյալ Ակտի 46-րդ բաժնի /3/ համաձայն՝ զինված ուժերի ողջ անձնակազմը առանց որևէ սահմանափակման հանրությանը հասանելի բոլոր միջոցներով քաղաքական իրադարձությունների վերաբերյալ տեղեկություն ստանալու իրավունք ունի: Այնուհանդերձ, թույլատրվում էր միայն այն հրապարակումների օգտագործումը, որոնք ուղղված չէին բանակի հեղինակության դեմ ու քաղաքական կուսակցություններին քարոզչության տարածք չէին տրամադրում: Նախարարության մեկնաբանության համաձայն՝ «Դեր Բգել»-ը չէր համապատասխանում այս պահանջներին:

Երկրորդ դիմողը, ով «Ժողովրդավարական զինվորների միության» անդամ էր, 1987 թվականի հուլիսի 1-ին անցել է զինվորական ծառայության: Երդման արարողության ժամանակ նա հանրապետության նախագահի նկատմամբ բողոքով է հանդես եկել, ինչից հետո վերջինիս նկատմամբ նշանակվել են տաժանակիր մի շարք պարտականություններ, ինչի կապակցությամբ էլ դիմողը բազմիցս բողոքներ և խնդրագրեր է ներկայացրել: 1987 թվականի դեկտեմբերի 29-ին գորանոցում «Դեր Բգել»-ի հերթական համարը տարածելիս դիմողը սպայի կողմից այդ գործողությունը դադարեցնելու հրաման է ստացել: Ավելի ուշ դիմողը բողոքարկել է արգելման որոշումը, որը բանակի ներքին իրավական օրենսդրական կարգավորման համաձայն մերժվել է: Դատարանի իրավական գնահատականը հանգել է հետևյալին. պաշտպանության նախարարության կողմից կիրառված իրավական ակտերը

<sup>86</sup> Vereinigung demokratischer Soldaten Österreichs and Gubi v. Austria, 19 December 1994, Series A no. 302

բավարար օրենսդրական հիմք են հանդիսացել հրատարակության հոդվածների տարածումը մերժելու համար: Ըստ էության, արտահայտման իրավունքի սահմանափակումը սահմանված է եղել օրենքով: Բնչ վերաբերում է ազատության սահմանափակման և դրա միջամտության համար առկա օրենքով նախատեսված նպատակներին, ապա Դատարանը հաստատել է, որ կիրառված սահմանափակումը օրենքով նախատեսված նպատակների համեմատ անհամաչափ է: Պաշտպանության նախարարության կողմից կիրառված սահմանափակումը անհրաժեշտ է եղել գորանոցում կարգ ու կանոնի պահպանման համար, սակայն հրատարակության կողմից ինֆորմացիայի տարածման եղանակներին ու միջոցներին նախարարության կողմից ճիշտ գնահատական չի տրվել: Դատարանը վերահաստատել է նաև, որ ժողովրդավարական հասարակության մեջ, բազմակարծության և հանդուրժողականության պահանջներից ելնելով, արտահայտման ազատության տակ պետք է հասկանալ նաև ցանկացած տեղեկություն, որը հուզում և անհանգստություն է առաջացնում բնակչության մոտ: Ավելին, Դատարանը գտել է, որ «Դեր Բզել»-ում պարունակվող տեղեկությունները բռնության, անհնազանդության կամ օրենքի խախտման խթան չեն հանդիսացել և, հետևաբար, իրավունքի սահմանափակումը հանրության համար անհրաժեշտ չի եղել: Այսպիսով՝ առաջին դիմողի մասով Դատարանը հավաստել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտման փաստը: Երկրորդ դիմողի վերաբերյալ Դատարանը հաստատել է իրավունքի իրականացմանը միջամտելու հանգամանքը, որի նպատակը, ինչպես առաջին դեպքում, գորանոցում կարգուկանոնի հաստատումն էր: Սակայն այս դեպքում ևս Դատարանը փաստել է, որ երկրորդ դիմողի կողմից տպագրված հոդվածների տարածումը զինվորական կարգուկանոնի համար վտանգ չի ներկայացնում, հետևաբար կիրառված սահմանափակումները պաշտպանվող նպատակի համեմատ անհամաչափ են եղել:

Սույն գործի կապակցությամբ Դատարանը հաստատել է երկու դիմողների նկատմամբ արտահայտվելու ազատության խախտման փաստը:



## ԹԵՄԱ 8. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

### Իրավունքի հասկացությունը<sup>87</sup>

Իշխանությունը ձևավորվում է ժողովրդի ինքնիշխան կամքի միջոցով: Ինչը հնարավոր է իրականացնել յուրաքանչյուր քաղաքացու ընտրության իրավունք տալու շնորհիվ: Միևնույն ժամանակ, նույն այդ քաղաքացիները օժտվում են ոչ միայն ընտրելու, այլ նաև ընտրվելու իրավունքով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի առաջին Արձանագրության երրորդ հոդվածով սահմանվում է ընտրելու իրավունքը՝ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են անցկացնել ազատ ընտրություններ՝ ողջամիտ պարբերականությամբ, գաղտնի քվեարկությամբ, այնպիսի պայմաններում, որոնք կապահովեն ժողովրդի կամքի ազատ արտահայտումն օրենսդիր իշխանություն ընտրելիս»: Այս դրույթով ամրագրված օրենսդիր իշխանություն եզրույթը ենթադրում է, որ իրավունքը գործում է ազգային խորհրդարանի ձևավորման ժամանակ: Միևնույն ժամանակ, դրույթի մեկնաբանությունը հանգում է նրան, որ ցանկացած պետություն կարող է որոշել, որ հոդվածի դրույթները գործեն ոչ միայն խորհրդարանական ընտրություններ, այլ նաև ներկայացուցչական հիմքերով ստորոջվող մեկ այլ համապետական մարմնի ընտրության ժամանակ: Երրորդ հոդվածով նախատեսված երաշխիքները չեն գործում սակայն հանրաքվեի և մունիցիպալ ընտրություններին մասնակցելու դեպքում<sup>88</sup>:

Ընտրություններին և հանրաքվեներին մասնակցելու իրավունքը պետք է հաստատվի օրենքով և ենթակա լինի միայն այնպիսի հիմնավոր սահմանափակումների, ինչպիսին է, օրինակ, քվեարկելու համար նվազագույն տարիքի սահմանում: Անընդունելի է ընտրական իրավունքից զրկելը ֆիզիկական տկարության կամ գրագիտության, կրթական կամ սեփականության այլ պահանջների չբավարարման պատճառով: Չի կարելի նաև որպես ընտրելու իրավունքի պայման կամ ընտրվելու իրավունքից զրկվելու հիմք նախատեսել կու- սակցությանն անդամակցությունը: Պետությունները այս առումով պարտավորություն են կրում

<sup>87</sup> «Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ» ԵԱՀԿ, Մոդուլ 9

<sup>88</sup> Տե՛ս Հիլլին ընդդեմ Լիխտենշտեյնի գործով 1999 թ. սեպտեմբերի 7-ի վճիռը:

արդյունավետ միջոցներ ձեռնարկել, որպեսզի լիարժեք կերպով երաշխավորվի ընտրության իրավունքով օժտված բոլոր անձանց ընտրելու իրավունքը: Ըստ այդմ այնտեղ, որտեղ պահանջվում է ընտրողների գրանցում, նշված գործընթացը պետք է դրուստացվի և հնարավորինս ազատվի խոչընդոտներից: Ցանկացած կոպիտ միջամտություն գրանցման կամ ընտրական իրավունքին, ինչպես նաև ընտրողներին ահաբեկելը կամ հարկադրելը պետք է արգելվի քրեական օրենսդրությամբ, և այդ օրենսդրությունը պետք է խստորեն պահպանվի:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի համաձայն՝ պարտադիր ժամկետային զինժառայողները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին չեն մասնակցում, ինչը բխում է Սահմանադրության 104-րդ հոդվածի այն դրույթից, որ «Տեղական ինքնակառավարումն իրականացվում է համայնքներում: Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական բնակիչների բարօրության նպատակով Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան լուծելու տեղական նշանակության հարցերը»:

### **Հանձնարարականի մեկնաբանություններ**

Ընտրելու և ընտրություններին մասնակցելու իրավունքը ժողովրդավարական հասարակությանը բնորոշ հիմնական տարրերից է: Այնուհանդերձ, այս իրավունքից և սահմանակումներ թույլատրելի են, որոնք սակայն իսպառ չեն վերացնում այդ իրավունքի արդյունավետությունը: Ընտրելու իրավունքի հնարավոր և թույլատրելի սահմանափակումները պետք է օրինաչափ նպատակ հետապնդեն և կիրառված միջոցները համաչափ լինեն նպատակին: Այս առումով պետությունները բավականին լայն հայեցողական սահման ունեն ընտրելու իրավունքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելիս, ինչը նշանակում է, որ պետությունն ազատ է որոշել սահմանափակման դեպքերը, ձևերը և ծավալները: Միևնույն ժամանակ, նույնիսկ պետություններին տրված հայեցողական սահմանը անսահմանափակ չէ և յուրաքանչյուր պարագայում խիստ քննության առարկա է դառնում համաչափության հարցը: Յուրաքանչյուր դեպքում զինված ուժերի անձնակազմի առանձին ներկայացուցիչների անձնական իրավունքները պետք է հավասարակշռվեն համայնքի ընդհանուր շահերի հետ՝ պահպանելով զինված ուժերի չեզոքությունը:

Զինված ուժերի նկատմամբ իրականացվող արդյունավետ ժողովրդավարական վերահսկողությունն ու հաշվետվողականությունը պահանջում են աղաքական և զինվորական ասպեկտների բաժանում ու տարանջատում: Եթե զինված ուժերի

անձնակազմը քաղաքական կյանքում ակտիվ մասնակցություն ունենա, օրինակ գուգահեռաբար ծառայի զինված ուժերում և օրենսդիր մարմնի անդամ հանդիսանա, ապա սա բացասաբար կանդրադառնա ժողովրդավարական հաշվետվողականության վրա և շահերի բախման կհանգեցնի: Այս առումով **ընտրվելու իրավունքի** սահմանափակումներն ու ընթացակարգային պահանջները արդարացված և հիմնավորված են: /օրինակ զինծառայության ընթացքում կարելի է ազատվել պաշտոնից կամ հակառակը՝ ընտրարշավի ժամանակ զինված ուժերում ծառայությունը ընդհատել/: Իսկ ահա **ընտրելու իրավունքը** նման սահմանափակումների չպետք է ենթարկվի:

Ժողովրդավարական վերահսկողության անհրաժեշտությունը սակայն չպետք է հիմք հանդիսանա զինված ուժերի անձնակազմի ընտրելության իրավունքի կամայական և ավտոմատ սահմանափակումների համար: Ինչի համար պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն և երաշխիքներ սահմանեն, որպեսզի զինված ուժերի անձնակազմը կարողանա իրականացնել իր ընտրության իրավունքը: Զինված ուժերի հիերարխիայում վերադաս համարվող պաշտոնյաները չպետք է ազդեցություն իրականացնեն զինծառայողների ընտրության իրավունքի իրականացման վրա, ինչի վրա պետք է ընտրության գաղտնիությունը երաշխավորվի: Իսկ այլ երկրում զինծառայության մեջ գտնվողները պետք է հնարավորություն ստանան հեռակա կարգով մասնակցել ընտրությանը:

## ԹԵՄԱ 9. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔ

### Հանձնարարականի մեկնաբանություններ

#### Զինված ուժերի անձնակազմի իրավունքները եվ ազատությունները պետք է անխտրական կերպ իրականացվեն

Զինված ուժերի անձնակազմի բոլոր անդամները Կոնվենցիայով և ներպետական օրենսդրությամբ ամրագրված իրավունքներն ու ազատությունները պետք է իրականացնեն առանց խտրականության, այն է անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, սեռական կողմնորոշումից կամ այլ հանգամանքից: Խտրականության արգելքը նախատեսված է ինչպես Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիայի 14-րդ հոդվածով, այնպես էլ Կոնվենցիային կից 12-րդ արձանագրությամբ, ինչը խտրականության բացարձակ արգելք է նախատեսում:

Տեսության մեջ և պրակտիկայում ձևավորվել են խտրականության տարբեր տեսակներ ուղղակի, անուղակի, ասոցացված, հետապնդումներ և այլն<sup>89</sup>:

#### Ուղղակի խտրականությունը առկա, եթե՝

- Անձնա արժանացել է ոչ բարենպաստ վերաբերմունքի,
- Որը համեմատելի է համանման իրավիճակում գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառված, կիրառվող կամ կիրառվելիք վերաբերմունքին,
- և նման վերաբերմունքի պատճառը նրանց հատուկ առանձնակի հատկանիշն է, որը ներառված է որոշակի հատկանիշների շրջանակներում:

Այս դեպքում խտրականության հիմքում ընկած է անհատի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի տարբերությունը: Օրինակ, ռեստորան կամ խանութ մուտքի արգելում, ավելի ցածր թոշակ կամ աշխատավարձի ստացում, անցակետում մուտքի թույլտվության մերժում, որոշակի մասնագիտության արգելք և այլն:

<sup>89</sup> Ձեռնարկ «Խտրականության դեմ եվրոպական իրավունքի վերաբերյալ», Եվրոպայի խորհուրդ և Եվրոպական միության համատեղ ծրագիր

Ընդհանուր կանոնի համաձայն անբարենպաստ վերաբերմունքի առկայությունը բավարար է խտրականության հաստատման համար, եթե այն անբարենպաստ է համանման իրավիճակում գտնվող մեկ այլ անձի նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի համեմատությամբ: Օրինակ, ցածր աշխատավարձի վերաբերյալ բողոքը խտրականության դեմ բողոք չէ, քանի դեռ չի ապացուցվել, որ այն ցածր է նույն գործատուի կողմից նույն առաջադրանքը կատարող մեկ այլ աշխատակցի աշխատավարձից<sup>90</sup>:

Ինչ վերաբերում է որոշակի հատկանիշին կամ պաշտպանվող հիմքերին, ապա անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք նվազ բարենպաստ վերաբերմունքը կապված է այդ որոշակի հատկանիշի հետ:

Խտրականության արգելքով պաշտպանված հիմքերի ցանկը սահմանափակ չէ և շարունակում է զարգացում ապրել Եվրոպական Դատարանի նախադեպերով: Մասնավորապես, զարգացման արդյունքում որպես պաշտպանվող հիմք է դիտարկվել նաև սեռական կողմնորոշումը, հիվանդության կամ հաշմանդամության առկայությունը և այլն: Ինչը նշանակում է, որ անձի սեռական կողմնորոշման կամ որևէ հիվանդության կամ հաշմանդամության պատճառով նրա նկատմամբ խտրական վերաբերմունք չպետք է ցուցաբերվի:

### **Անուղղակի խտրականության բաղադրիչները հետևյալն են՝**

- Ճեզք դրույթ, չափանիշ կամ պրակտիկա,
- որը զգալիորեն ավելի բացասական է ազդում որոշակի հատկանիշով պայմանավորված խմբի վրա,
- Համանման իրավիճակում գտնվող այլ անձանց համեմատությամբ

Խտրականության այս ձևը որակվում է որպես անուղղակի խտրականություն, քանի որ ոչ թե վերաբերմունք է տարբեր, այլ տվյալ վերաբերմունքի հետևանքները, որոնք տարբեր կերպ կարող են ընկալվել տարբեր հատկանիշներ ունեցող անձանց կողմից<sup>91</sup>:

### **Հետապնդումները և խտրականության հրահրում**

<sup>90</sup> Մուսթաֆիմն ընդդեմ Բելգիայի, ՄԻԵԴ, 1991թ, Լյուկզակն ընդդեմ Լեհաստանի, ՄԻԵԴ, 1996

<sup>91</sup> Դ.Հ-ը և ուրիշներն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, ՄԻԵԴ, 2007

Համաձայն խտրականության դեմ հրահանգների՝ հետապնդումները համարվում են խտրականության դրսևորում, երբ՝

- Տեղի է ունենում անցանկալի վարքագիծ՝ պայմանավորված որոշակի հատկանիշով,
- Անձի արժանապատվությունը վիրավորելու նպատակով կամ հետևանքով,
- և/կամ ստեղծելով ահաբեկող, թշնամական, ստորացնող, նվաստացնող և վիրավորող մթնոլորտ

Եվրոպական Կոնվենցիայի շրջանակներում հետապնդումը կարող է ներառվել ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով պաշտպանվող անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքում, կամ 3-րդ հոդվածով անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք կամ պատժամիջոցներ կիրառելու արգելքում<sup>92</sup>:

### **Ասոցացված խտրականություն**

Ասոցացված խտրականությունը անձի դեմ ուղղված խտրական վերաբերմունքն է, որը ասոցացվում է անձի կամ որոշակի անձանց հետ<sup>93</sup>:

### **Վիկտիմիզացիա**

Վիկտիմիզացիան անձի դեմ բացասական ազդեցություն ունեցող գործողություն կամ անգործությունն է՝ նրա կողմից խտրականության մասին բարձրաձայնելու կամ խտրական վերաբերմունքի դեմ դատական հայց ներկայացնելու պատճառով:

Խտրականության արգելքի սկզբունքը սակայն չի նախատեսում տարբերակված վերաբերմունքի բացարձակ արգելք, քանի որ բոլոր այն դեպքերում, երբ վերաբերմունքի տարբերությունը օբյեկտիվորեն հիմնավորվում է, այն համարվում է թույլատրելի: Ջինված ուժերի պարագայում զինձառայողի նկատմամբ դրսևորված տարբերակված վերաբերմունքը կարող է հիմնավորվել զինձառայության արդյունավետությամբ և զինված ուժերի մարտունակության ապահովման նպատակով: Յուրաքանչյուր դեպքում տարբերակված վերաբերմունքը գնահատվում է կիրառվող միջոցների և հետապնդվող նպատակի միջոցով, որի պարագայում կրկին պետք է պահպանվի համաչափության սկզբունքը: Ներպետական մարմիններն ու

<sup>92</sup> Բաշկովսկին և ուրիշներն ընդդեմ Լեհաստանի, 2007, ՄԻԵԴ

<sup>93</sup> Կոլեմանն ընդդեմ Արթրիջ Լոուի և Սթիվ Լոուի, Արդարադատության Եվրոպական Դատարան, 2008

իշխանությունները ունեն որոշակի ազատություն առավել արդյունավետ միջոցն ընտրելու հարցում, որի պարագայում սակայն պետք է կրկին պահապանվի այդ միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափությունը:

Ինչ վերաբերվում է գենդերով պայմանավորված խտրականությանը, ապա զբաղվածության, սպասարկման և այլ ոլորտներում գործում է կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման սկզբունքը: Ինչը վերաբերվում է նաև զինված ուժերի անձնակազմին: Կանայք պետք է այն նույն հնարավորությունները ունենան, ինչ տղամարդիկ և զինված ուժերում աշխատելիս պետք է նույն վերաբերմունքին արժանանան: Նմանապես, նրանց մասնագիտական աճի հնարավորությունները չպետք է սահմանափակվեն սեռով պայմանավորված: Սակայն այն դեպքում, երբ կոնկրետ աշխատանքի կատարման համար տվյալ հաստիքին պահանջվում են այնպիսի հատկանիշներ, որոնք հատուկ են արական սեռին, ապա կանանց հնարավորությունների սահմանափակումը կարող է հիմնավորված համարվել:

Նմանապես, չպետք է զինված ուժերի անձնակազմի ներկայացուցիչների իրավունքները սահմանափակվեն կամ խախտումներ տեղի ունենան նրանց սեռական կողմնորոշման պատճառով: Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն զինված ուժերի հասանելիությունը չի կարող սահմանափակվել սեռական կողմնորոշման պատճառով<sup>94</sup>:

Իսկ այն երկրներում, որտեղ նույնասեռ ամուսնությունները թույլատրվում են գրանցել օրենքով, ապա զինված ուժերի ներկայացուցիչները նույնպես պետք է հնարավորություն ունենան օգտվել այդ իրավունքից: Եվ նման վիճակը չպետք է հիմք հանդիսանա դասային կոչումների հասանելիությունը արգելելու համար:

## ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

### Թլիմենոսն ընդդեմ Հունաստանի<sup>95</sup>

*Սույն գործը վերաբերում էր Եհովայի վկայի, ում հնարավորություն չի տրվել նշանակվել արտոնագրված հաշվապահի պաշտոնում՝ հաշվի առնելով նրա նախկին դատվածությունը՝ պայմանավորված նրա կողմից իր կրոնական և այլ համոզմունքներից ելնելով զինվորական համազգեստ կրելուց հրաժարվելով: Դիմումատուն պնդում էր, որ իրեն մերժելը*

<sup>94</sup> Lustig-Prean and Beckett v. the United Kingdom, judgment of 27 September 1999

<sup>95</sup> Thlimmenos v. Greece [GC], no. 34369/97, ECHR 2000-IV

պայմանավորված է եղել խտրականությամբ՝ իր կրոնական պատկանելության առնչությամբ: Դատարանը հայտնել է, որ անձի՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքների առանց խտրականության իրականացումը երաշխավորող Կոնվենցիայի 14-րդ հոդվածը խախտված կլինի, եթե միննույն իրավիճակներում անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում՝ առանց օբյեկտիվ և ողջամիտ բացատրության: Միննույն ժամանակ Դատարանը հաստատել է, որ խտրականության չենթարկվելու իրավունքը խախտված կլինի նաև այն դեպքում, երբ ողջամիտ և օբյեկտիվ բացատրություն չի տրվում, երբ նույն մոտեցումն է դրսևորվում տարբեր հանգամանքներում գտնվող անձանց նկատմամբ: Դատարանը սույն գործով ճանաչել է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում 9-րդ հոդվածի համակցությամբ: Դատարանը փաստել է, որ իշխանությունները դիմումատուի հետ չեն վարվել այլ կերպ՝ ի համեմատություն ծանր հանցագործությունների համար դատված այլ անձանց: Պետությունը դիմումատուի նկատմամբ խտրական վերաբերմունք է դրսևորել՝ չնախատեսելով համապատասխան բացառություններ ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց՝ արտոնագրված հաշվապահների նշանակման արգելման կանոնից: Դիմումատուի հանցագործությունը տարբերվել է մյուսներից, քանի որ հանդիսացել է նրա կրոնական համոզմունքների ցուցադրման միջոց և ի տարբերություն այլ ծանր հանցագործությունների՝ չէր կարող ենթադրել նրա կողմից որևէ անազնվություն կամ բարոյալքություն՝ թուլացնելու իր աշխատանքային պարտականությունների կատարման հնարավորությունը:

## ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ<sup>96</sup>

Տիկին Չապլինը քրիստոնյա է: Նա քրիստոնյա դառնալուց ի վեր, սկսած 1971 թվականից որպես քրիստոնյա, շղթայի վրա տեսանելի խաչ է կրել, որպես իր հավատի արտահայտում: Նա հավատում էր, որ խաչը հանելը կխախտի իր հավատքը: Տկ. Չապլինը 1981 թվականին ստացել էր բուժքրոջ որակավորում և աշխատում էր Ռոյալ Դեվոնում և Էքզետերի ՆՀՍ Հիմնադրամի Տրեստում, Հանրապետական հիվանդանոցում 1989 թվականի ապրիլից մինչև 2010 թվականի հուլիսը, բացառիկ աշխատանքային պատմությամբ: Խնդրո առարկա դեպքերի ժամանակ նա աշխատում էր ծերունական պալատում: Հիվանդանոցը վարում էր համազգեստային քաղաքականություն, որը հիմնվում էր Առողջապահության Դեպարտամենտի ուղեցույցի վրա: Ըստ հիվանդանոցի համազգեստային քաղաքականության 5.1.5 կետի «Կրվող զարդեղենը պետք է զուսպ լինի» և 5.3.6 կետի համաձայն՝ «5.3.6. Որպեսզի վարակի տարածումը հասցվի նվազագույնի, զարդեղենը պետք է հնարավորինս քիչ լինի: Այն է.

Մեկ պարզ հարթ մատանի, որը չի խանգարի ձեռքերի հիգիենային:

Մեկ զույգ պարզ զուսպ ականջոդեր,

<sup>96</sup> Խնդիրը կազմվել է փորձագետ Արա Ղազարյանի կողմից



Որնէ վզնոց չի թույլատրվում կրել, որպէսզի հիվանդների հետ շփվելիս նվազեցվի նրանց վնասելու հավանականությունը:

Եթէ դեմքին փիրսինգ կա, այն պետք է հանվի կամ ծածկվի»:

#### 5.1.11 կետը սահմանում էր.

«Անձնակազմի ցանկացած անդամ, ով ցանկանում է կրել հագուստի կամ զարդերի հատուկ տեսակներ՝ ելնելով կրոնական կամ մշակութային դրդապատճառներից, պետք է այդ հարցը բարձրացնի իր անմիջական ղեկավարության մոտ, որը չպետք է անհարկի մերժի:»

2007 թվականի հունիսին հիվանդանոցում ներդրվեցին նոր համազգեստներ, որոնք առաջին անգամ բուժքույրերի համար ներառում էին V-աձև վերնազգեստներ: 2009 թվականի հունիսին տկ. Չապլինի ղեկավարը նրան խնդրեց հանել իր «վզնոցը»: Տկ. Չապլինը պնդեց, որ խաչը կրոնական խորհրդանիշ է և խնդրեց այն կրելու թույլտվություն: Նրան մերժեցին այն հիմքով, որ շրթան և խաչը կարող են վնաս պատճառել, եթէ ծեր հիվանդներից որևէ մեկն այն քաշի: Տկ. Չապլինը այնուհետև առաջարկեց խաչը կրել այնպիսի շրթայով, որը մագնիսական ամրակներով կամրանա, որն անմիջապէս կձգվի, երբ հիվանդը այն ձգի: Այնուամենայնիվ, առողջապահական ղեկավարությունը նրան մերժեց այն հիմքով, որ խաչը ինքնին այնուհանդերձ առողջության և անվտանգության տեսանկյունից վտանգ է ստեղծում, եթէ այն հնարավորություն ունենա ազատորեն ճոճվելու, օրինակ՝ այն կարող է շփման մեջ մտնել բաց վերքերի հետ: Ի վերջո, նրան առաջարկեցին իր խաչը և շրթան կապել այն ամրանից, որը պահում է իրեն անհատականացնող նշանը: Ամբողջ աշխատակազմից պահանջվում էր անհատականացնող նշան կրել, որն ամրանում էր գրպանին կամ ամրանով: Այնուամենայնիվ, պահանջվում էր ամրանը և անհատականացնող նշանը հանել, երբ կատարվում էին կլինիկական պարտականությունները: Սակայն տկն. Չապլինը այդ առաջարկությունը նույնպէս մերժեց: 2009 թվականի նոյեմբերին տկ. Չապլինին տեղափոխեցին ոչ բուժքույրական հաստիքի, որը դադարեց գոյություն ունենալ 2010 թվականի հուլիսին:

1. 2009 թվականի նոյեմբերին նա դիմեց Աշխատանքային գործերով դատարան՝ բողոքելով կրոնական հիմքերով և ուղղակի և անուղղակի խտրականության դեմ: 2010 թվականի մայիսի 21-ի վճռով Աշխատանքային գործերով դատարանը սահմանեց, որ ուղղակի խտրականությունը բացակայում է, քանի որ հիվանդանոցի դիրքորոշումը պայմանավորված էր առողջապահական և անվտանգության նկատառումներով և ոչ թէ կրոնական հիմքեր ունենա:

## Հարց.

Արդյոք առկա է խտրական վերաբերմունք, եթէ այո, ցույց տվեք.

1. խտրականության արգելքով պաշտպանված հիմքը (հատկանիշը),
2. տարբերակված մոտեցումը,
3. խտրականության տեսակը
4. համեմատականը,
5. արդյոք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ (օբյեկտիվ հիմքեր),
6. Միջամտության անհրաժեշտությունը ժողովրդական հասարակությունում.
  - միջոցների համաչափությունը
  - միջոցների նպատակահարմարությունը

## ԹԵՄԱ 10. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ ՄՏՔԻ, ԽՂՃԻ ՈՒ ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

### Մտքի, խղճի ու կրոնքի իրավունքի հասկացությունը

Եվրոպական Կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝  
*«Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտվելու ազատություն:*

*2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանությունը հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ քարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների»:*

Դեմոկրատական հասարակությունների սահմանադրական կարգերում և մարդու իրավունքների միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերում ամրագրված են ազատ դավանանքի և խղճի ու համոզմունքի նկատմամբ հարգանքի երաշխիքներ: Մտքի, խղճի և համոզմունքի ազատությունը հիմնականում դիտվում է իբրև անհատի իրավունք, թեկուզև այդ իրավունքը հաճախ իրականացվում է այլոց հետ համատեղ: Ըստ էության հողվածով ամրագրված իրավունքի շրջանակը պոտենցիալ առումով բավականին լայն է: Այս դրույթը վերաբերում է ոչ միայն մասնավոր կամ անձնական համոզմունքներին, այլ նաև այդ կարծիքի կամ համոզմունքի հավաքական դրսևորմանը՝ անհատապես կամ ուրիշների հետ համատեղ: Անձնական համոզմունքին հակասող որևէ արարքի կամ գործողության պարտադրումն անհատներին, օրինակ, կրոնական երդում տալուն կամ կրոնական ծիսակատարության հաճախելու պահանջը առաջացնում է իրավունքի ազատ իրականացման հետ խնդիրներ: Մյուս կողմից, անձի կողմից իր համոզմունքի համապատասխան վարքագծի դրսևորման արգելքը կրկին այդ իրավունքի իրականացման հետ կապված խնդիրների կարող է հանգեցնել:

Միտք, խիղճ և կրոն տերմինների գործածումը ենթադրում է, որ 9-րդ հողվածի կարգավորման շրջանակը պոտենցիալ առումով լայն է, սակայն նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ գործնականում որդեգրվել է փոքր-ինչ ավելի նեղ մոտեցում: Օրինակ՝ որևէ փոքրամասնության պատկանելության «գիտակցումը» (և հետևաբար խմբի մշա- կութային ինքնության պահպանման ձգտելու նպատակը) 9-րդ հողվածի հետ կապված հարց չի հարուցում: Նույն կերպ՝ «համոզմունքը» նույնը չէ, ինչ «կարծիքը», քանի որ 9-րդ հողվածի առարկա դառնալու համար այն պետք է բավարարի երկու պայմանի. նախ՝ համոզմունքը պետք է «հասնի համոզականության, լրջության, միասնականության ու կարևորության որոշակի մակարդակի», և երկրորդ՝ համոզմունքն ինքնին պետք է լինի այնպիսին, որ համատեղելի համարվի մարդկային արժանապատվության հետ: Այլ կերպ ասած՝ համոզմունքը պետք է առնչվի «մարդկային կյանքի ու վարքի ծանրակշիռ ու էական կողմին» և այնպիսին լինի, որ համարվի պաշտպանության արժանի: Որևէ անձի աջակցությամբ իրականացված ինքնասպանությանը կամ լեզվական նախապատվություններին և կամ մահից հետո մարդկային աճյունի տնօրինմանը վերաբերող համոզմունքները չեն հանդիսանում «համոզմունքներ» այս դրույթի իմաստով: Մյուս կողմից՝ պացիֆիզմը, աթեիզմն ու վեգանիզմը այնպիսի արժեհամակարգեր են, որոնք հստակորեն ընդգրկված են 9-րդ հողվածում: Քաղաքական գաղափարախոսությունները, որոնցից է կոմունիզմը, նույնպես մտնում

են այս դրույթի մեջ: Այդուհանդերձ, հարկավոր է նկատել, որ մտքերի բարձրաձայնման կամ խղճի արտահայտման մասով խոչընդոտները հաճախ դիտվում են իբրև 10-րդ՝ խոսքի ազատության իրավունքի մասին հողվածով կամ 11-րդ՝ միավորումներ կազմելու իրավունքի մասին հողվածով կարգավորվող հարցերի առաջացման հիմք: Իրավակիրառ պրակտիկայում ուշադրության կենտրոնում հիմնականում կրոնական համոզմունքներն են: Սակայն հարկավոր է սկզբից ներքին նշել, որ որևէ դավանանքի չհարելը կամ ոչ-կրոնական համոզմունքը նույնպես 9-րդ հողվածի պաշտպանության տակ են:

9-րդ հողվածի կիրառման շրջանակը չի կարող չափազանց ընդլայնվել: Օրինակ՝ այն չի ներառում այնպիսի խնդիրներ, ինչպիսին է ամուսնալուծությունը չթույլատրելը, կանանց՝ արհեստական վիժեցումից զերծ պահել համոզող տեղեկատվության տարածումը կամ քաղաքական կուսակցության ընտրվելու հնարավորությունները մեծացնելու նպատակով քաղաքական գործչի կողմից պետական բնակարանների վաճառքը դիտավորությամբ կատարված զանցանք համարելու հանգամանքը որոշելը: Ինքնասպանությանն աջակցելու հիմքում ընկած համոզմունքը ևս չի համապատասխանում որևէ կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքի. դա ավելի շատ նվիրվածություն է անձնական անկախության սկզբունքին, որն ավելի ճիշտ է քննարկել 8-րդ հողվածի սահմաններում:

Մտքի, խղճի կամ համոզմունքի դավանման ազատությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է սահմանափակվի՝ ի նպաստ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության ու բարքերի պահպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության: Սակայն միշտ չէ, որ առանց իրավունքների և ազատությունների պաշտպանության: Մտքի, խղճի կամ համոզմունքի մասով միջամտությունների՝ «ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ» լինելու հանգամանքը: Իրավաչափ ու թույլատրելի համարվելու համար միջամտությունը պետք է համապատասխանի հասարակական հրատապ կարիքին՝ համաչափ լինի հետապնդվող իրավաչափ նպատակին, հիմնավորված լինի համապատասխան ու բավարար պատճառներով<sup>97</sup>:

## **Հանձնարարականի մեկնաբանություններ**

<sup>97</sup> Մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի պաշտպանությունն ըստ մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, ԵԽ Մարդու իրավունքների ձեռնարկներ, 2012թ

Զինված ուժերի անձնակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ մտքի, խղճի ու կրոնի ազատության իրավունք ունի, ինչը սահմանված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 9-րդ հոդվածով: Սահմանափակումները այս իրավունքի իրականացմանը կարող են բխել զինված ուժերի ու զինծառայության առանձնահատկություններից: Յուրաքանչյուր դեպքում սակայն կիրառվող ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի Կոնվենցիայի 9-րդ հոդվածի երկրորդ մասով նախատեսված պայմաններին: Մասնավորապես, սահմանափակումը պետք է օրենքով նախատեսված լինի, իրավաչափ նպատակ հետապնդի և անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակության մեջ: Այն պետք է նաև համաչափ լինի նպատակին և կամայականորեն չկիրառվի:

Այս իրավունքի պաշտպանությունը նշանակում է նաև, որ վերադաս զինվորականները չեն կարող չարաշահել իրենց իշխանությունն ու իրենց կրոնական մոտեցումները պարտադրեն ստորադաս զինվորներին:

Ինչպես հավատացյալները, այնպես էլ որևէ կրոնի նկատմամբ հավատ չունեցողները պետք է անխտրականորեն պաշտպանվեն այս իրավունքի ներքո: Եվ սա հատկապես կիրառելի է զինված ուժերի պարագայում: Զինծառայությունը պետք է այնպես կազմակերպվի, որ հնարավորություն տա յուրաքանչյուրին ժամանակ հատկացնել իր կրոնին, այն է՝ աղոթել, հատուկ սննդակարգով սնվել և կրոնական տոներին ազատ լինել: Թերևս ամենակարևորը որևէ հավատքի չղավանողների նկատմամբ ճնշումներ կիրառելուց զերծ մնալու պարտականությունն է, որ պետք է խստորեն պահպանվի զինված ուժերի անձնակազմի կողմից:

Կոնվենցիայի 9-րդ հոդվածով նախատեսված իրավունքը պաշտպանում է անձին՝ ունենալ կամ չունենալ կրոնական համոզմունքներ, ապրել կրոնական համոզմունքների փորձով կամ առանց դրանց: Բայց այդ իրավունքը որոշակի սահմանափակումներով է մեկնաբանում կրոնի մասին բաց արտահայտվելու ազատությունը, որը ներկայացվում է որպես տվյալ կրոնի համոզմունքներից բխող անհրաժեշտություն կամ պահանջ: Քանի որ յուրաքանչյուր այդպիսի գործողություն պետք է սերտորեն կապված լինի տվյալ կրոնի կամ համոզմունքների հետ, ուստի յուրաքանչյուր արարք չէ, որ պաշտպանվում է կրոնով կամ համոզմունքով պահանջված լինելու փաստարկով: Մտքի, խղճի և կրոնի ազատությունը չի կարող համարվել սահմանափակված և իրավունքը չի կարող համարվել խախտված, եթե դա բխում է օրենքից, իսկ անձը դիմադրում է օրենքի կիրառմանը՝ ելնելով իր կրոնի

պահանջներից: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ նրանք, ովքեր բացահայտ կերպով արտահայտում են իրենց կրոնը կամ համոզմունքները, պետք է ընդունեն, որ չեն կարող գերծ մնալ քննադատությունից: Վերջիններս պետք է գիտակցեն, որ այլ անձիք կարող են ժխտել և քննադատել իրենց կրոնը կամ համոզմունքները, անգամ տարածել այլ կրոն, որոնք կարող են հակասել իրենց համոզմունքներին:

Այնուհանդերձ, ցանկացած պարագայում պետության պարտականությունն է ապահովել կրոնական կազմակերպությունների գործունեությունը, դրանց անկախությունն ու ինքնուրույնությունը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արձանագրվել են կրոնի ազատության իրավունքի տարբեր խախտումներ<sup>98</sup>: Օրինակ, այն հանգամանքը, որ մահապատժի դատապարտված անձին չի թույլատրվել հոգևորականի հետ տեսակցել, հիմնավորելով, որ նման արգելքը նախատեսված է եղել ներքին կանոնակարգով, դատարանի կողմից որակվել է որպես կրոնի ազատության իրավունքի խախտում, քանի որ նման սահմանափակումը նախատեսված չէ եղել օրենքով<sup>99</sup>: Միևնույն ժամանակ դպրոցի ուսուցչի կողմից գլխաշոր կրելու արգելքը գնահատվել է որպես համաչափ սահմանափակում 9-րդ հոդվածի ներքո: Մա հիմնավորվել է այն հանգամանքով, որ սահմանափակումը նպատակ է ունեցել դպրոցում կրոնական չեզոքություն ապահովել և չմիջամտել աշակերտների կրոնական համոզմունքներին<sup>100</sup>: Մեկ այլ գործով կրկին դիմումատուն բողոքել է, որ բարձր ուսումնական հաստատություններում իսլամական գլխաշոր կրելու արգելքը իր կրոնական ազատության իրավունքի խախտում է եղել: Ղատարանը սակայն որոշել է, որ նման արգելքը հիմնավորված է եղել և նպատակ է հետապնդել պաշտպանել հասարակական կարգն ու այլոց իրավունքները և անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակության մեջ: Հետևաբար, 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել<sup>101</sup>:

Խղճի և կրոնի ազատությունը չի կարող լայնորեն մեկնաբանվել որպես պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու արդարացում՝ խղճի ու կրոնական համոզմունքներից ելնելով: Միևնույն ժամանակ, անձը պարտավոր չէ փոխել իր կրոնը կամ համոզմունքները կամ հրաժարվել իր պաշտամունքն

---

<sup>98</sup> 9-րդ հոդվածի ներքո ՄԻԵԴ կողմից կայացված վճիռները ներկայացվում են փաստաթղթին կից

<sup>99</sup> Poltoratskiy v Ukraine, application No 38812/97

<sup>100</sup> Dahlab v Switzerland, application No 42393/98

<sup>101</sup> Leyla Sahin v. Turkey, application No. 44774/98

իրականացնելուց: Կրոնի ազատության նկատմամբ հնարավոր արգելքները սահմանում են սոսկ զինվորական ծառայությամբ պայմանավորված պարտականությունների իրականացման գերակայությունը, ըստ որի կրոնը, համոզմունքը կամ դրանց ծիսական պաշտամունքային բաղադրիչների իրականացումը չպետք է խոչընդոտեն զինվորական ծառայությանը:

Եվրոպայի Խորհրդի կողմից կրոնական համոզմունքների հիմքով այլընտրանքային ծառայության անցնելու հարցը մանրամասն կարգավորման է արժանացել: Ըստ այդմ, ԵԽ գրեթե բոլոր երկրներում ներդրված է այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու համակարգը:

Այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: ՀՀ-ում այլընտրանքային զինվորական ծառայության անցնելու հնարավորությունը նախատեսվեց 2003թ-ից, որը թույլ տվեց կրոնական և այլ համոզմունքների հիման վրա պարտադիր զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվող անձանց իրականացնել զինվորականի հետ կապ չունեցող ծառայություն: ՀՀ-ում ներկայումս գործում է Այլընտրանքային ծառայության մասին օրենքը, որի համաձայն այլընտրանքային ծառայությունը փոխարինում է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը, կապված չէ զենք կրելու, պահպանելու և օգտագործելու հետ և իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում: ՀՀ-ում նախատեսված է ինչպես այլընտրանքային զինվորական ծառայության /36 ամիս/, այնպես էլ այլընտրանքային աշխատանքային ծառայության հնարավորությունը /42 ամիս<sup>102/</sup>:

Յուրաքանչյուր դեպքում կրոնական համոզմունքների հիմքով այլընտրանքային ծառայության անցնելը չպետք է անձի դեմ խտրականության, հետապնդումների կամ կարգապահական պատասխանատվության հանգեցնի:

## ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐ

### Բայությանն ընդդեմ Հայաստանի<sup>103</sup>

<sup>102</sup> Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենք

<sup>103</sup> Bayatyan v. Armenia [GC], no. 23459/03, ECHR 2011.

Սույն գործի շրջանակներում քննվել է Եհովայի վկա հանդիսացող անձի կրոնի ազատության իրավունքի խախտման փաստը: Քաղաքացի Բայաթյանը հրաժարվել էր անցնել պարտադիր զինվորական ծառայություն, սակայն համաձայնել էր անցնել այլընտրանքային ծառայություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում տվյալ ժամանակաշրջանում այլընտրանքային ծառայության մասին օրենք ընդունված չէր՝ անձը ենթարկվել էր քրեական պատասխանատվության՝ դատապարտվելով ազատազրկման: Միննույն ժամանակ, Հայաստանի Հանրապետությունը, 2001 թ. դառնալով Եվրոպայի խորհրդի անդամ, պարտավորվել էր երեք տարվա ընթացքում ընդունել նման օրենք, իսկ այդ ժամանակաշրջանում ներում շնորհել բոլոր հրաժարվողներին՝ հետագայում նրանց այլընտրանքային ծառայության կանչելու պայմանով:

Պալատի վճռով սույն գործով Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում չէր ճանաչվել՝ հաշվի առնելով հանձնաժողովի և դատարանի նախադեպային իրավունքը՝ սույն հարցը դիտելով Կոնվենցիայի 9-րդ հոդվածը 4-րդ հոդվածի (ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում) հետ համակցությամբ, որը համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը թողնում է պետությունների հայեցողությանը: Դատարանը, ի դեմ Պալատի, հանգել էր եզրակացության, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածը չի երաշխավորում զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը՝ կրոնական համոզմունքների հիման վրա, հետևաբար, Բայաթյանի կրոնի ազատության իրավունքի խախտում առկա չէ: Սակայն դատարանի Մեծ պալատը փաստեց, որ Կոնվենցիան պետք է դիտել որպես կենդանի օրգանիզմ և այն մեկնաբանել իրավունքի առկա զարգացումների լույսի ներքո: Դատարանը գտել է, որ Բայաթյանին քրեական պատասխանատվության ենթարկելու շրջանում Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը (բացառությամբ միայն 4-ի) իրենց ներպետական իրավունքում և պրակտիկայում ճանաչել էին համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը, հետևաբար, այն ճանաչել էր նաև ՀՀ-ն: 2002-2003 թթ. այդ հարցի առնչությամբ, պետությունների ներպետական իրավական կարգավորումներով և միջազգային համաձայնագրերով պայմանավորված, գոյություն ունեւ հաստատված կոնսենսուս Եվրոպայի և հարևան պետությունների միջև: Հետևաբար, Կոնվենցիայի 9-րդ հոդվածը սույն հարցի առնչությամբ այլևս չպետք է դիտարկվի 4-րդ հոդվածի լույսի ներքո: Կոնվենցիայի 9-րդ հոդվածը որպես այդպիսին չի ճանաչում զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Սակայն Մեծ պալատը փաստել է, որ զինվորական ծառայության մերժման պայմաններում, պայմանավորված անձի զինվորական ծառայություն անցնելու պարտականության և բավարար հաստատվածություն, լրջություն և կարևորություն ունեցող կրոնական կամ այլ համոզմունքի միջև լուրջ և անհաղթահարելի կոնֆլիկտով, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի երաշխիքները գործում են: Մեծ պալատի գնահատմամբ՝ Բայաթյանի կողմից զինվորական ծառայություն անցնելուց հրաժարվելը հանդիսացել է նրա կրոնական համոզմունքների արտահայտման միջոց: Դատարանը քննարկել է այն հարցը, թե արդյոք



դիմումատուի դատապարտումը եղել է օրինական: Այն նախատեսված է եղել օրենքով, սակայն դատարանը չի քննարկել դրա հետապնդող նպատակի իրավաչափության հարցը, այն է՝ հասարակական կարգը և այլոց իրավունքների պաշտպանությունը: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտության հարցին պատասխանելիս դատարանը փաստել է, որ Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մեծամասնությունը ճանաչում է համոզմունքների հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքը: Դիմումատուն, լինելով Եհովայի վկա, հրաժարվել է զինվորական ծառայություն անցնելուց ոչ թե մասնավոր շահ հետապնդելով, այլ հիմնված իր կրոնական համոզմունքների վրա: Դատարանը փաստում է, որ պարտադիր զինվորական ծառայությունը քաղաքացու վրա դնում է ծանր պարտականություն: Հետևաբար, պետությունը պարտավոր է ապահովել դրան այլընտրանք: Մինչդեռ Բայթանի դատապարտումը եղել է այն շրջանում, երբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է միջազգային պարտավորություն՝ ընդունելու այլընտրանքային ծառայության մասին օրենք և այդ ընթացքում ներում շնորհել զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց՝ հետագայում նրանց այլընտրանքային ծառայության կանչելու պայմանով: Այսինքն՝ պետությունը, չկատարելով իր միջազգային պարտավորությունը, քրեական պատասխանատվության է ենթարկել քաղաքացուն: Հետևաբար, դիմումատուի դատապարտումը չի հետապնդել սոցիալական հրատապ անհրաժեշտություն՝ խախտելով նրա՝ կրոնի ազատության իրավունքը:

#### **Լեյլա Սահինն ընդդեմ Թուրքիայի<sup>104</sup>**

1997թ. օգոստոստին Թուրքիայի Բուրսա քաղաքի բժշկական համալսարանի ուսանողուհի Լեյլա Սահինը հաջողությամբ հանձնում է ընդունելության քննությունները և ընդունվում Ստամբուլի բժշկական համալսարան: Նրա սովորելու ընթացքում, 1998թ. փետրվարին Ստամբուլի համալսարանում տարածվում է համալսարանի պրոռեկտորի շրջաբերականը, համաձայն որի արգելվում էր ուսանողներին կրել գլխաշոր: Ըստ շրջաբերականի, որը հաստատվել էր համալսարանի գործադիր խորհրդի կողմից, այն ուսանողները, այդ թվում նաև արտասահմանցի ուսանողները, ովքեր դասերին կներկանային իսլամական գլխաշորով կամ կկրեին մորուք, կզրկվեին դասընթացներին և քննություններին մասնակցելու իրավունքից:

Դիմողը նշել է, որ իսլամական գլխաշոր կրելու արգելքը ուսումնական հաստատության կողմից հանդիսանում է կրոնի ազատության, մասնավորապես, իր կրոնը ազատորեն արտահայտելու իրավունքի միջամտություն՝ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին մասի ներքո:

Դատարանը գլխաշոր կրելու արգելքը դիտել է իրավական և սոցիալական հարթությունում: Որոշման մեջ նվել է, որ խնդիրը շոշափում է ճայլոց իրավունքները՝ և ճհասարակական կարգի՝ պաշտպանությունը այն պետությունում, որտեղ բնակչության

<sup>104</sup> Case of Leyla Sahin v. Turkey, app. No 44774/98, 10 November 2005

մեծամասնությունը, թեև հարում է աշխարհիկ կյանքի եղանակին և կնոջ իրավունքների պաշտպանությանը, իսլամի հավատքի կրողներ են: Հետևաբար, այլ ոլորտի ազատությունը սահմանափակելու համար առկա է սուր սոցիալական պահանջ՝ հատկապես հաշվի առնելով, որ կրոնական այս սիմվոլիկան ձեռք է բերել քաղաքական նշանակություն թուրքիայում: Դատարանը նշել է նաև, որ ծայրահեղական քաղաքական շարժումները թուրքիայում ձգտում են հասարակության վրա իրենց կրոնական սիմվոլները և ուսմունքները տարածել: Նման հանգամանքներում պետությունը կարող է միջոցներ ձեռնարկել նման քաղաքական շարժումների դեմ՝ իր պատմական փորձի հիման վրա: Հետևաբար, ինդրո առարկա շրջաբերական պետք է դիտել այդ լույսի ներքո և, հետևաբար, շրջաբերականը հետապնդում է իրավաչափ նպատակ, որն է՝ համալսարանում **բազմախոհության** ապահովումը: Միմվոլիկաների թույլատրումը, տվյալ դեպքում գլխաշորի կրումը, հակասում է պլուրալիզմի սկզբունքին, որի պաշտպանությունը պետության պարտականությունն է: Ընդ որում թուրքիայի համալսարաններում նման արգելքը սահմանված է բոլոր տեսակի կրոնների և բոլոր տեսակի սիմվոլիկաների նկատմամբ: Հետևաբար, Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

## ԹԵՄԱ 11. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Փաստարկներ հոգուտ պաշտպանության ոլորտի նկատմամբ հասարակական հսկողության<sup>105</sup>

Պաշտպանության ոլորտի պատասխանատվությունը և հրապարակայնությունը ապահովելու համար կարևորագույն նշանակություն ունի հասարակության ընդգրկումը ժողովրդավարական վերահսկողության գործընթացում: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ընդգրկումը պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակմանը նշանակալի ներդրում է պատասխանատվության և արդյունավետ կառավարման գործում: ՔՀԿ-ները գործում են ոչ միայն որպես «հսկիչ» (watch dog) կառավարության նկատմամբ, այլև ծառայում են որպես հասարակական անվտանգության և հարակից ծառայությունների համար պատասխանատու հաստատությունների և ներկայացուցչությունների նկատմամբ հասարակության վստահության ցուցանիշ: Այնպիսի գործառույթները, ինչպիսիք են կառավարության գործունեության, քաղաքականության ձևավորման նկատմամբ մոնիթորինգը /դիտարկումը/, օրենքներին և մարդու իրավունքներին տվյալ ճյուղի գործունեության համապատասխանության նկատմամբ հսկողությունը, մեծապես նպաստում են տվյալ գործընթացին: Ավելին, քաղաքացիական հասարակության խմբերի կողմից տեղական հանրության և համակարծիք անձանց խմբերի շահերի ներկայացման քաղաքականությունը նպաստում է հետաքրքրության բարձրացմանը այն անձանց նկատմամբ, որոնք հաճախ դուրս են մնում իշխանությունների ուշադրությունից, և բացում է ավելի լայն հորիզոններ պետական քաղաքականության մշակման համար: Այսպիսով, ՔՀԿ-ները կարևորագույն դեր ունեն ոչ միայն արդեն ձևավորված ժողովրդավարական հասարակություններում, այլև հետպատերազմյան, հետավտորիտար և ոչ ժողովրդավարական երկրներում, որտեղ ՔՀԿ-ների գործունեությունը կարող է, այնուամենայնիվ, ազդել քաղաքական գործընթացի մենաշնորհը վայելող էլիտայի որոշումների կայացման վրա:

<sup>105</sup> «Անվտանգության ոլորտի նկատմամբ հասարակական վերահսկողություն», Ուղեցույց քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար, Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական հսկողության կենտրոն, Նյու Քըմբրիջի հայերեն թարգմանվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ կողմից

## **Պաշտպանության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական հսկողության սկզբունքները**

Սառը պատերազմի ավարտից հետո պաշտպանության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական հսկողությունը սկսեց հանդես գալ որպես միջազգային նորմ: Վերափոխվող ժողովրդավարական հասարակությունները միջոցներ էին փնտրում կանոնակարգելու իրենց պաշտպանության ոլորտը բյուրոկրատիան ոչնչացնելու նպատակով և ձևափոխելու այդ ուռճացած կառույցը, որը նախկինում պատասխանատու էր ավտորիտար և տոտալիտար ռեժիմների ապահովման համար:

Հետպատերազմյան հասարակությունները միջոցներ էին փնտրում հիմնելու հաստատություններ, որոնք հիմք կհանդիսանային ժողովրդավարական հասարակություն ստեղծելու համար:

Պաշտպանության ոլորտի կանոնակարգումը դարձավ ժողովրդավարական նպատակներին հասնելու միջոց, և կազմակերպական սկզբունք ազգային, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների համար:

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական հսկողությունը ենթադրում է ժողովրդավարական հաստատությունների, հիմնականում խորհրդարանի և դրան հարակից հանձնաժողովների, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների, գործադիր իշխանության և ինքնին պաշտպանության հատվածի ակտիվ ներգրավումը պաշտպանության քաղաքականության ձևավորմանը, իրականացմանը, դիտարկմանը և բարեփոխմանը:

Վերոնշյալներից միայն խորհրդարանը, ՔՀԿ-ները և լրատվամիջոցներն են, որ լինելով համեմատաբար ճկուն, կարող են հասցեագրել հսկողության գործընթացի բացերը և քաղաքականության շրջանակները:

Պաշտպանության ոլորտում հակաժողովրդավարական և անապահով ավանդույթները կոտրելու նպատակով որպես սկզբունք հաստատվեց պաշտպանության իրականացումը ժողովրդավարական հասարակության համար՝ պաշտպանության ոլորտի հաստատությունները բարեփոխելու և հասարակությանն ու անկախ դատավորներին ենթակա դարձնելու միջոցով:

Մարդու իրավունքների և ժողովրդավարական ազատությունների վերաբերյալ հանրային անվտանգության ծրագրերը, ի տարբերություն հաճախ վիճելի արտաքին վտանգներով պայմանավորված «ազգային» անվտանգության նկատառումներին, հանդիսանում են առաջնահերթ նպատակ ընդդեմ գերտերությունների:

Կարևորելով անձի անվտանգությունը և առանձին անհատներից վախի բացակայությունը՝ պետությունները կարողացել են տարանջատել պաշտպանության ոլորտին վերաբերող ծառայությունները արտաքին անվտանգությունից՝ շեշտադրելով քաղաքացիների անվտանգությունը և վերջիններիս մարդու իրավունքները:

Այսօր պաշտպանության ոլորտի ժողովրդավարական կառավարումը հանդիսանում է միջազգային նորմ և նախապայման անդամակցելու տարբեր միջազգային ու տարածաշրջանային ասոցիացիաներին, ինչպես նաև միջազգային բարեփոխումների և համագործակցության փաթեթներ ստանալու համար:

Պաշտպանության ոլորտի բարեփոխումներ իրականացնելու փորձի աճը թույլ տվեց զանազանել ոլորտին վերաբերելի հասկացությունները և առավել հստակ դարձնել ժողովրդավարական հսկողության իրականացման և կյանքի կոչման լավագույն մեթոդները:

### **Քաղաքացիական հասարակության հասկացությունը և լիազորությունները**

Քաղաքացիական հասարակությունը ընդհանուր առմամբ միասնական հետաքրքրություններ, նպատակներ և արժեքներ ունեցող քաղաքացիների կամավոր հավաքական գործողությունների ամբողջություն է: Քաղաքացիական հասարակությունը ընդգրկում է այն միջոցները, որոնց շնորհիվ քաղաքացիները հաղորդակցվում են՝ իրենց կենսագործունեությունն իրականացնելու, կարծիքներ հայտնելու, շահեր արտահայտելու, տեղեկատվություն փոխանակելու և տարաձայնությունները հարթելու նպատակով, ձևավորելու հարաբերություններ և սոցիալական հաստատություններ, որոնք այնքան տարբեր են, ինչքան դրանք ստեղծողները տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում:

Առևտրային միությունները, բնապահպանական խմբերը, կրոնական միավորումները, հետազոտական խմբերը, ազգագրական և տեղացի անձանց շարժումները քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օրինակներ են հանդիսանում:

Քաղաքացիական հասարակության գործողությունները ի վերջո վերածվում են շահույթ չհետապնդող գործունեության հասարակության հավաքական շահի համար՝ առանձնացնելով դրանք այլ քաղաքացիական կոալիցիաներից, որոնք խաթարում են հանրության շահերը /օրինակ՝ կազմակերպված հանցավոր խմբերը/: Երբեմն

քաղաքացիական հասարակության խմբերը կարող են շահագրգռված լինել հատուկ շահերով կամ խնդիրներով, բայց դրանք չեն դեկավարվում միայն մասնավոր կամ տնտեսական շահերով, ինչպես, օրինակ, գործարար միությունները: Այն ժամանակ, երբ վերջիններս անկախ են պետությունից և գոյություն ունեն հանրային ոլորտում, ՔՀԿ-ները հարաբերակցվում են կառավարության և քաղաքական շրջանակների հետ: Օգնելով վստահություն ձևավորել տարբեր սոցիալական խմբերի միջև, խրախուսելով երկխոսությունը հասարակության անդամների, պետական հաստատությունների և պաշտոնատար անձանց միջև և ներկայացնելով տեղական համայնքի շահերը, ՔՀԿ-ները բարելավում են քաղաքացիական կենսակերպը և ինքնին սոցիալական կառավարման գործընթացը տվյալ պետական կառուցվածքում: ՔՀԿ-ները նույնպես ընդգրկված են կառավարության քաղաքականության և գործունեության դիտարկման և պրոպագանդման կարևոր գործում:

Քաղաքացիական հասարակության, կառավարության և պետական մարմինների միջև դինամիկ հարաբերակցությունը հանդիսանում է ժողովրդավարական կառույցների թափանցիկության չափանիշ: Այն արտացոլում է ժողովրդավարական մշակույթը քաղաքացի-պետություն հարաբերություններում հիմնված հրապարակայնության և պատասխանատվության վրա, որը հանդիսանում է բաց կառավարության կենտրոնական սկզբունքը:

Հրապարակայնությունը շահավետ ազդեցություն ունի ժողովրդավարական կառավարման վրա՝ շահագրգիռ քաղաքացիները սովորաբար չեն փնտրում այն տեղեկատվությունը, որն ազատ է իրենց համար, քանի որ հաճախ չգիտեն իրենց այդ իրավունքի մասին, սակայն ավելի ակտիվ և տեղեկացված հասարակությունը թույլ կտա առավել ընդգրկուն քննարկել կառավարության քաղաքականությունը և քաղաքականության այլընտրանքները:

ՔՀԿ-ները կենսական դեր կարող են խաղալ մասնագիտացված ոչ-կառավարական կազմակերպություններում, ինչը կարող է խթանել երկխոսությունը և հանրության ուշադրությունը սևեռել քաղաքական խնդիրների վրա: Ակտիվ քաղաքացիները և խմբերը քաղաքացիական հասարակությունում կարող են նույնպես ապահովել առավել ընդգրկուն կերպով հանրային խնդիրների և քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության վերանայումը և վերլուծությունը՝ այսպիսով վերջիններին հնարավորություն ընձեռելով մասնակցել որոշում կայացնելու գործընթացին տեղական, ազգային և միջազգային լրատվության միջոցներով: Սա կապահովի որոշում կայացնելու գործընթացի առավելագույն հրապարակայնությունը:

ՔՀԿ-ները նշանակալից դեր են տանում նաև պաշտպանության ոլորտի զարգացման գործում: OECD խրախուսում է իր անդամներին «աջակցել քաղաքացիական հասարակության ջանքերին ստեղծելու բարեփոխումների միջավայր պաշտպանության համակարգի ժողովրդավարական կառավարման համար»:

Չնայած զարգացող համայնքը սովոր է ՀԿ-ներին և այլ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին տեսնելու որպես այլընտրանքային ծառայություններ մատուցող և դոնորական աջակցության աղբյուր, այնուամենայնիվ, դրանք կարևոր դեր են տանում լայնամասշտաբ քաղաքական գործընթացում: Օրինակ, OECD անդամները հրահանգավորված են աջակցություն ցուցաբերելու քաղաքացիական հասարակության խմբերին, որպես «միջնորդներ քաղաքականության, որոնք կարող են նպաստել և բարձրացնել իրազեկությունը անվտանգության ոլորտում որոշումներ կայացնելիս, ինչպես նաև ներկայացնել գործնական առաջարկներ բարեփոխման գործընթացին աջակցելու համար»:

Հետևաբար, միջազգային դոնորները պետք է աջակցեն ՔՀԿ-ներին, որոնք ունեն իրական կամ հրատապ լիազորություններ՝ ձևավորելու համագործակցության երկխոսության հարթակ, որը կարող է նախ և առաջ ազդել քաղաքականության ձևավորման և իրականացման գործընթացի վրա, և հետագայում վճռականորեն արագացնել այն:

### **Պաշտպանության ոլորտի նկատմամբ հասարակական վերահսկողության նպատակահարմարության խնդիրը**

Անվտանգությունը ողջ աշխարհում, սկսած ազգային պետությունների ստեղծման պահից, ավանդաբար սահմանվել է որպես ռազմական հասկացություն, սակայն կառավարման ժողովրդավարական սկզբունքների տարածումը և մարդու անվտանգության առավել լայն, ապառազմականացված և նեղ հայեցակարգի ընդունումը, որպես հասարակական արժեք, նախ և առաջ կասկածի տակ դրեց և հետագայում բացառեց անվտանգության հասկացության դիտարկումը բացառապես ռազմական ոլորտում:

Համաձայն մարդու անվտանգության սկզբունքի, անվտանգության ապահովման վերաբերյալ դրույթները պետք է ուղղակիորեն համապատասխանեն ժողովրդի կարիքներին: Պատասխանատվությունը և թափանցիկությունը ապահովելու համար պարտադիր է, որ տեղեկատվությունը գաղտնի պահվի միայն օրինական և հստակ սահմանված պատճառներով: Անվտանգության ոլորտում

հաճախ փորձում են սահմանափակել իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության ազատությունը, իսկ ազգային անվտանգությունն ապահովելու համար պահանջվում են, այնումենայնիվ, գաղտնիության որոշակի տարրեր: Սակայն չափից ավելի գաղտնիությունը կարող է լինել հակաարդյունավետ և հող նախապատրաստել պաշտոնեական հանցագործությունների համար: Օրինակ, ֆինանսական կեղծարարությունները կամ այլ նմանատիպ գործունեությունը թաքցնելու համար:

Քաղաքացիների անվտանգության ապահովումը պետության հիմնարար գործառույթներից մեկն է: Ժողովրդավարական պետությունը պարտավոր է ապահովել անվտանգությունը, որը կլինի արդյունավետ, թափանցիկ և հաշվետու է իր քաղաքացիներին: Ինչպես ցանկացած այլ պետական ծառայություն, ժողովրդավարական հասարակությունում, պետությունը ամենաիրավաչափ հարթակն է հասարակական անվտանգությունն ապահովելու համար: Մի շարք փոքր խնդիրներ կարող է դրվել լիցենզիավորված մասնավոր ընկերությունների վրա, սակայն նրանց լիազորություններն ու գործողությունները պետք է ենթարկվեն մոնիթորինգի և վերահսկողության պետական իշխանության և ՔՀԿ-ների կողմից: Հետադարձ կապի տարրեր միջոցներով - քարոզչության, ՋԼՄ-ների, ինստիտուցիոնալ և այլ պաշտոնական պլատֆորմների միջոցով, ՔՀԿ-ները կարող են երաշխավորել, որ անվտանգության ապահովող գործակալությունները գործեն իրենց լիազորությունների սահմաններում, չչարաշահեն հարկադրական ուժը, և գործեն ավելի արդյունավետ՝ իրենց քաղաքականության և գործողությունները մշտական վերահսկողության շնորհիվ: Քաղաքացիական հասարակության դերը անվտանգության ոլորտի վերահսկողության հարցում կարելի է դիտարկել որպես ժողովրդավարական գործընթացները ամրապնդելու միջոց՝ քաղաքացիների քաղաքական մասնակցությունը ընդլայնելու ճանապարհով:

Քաղաքացիական հասարակության իրավասությունը բարելավելու քաղաքացիական կյանքը տարածվում է նաև անվտանգության քաղաքականության ոլորտի և կառավարման վրա: Եվ՝ ժողովրդավարական, և՛ ոչ ժողովրդավարական քաղաքակրթություններում անվտանգության քաղաքականությունը պատմականորեն ուղղված է եղել քաղաքական և անվտանգության էլիտայի պահպանմանը, ինչպես նաև արտադրողների և գործարարների համար, որոնք օգտուտներ են քաղել՝ քաղաքական գործիչների և պաշտպանության ոլորտի բյուրոկրատների վրա ազդելով կամ նրանց հետ համագործակցելով: Նման վերնախավը իր բնույթով զանազան է, սակայն ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես ռազմական, ոստիկանության եւ



մտավորականության վերնախավ, որոնք կառավարում են երկիրը ուղղակիորեն կամ քաղաքացիական վստահված անձանց միջոցով, արտադրողների և գործարարների հետ համագործակցող անվտանգության վերնախավը, որոնք քաղաքականությունը համապատասխանեցնում են իրենց շահերին, քաղաքացիական քաղաքական գործիչները, որոնք հենվելով անվտանգության վերնախավի վրա, փրձում են պահպանել իրենց իշխանությունը, և անվտանգության վերնախավերը, որն ուղղակիորեն կարող է գրավել իշխանությունը ռազմական հեղաշրջման միջոցով: Թույլ, չկայացած, կամ հակամարտությունների մեջ գտնվող երկրներում կարելի է տեսնել նույն սկզբունքների շահագործումը, բայց ոչ ֆորմալ «իշխող անձանց» խմբավորումների կողմից, որոնք փոխարինում են ավանդական պետական կառույցներին:

Ի հակադրություն, քաղաքացիներն ունեն լիազորություն բարձրաձայնել իրենց տեսակետը հասարակական անվտանգության իրականացման վերաբերյալ՝ որպես դրա անմիջական ստացողներ: Նրանցից ոմանք նույնպես ձեռք են բերում մասնագիտական փորձ համապատասխան ոլորտներում: Քաղաքացիները միայն ընտրողներ չեն, նրանք նաև հարկատուներ են, հանրային ծառայություններից օգտվողներ, որոշակի տարածքի բնակիչներ են և կրոնական համայնքների և այլ ոլորտների խմբերի անդամներ: Այս խմբերից յուրքանչյուրը լաված լինելու իրավունք ունի: Քաղաքացիական հասարակությունը լրացնում է ժողովրդավարական գործընթացը, հնարավորություն տալով քաղաքական գործիչներին հասանելի լինելու հասարակության այն հատվածներին, որոնց կարծիքը այլապես կբացառվի: Հատկացված պետական միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովելու համար, հանրային ծառայություններից օգտվողները կարող են ներգրավել խորհրդակցական գործընթացում:

Ավելին, անկախ ՔՀԿ-ները ձեռնպահ են մնում կուսակցական քաղաքական գործիչներից և հաճախ վայելում հանրային վստահությունը, քանի որ նրանք դիտարկվում են կառավարությունից անկախ: Որոշ խոշոր հասարակական կազմակերպություններ, որոնք զբաղվում են մեկ ոլորտի խնդիրներով, ձեռք են բերում հասարակական ճանաչում իրենց ազգային կամ միջազգային գործունեությամբ: Այս խմբերը, ինչպիսիք են Amnesty International-ը կամ Human Rights Watch-ը, ունեն այնպիսի միջազգային ճանաչում, որը թույլ է տալիս վերջիններիս հաղորդակցվել Կառավարության և միջազգային կազմակերպությունների հետ ինչպես հավասարը հավասարի: Այս

փորձարարությունը արժեքավոր ռեսուրս է քաղաքականության մշակման գործընթացում, քանի որ այն հնարավորություն է տալիս քաղաքական գործիչներին, և օրենսդրին ձեռք բերել տեղեկատվություն, որը վստահելի է և անկախ: ՔՀԿ - ների դիրքը և կարևոր ներդրումը հատկապես ճանաչում է գտել ՄԱԿ-ի Անձանց իրավունքների և պարտականությունների Հռչակագրում, համընդհանուր ճանաչում ունեցող մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությանը աջակցող հասարակական խմբերում և մարմիններում:

## ԹԵՄԱ 12. ԳԵՆԴԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

### Տերմինոլոգիա

Գենդեր- վերաբերում է տղամարդկանց և կանանց միջև առկա հարաբերությունների սոցիալական կողմին, որը դրսևորվում է կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ քաղաքականությունը, տնտեսությունը, իրավունքը, գաղափարախոսությունը և մշակույթը, կրթությունն ու գիտությունը: Այլ կերպ ասած, գենդերը ցույց է տալիս կանանց և տղամարդկանց փոխհարաբերությունների սոցիալական կողմը, նրանց սոցիալական դերերը, սոցիալական սպասումները անհատից՝ ելնելով նրա սեռային պատկանելիությունից: Գենդեր ասելով հասկացվում է սոցիալապես կառուցված դերեր, ինչպես նաև վարքագիծ, գործողություններ և բնորոշ գծեր ու առանձնահատկություններ, որոնք տվյալ հասարակության մեջ վերագրվում են անձին՝ պայմանավորված նրա սեռով և որոնք ընդունելի ու ցանկալի են:

Գենդերային հավասարություն- վերաբերում է կանանց և տղամարդկանց, աղջիկների ու տղաների հավասար իրավունքներին, պարտականություններին ու հնարավորություններին: Հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ պետք է նույնականացվեն, այլ այն, որ իրավունքներն ու պարտականությունները, տրվող հնարավորությունները չպետք է որոշվեն սեռով<sup>106</sup>:

Գենդերային հավասարություն նշանակում է նաև հավասար իրավունքներ և հնարավորություններ, հանրության ուշադրություն, պատասխանատվություն և երկու սեռերի մասնակցություն հասարակական ու մասնավոր կյանքի բոլոր ոլորտներում և ներառում է

<sup>106</sup> NATO Bi-Strategic Command Directive, *Integrating UNSCR 1325 and Gender Perspective into the NATO Command Structure*

կանանց ու տղամարդկանց համար ռեսուրսների հավասար մատչելիություն և դրանց հավասար բաշխում վերջիններիս միջև<sup>107</sup>:

\*\*\*

Զինված ուժերի համատեքստում գենդերային հավասարության սկզբունքը համեմատաբար նոր զարգացումների արդյունք է: Գենդեր եզրույթը չի վերաբերում սուկ կանանց, այն վերաբերում է տղամարդկանց և կանանց: Զինված ուժերի պարագայում կին կամ տղամարդ լինելու, ինչպես նաև նրանց կողմից իրականացվող դերերի վերաբերյալ դատողությունները ազդում են երկու սեռերի կողմից միմյանց հանդեպ դրսևորվող վերաբերմունքի վրա, ինչպես նաև հասարակության հետ ձևավորվող հարաբերությունների:

Զինված հակամարտությունների թվի մեծացումը և դրանցից բխող խախտումները հանգեցրել են նաև հարկադիր անհետացումների թվի մեծացման, որից շուրջ 75%-ը կանայք և երեխաներն են հանդիսանում<sup>108</sup>:

Զինված հակամարտությունների ընթացքում կանանց նկատմամբ իրականացվող խախտումներն ու չարաշահումները տարբեր բնույթի են, օրինակ՝ բռնաբարություն, սեռական ստրկություն և հարկադիր պոռնկություն և այլն:

Զինված ընդհարումների և հակամարտությունների ժամանակ կանայք սակայն հանդես են գալիս ոչ միայն տուժողի կարգավիճակում, այլ նաև այլ կարգավիճակներում, օրինակ, ընդգրկվում են զինված ուժերի վարչական և բժշկական սպասարկման անգձևակազմերում: Սակայն, կանայք շարունակում են բացակայել և մասնակցություն չունենալ խաղաղության հաստատման բանակցություններում ու պատերազմի ու խաղաղության քաղաքականության մշակման գործընթացներում: Միննույն ժամանակ շարունակում է աճել կանանց՝ զինված ընդհարումների կանխարգելման ու խաղաղության հաստատման գործում ունեցած մեծ դերն ու նշանակությունը:

**Անվտանգության ոլորտում գենդերային հավասարության ապահովման անհրաժեշտությունը<sup>109</sup>**

<sup>107</sup> <http://www.coe.int/t/DGHL/STANDARDSETTING/EQUALITY/>

<sup>108</sup> <http://www.un.org/womenwatch/daw/followup/session/presskit/fs5.htm>

<sup>109</sup> Gender and Security Sector Reform, DCAF Backgrounder, 2010

Կանանց նկատմամբ իրականացվող լայնածավալ խախտումները պահանջում են անվտանգության ոլորտում հաշվի առնել կանանց և աղջիկների կարիքներն ու առանձնահատկությունները: Ընդ որում, կանանց նկատմամբ դրսևորվող խախտումները ոչ միայն իգական սեռի խնդիրն է, այլ լուրջ սպառնալիք է տվյալ հասարակության սոցիալական կայունության համար: Այդ իսկ պատճառով կանայք նույնպես պետք է հնարավորություն ունենան մասնակցել անվտանգության քաղաքականության մշակմանը և ներգրավել անվտանգության ոլորտի աշխատանքներում<sup>110</sup>:

Անվտանգության ոլորտի մասնագետների և պրակտիկ աշխատակիցների կարծիքով անվտանգության ոլորտ գենդերային հարցերի ներթափանցումը նպաստում է այդ ոլորտի կառույցների օպերատիվ արդյունավետությանը: Ինչը բացատրվում է հետևյալ հանգամանքներով՝

*Ծառայությունների արդյունավետ մատուցում*- Անվտանգության ոլորտում կանանց և տղամարդկանց ունեցած փորձն ու առաջնահերթությունները տարբեր են: Գոյություն ունեցող տարբերությունները անվտանգության ոլորտի քաղաքականությունն ու ռամզավարությունը մշակելիս ուժեղացնում է համապատասխան կառույցների կարողությունները՝ կանխել գենդերով պայմանավորված բռնություններն ու պատշաճ ուշադրություն դարձնել հանրության կարիքներին:

*Ներկայացուցչություն*- Անվտանգության ոլորտի ներկայացուցչական կառույցները, որոնք արտացոլում են տվյալ հասարակությունը ամբողջության մեջ՝ այսինքն՝ ազգաբնակչության էթնիկական, կրոնական, սեռային և լեզվական առանձնահատկություններով հանդերձ, ավելի օրինական և վստահելի են համարվում: Այնուհանդերձ, տղամարդիկ շարունակում են ավելի շատ ներկայացված լինել անվտանգության ոլորտում: Սա նկատելի է ինչպես ոստիկանության, այնպես էլ զինված ուժերի պարագայում: ՄԱԿ-ի խաղաղապահ զորքերում 2008թվականին տղամարդիկ կազմել են ընդհանուրի 98%-ը: Նույնիսկ այն դեպքում, երբ կանայք ներգրավվում են անվտանգության ոլորտում, նրանց հատկացվող դերերն ու պաշտոնները շատ ավելի ցածր են, քան տղամարդկանցը:

*Հարգանք մարդու իրավունքների նկատմամբ*- Անվտանգության ոլորտի անձնակազմերը, որոնք հարգում են իրենց գործընկերների և բնակչության մարդու

---

<sup>110</sup> Implementing the Women, Peace and Security Resolutions in Security Sector Reform, Megan Bastick and Daniel de Torres, OSCE-ODIHR, Geneva Centre for the Democratic Control of Armed Forces

իրավունքները, ունակ են առողջ և արդյունավետ աշխատանքային միջավայր ստեղծել և հանրության վստահությունը նվաճել: Միննույն ժամանակ, անվտանգության ոլորտում, հատկապես զինված ուժերում, բավականին մեծ է սեռական ոտնձգությունների թիվը՝ որպես մարդու իրավունքների խախտման կոպիտ դրսևորում: Օրինակ, 2006թ-ին Մեծ Բրիտանիայի Պաշտպանության Նախարարության կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ծառայության մեջ գտնվող կանանց երկու երրորդը սեռական ոտնձգությունների գոհ է դարձել: Իսկ միջազգային կառույցների կողմից իրականացվող ուսումնասիրությունները բացահայտել են, որ անվտանգության ոլորտի աշխատակիցները հաշտակալի են ենթարկվում թրաֆիկինգի, սեռական բռնությունների, հարկադիր պոռնկության և ընտանեկան բռնությունների:

Հետևաբար, զինված ուժերում տեղի ունեցող մարդու իրավունքների խախտումների կանխարգելումն ու պատասխանատվության ենթարկումը պահանջում են անվտանգության ոլորտի բարեփոխումների գործընթացների ամբողջականացում և կոմբինացում: Սա հնարավոր է իրականացնել օրինակ վարքագծի կանոնադրքերի ընդունմամբ, անկախ վերահսկողական մեխանիզմների հիմնադրմամբ, բողոքարկման համակարգերի ձևավորմամբ և այլն:

*Տեղական պահանջատիրություն*- Անվտանգության ոլորտ կանանց ներգարվումը արդյունավետ տեղական պահանջատիրության կազմակերպման բաղադրիչներից մեկն է: Կանանց կամ գենդերային հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները տեղական պահանջատիրության իրականացման կարևոր դերակատարներից են, քանի որ նրանք աշխատում են տուժողների հետ, կանխում են խախտումները և այլն: Նման կառույցները տեղական անվտանգության և արդարադատության կարիքների վերաբերյալ կարևոր տեղեկատվության կրողներ կարող են հանդիսանալ, և ըստ այդմ կարող են համայնքի և անվտանգության ոլորտի պատասխանատուների միջև որպես կառույց ծառայել:

*Վերահսկողություն և հաշվետվողականություն*- Վերահսկողություն իրականացնող մարմիններում, ինչպիսիք են օրինակ խորհրդարանը, մարդու իրավունքների պաշտպանը, քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և դատական իշխանությունը, կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը մեծացնում է այդ մարմինների նկատմամբ վերահսկողությունն ու բնակչության կարիքներին արձագանքումը ավելի արդյունավետ դարձնում: Վերահսկողություն

իրականացնող մարմիններում իգական սեռի փորձագետներ ներգրավելը նպաստում է նաև մարդու իրավունքների չարաշահումների կանխմանն ու պատժելիությանը:

### **Անվտանգության ոլորտում կանանց ներգրավվածության հիմնական խոչընդոտները**

Կանանց անվտանգության ոլորտ և հատկապես զինված ուժեր ներգրավելու գործընթացում հանդիպող հիմնական խոչընդոտները հետևյալն են.

*Խտրականություն և կարծրատիպեր-* Հաճախ կանայք զրկվում են անվտանգության ոլորտի կառույցներում պաշտոն զբաղեցնելուց կամ այդ ոլորտում մասնագիտանալուց: Սա կապված է նաև հասարակություններում տիրող մշակութային կարծրատիպերի հետ, ըստ որի անվտանգությունն ու զինված ուժերը տղամարդկանց աշխատանքն է, որտեղ իգական սեռը տեղ չունի և բախվում է խտրականության դրսևորումների:

*Գենդերով պայմանավորված բռնությունները չեն դիտարկվում որպես անվտանգության սպառնալիք-* Չնայած գենդերով պայմանավորված բռնությունների թվի աճին, անվտանգության քաղաքականությունն ու ռազմավարությունը հազվադեպ է այդ հանգամանքին պատշաճ ուշադրություն դարձնում և համապատասխան քայլեր ձեռնարկում կանխարգելման համար: Սա բացատրվում է այն հանգամանքով, որ գենդերով պայմանավորված բռնությունները դիտարկվում են որպես մասնավոր խնդիր և խախտում, իսկ պետության անվտանգության դեմ ուղղված խախտումները, օրինակ, տեռորիզմը, գերակա դեր է ստանձնում և հասարակության անվտանգության հիմնական սպառնալիքը դիտարկվում:

*Ըմբռնման բացակայություն-* գենդերի և գենդերային հավասարության վերաբերյալ ինֆորմացիայի և ըմբռնման բացակայությունը կարող է հանգեցնել նրան, որ կանայք դուրս մնան անվտանգության և արդարադատության ոլորտի պատասխանատուների և դերակատարների շարքից

*Կրթական համակարգի բացթողումները-* Հանրակրթական հաստատություններում աղջիկների նկատմամբ դրսևորվող խտրականության պատճառով կանայք ապագայում հնարավոր է չունենան այն հմտություններն ու կարողությունները, որոնք անհրաժեշտ են անվտանգության ոլորտ մտնելու համար

*Թույլ վերահսկողական և հաշվետվողականության մեխանիզմներ-* վերջինս կարող է մարդու իրավունքների խախտումների անպատժելիության հանգեցնել և խտրականություն սնուցել անվտանգության ոլորտի պատասխանատուների մոտ:

## ՄԱԿ-ի N 1325 Որոշումը Կանանց, Խաղաղության և Անվտանգության վերաբերյալ<sup>111</sup>

Գոյություն ունեն միջազգային և տարածաշրջանային մի շարք իրավական փաստաթղթեր ու մեխանիզմներ, որոնք նվիրված են անվտանգության ոլորտում կանանց ներգրավվածությանը և որոնք անվտանգության ոլորտի կառույցներից զենդերային առանձնահատկություններին համապատասխան մոտեցում են պահանջում: Նման մեխանիզմների մեջ կենտրոնականը վերաբերում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված 1325 Բանաձևին:

ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 31-ին ընդունվել է բանաձև անվտանգության ոլորտում և խաղաղության հարցում կանանց դերի վերաբերյալ: Բանաձևը վերահաստատում է կոնֆլիկտների կանխարգելման և հաղթահարման գործում, ինչպես նաև խաղաղության հաստատման բանակցություններում, խաղաղության պահպանման ու մարդասիրական գործողություններում կանանց կարևոր դերը: Բանաձևը կոչ է անում նաև կանանց համար անվտանգության ոլորտում տղամարդկանց հետ հավասար մասնակցության և ներգրավվածության հնարավորություններ ապահովել: Բանաձևը որպես առաջնային խնդիր է դիտարկում նաև կոնֆլիկտային երկրներում կանանց և աղջիկների նկատմամբ սեռով պայմանավորված բռնությունների վերացումը, բռնաբարությունների կանխարգելումն ու սեռական հետապնդումների ու ճնշումների բացառումը:

Հաշվի առնելով զինված հակամարտությունների ազդեցությունը կանանց և աղջիկների վրա՝ բանաձևը կոչ է անում ՄԱԿ-ի անդամ երկրներին կոնֆլիկտների կանխարգելման, հաղթահարման և լուծման ոլորտի բոլոր համակարգերում՝ ներառյալ ազգային, տարածաշրջանային և միջազգային, ապահովել կանանց ակտիվ մասնակցությունը:

Առկա խնդիրները հիմք են հանդիսացել ինչպես առանձին երկրներում, այնպես էլ ռեգիոնալ մակարդակում անվտանգության ոլորտի քաղաքականության փոփոխությունների: Օրինակ, Հոլանդիայում հիմք է դրվել մի ծրագրի, որը խթանում է Միջին Արևելքում ընթացող խաղաղության հաստատման գործընթացներում Իսրայելի և Պաղեստինի կողմից կանանց որպես բանակցողներ նշանակելուն: Նմանապես, Աֆրիկյան տարածաշրջանում 1997թ-ից ներդրվել է Առաջին կանայք Խաղաղության Նախաձեռնությանը: Վրաստանում ընդունվել է Գործողությունների

<sup>111</sup> Resolution 1325 (2000) Adopted by the Security Council at its 4213th meeting, on 31 October 2000

Պլան Կանաց Պայմանների վերաբերյալ, որը նպաստում է զինված հակամարտությունների և խաղաղության հաստատման վերաբերյալ որոշումների կայացմանը կանանց ակտիվ ներգրավվածության համար արդյունավետ մեխանիզմի մշակմանը:

### **Կանայք զինված ուժերում<sup>112</sup>**

ՀՀ Զինված ուժերի ներկայիս բարեփոխումներն ուղղված են բանակ-հասարակություն առավել արդյունավետ համագործակցմանն ու հասարակության լայն շերտերի կողմից Հայոց բանակին՝ որպես պետության և հասարակության անվտանգության երաշխիքի, սատարմանը: Ներկայիս բարեփոխումները, բացի գորակոչային տարիքի արական սեռի ներկայացուցիչների մոտ զինծառայության վերաբերյալ դրական պատկերացումների և վերաբերմունքի ձևավորման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունից, ենթադրում են պայմանագրային սկզբունքով զինված ուժերում որակյալ մասնագետների՝ տղամարդկանց և կանանց ավելի ակտիվ ներգրավման մեխանիզմների ստեղծում: Գենդերային հավասարությունն ընկած է ՀՀ Սահմանադրության հիմքում, որով սահմանվում է նաև երկու սեռերի հավասար պարտականությունը՝ մասնակցելու ՀՀ պաշտպանությանը:

ՀՀ ԶՈՒ առկա պայմանները ենթադրում են համապատասխան բարեփոխումներ՝ իգական սեռի ներկայացուցիչների զինծառայության ապահովման համար՝ հաշվի առնելով հայաստանյան հասարակության մեջ կնոջ և տղամարդու սոցիալական դերերի վերաբերյալ ընդունված պատկերացումները, օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Մի կողմից, հայաստանյան հասարակության ներկայիս ոչ պատերազմ, ոչ խաղաղություն վիճակն ու չորս անմիջական հարևաններից երկուսի կողմից ՀՀ հանդեպ ակտիվ թշնամական քաղաքականությունը ենթադրում են հասարակության ավելի ակտիվ ներգրավվածություն պետության պաշտպանության գործում, որի համար հաճախ որպես օրինակ է դիտվում Իսրայելի պաշտպանության բանակը: Հատկանշական է վերջին տարիներին ՀՀ ՊՆ երկու ռազմական իսնտիտուտներում իգական սեռի կուրսանտների ընդունելության գործընթացի արդյունավետ իրականացումը:

<sup>112</sup> «Կանայք զինված ուժերում. Ինքնաընկալումը, ներգրավման և հարմարման բարելավման խնդիրները», Արթուր Աթանեսյան, ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոն



Մինևույն ժամանակ անհաժեշտ է ուսումնասիրել և հասկանալ Հայոց բանակում արդեն ընդգրկված կանանց ընկալումներն իրենց սոցիալական դերի և կարգավիճակի, իրենց հանդեպ հասարակության վերաբերմունքի, առկա առավելությունների և դժվարությունների վերաբերյալ, ինչը կարող է նպաստել բանակում իգական սեռի ներկայացուցիչների ավելի ակտիվ ներգրավման հետ կապված խնդիրների և ռիսկերի բացահայտմանն ու լուծմանը:

Ըստ այդմ ՀՀ-ում բացահայտվել են զինվածուժերում կանանց դերի վերաբերյալ հետևյալ խնդիրները՝

- Հայաստանյան արդի հասարակության մեջ տարածված սպառողական մշակույթն անդրադառնում է այնպիսի արժեքի վրա, ինքպիսին է հայրենասիրությունը: Համապատասխանաբար, զինծառայության արդյունավետության խթանման համար, բացի բարոյական խրախուսման, անհրաժեշտ է հստակ ռացիոնալ և լայն շերտերի կողմից ընկալելի աստարկների ամբողջություն, որոնց թվում պետք է լինեն հասարակության մեջ զինծառայող կանանց և տղամարդկանց սոցիալական բարձր կարգավիճակը, սոցիալական ապահովման երաշխիքները, որոնք կապահովեն զինծառայողների մրցունակությունը այլ սոցիալական խմբերի հետ մեկտեղ:
- Իգական սեռի ներկայացուցիչների զինծառայության արդյունավետության բարձրացման և նոր սերնդի կանանց ներգրավման համար անհրաժեշտ են ենթակառուցվածքային լրացուցիչ բարեփոխումներ: Սա, մասնավորապես, վերաբերում է ռազմական ինստիտուտներում սովորող իգական սեռի կուրսանտների՝ գորամասեր գործուղվելու խնդրին, որի հետ կապված գորամասերում անհրաժեշտ են համապատասխան ենթակառուցվածքներ և պայմաններ
- Բացահայտվել է, որ ռազմական ինստիտուտներում ուսանող իգական սեռի կուրսանտներին, ինչպես նաև գորամասեր գործուղվող իգական սեռի շրջանավարտներին ղեկավարության և հրամանատարական կազմի կողմից ցուցադրվում է լիարժեք աջակցություն, այդ թվում՝ զինվորական կոլեկտիվում հարմարման գործընթացում:
- Հայաստանյան հասարակության մեջ առկա կարծրատիպերը, որոնց համաձայն կանայք դարձյալ չեն ընկալվում որպես անվտանգության համակարգի կարևոր մասը և դիտվում են առավելապես որպես կենցաղային

մակարդակում որոշումներ ընդունողներ, հակասության մեջ էմ տնում կնոջ դերի և գործառույթների իրական բազմակողմանիության, մասնավորապես, անվտանգության ոլորտում հայ կանանց պատմական և ներկայիս կարևորագույն դերի հետ:

- Ջինձառայող կանանց և փորձագետների կարծիքով, մոտ ժամանակներում իգական սեռի ներկայացուցիչների և մասնավորապես սպայական կազմում կանանց քանակի ավելացումը կնպաստի նաև այդ սոցիալական խմբի՝ զինվորական կոլեկտիվներում և առհասարակ հասարակության մեջ ավելի արդյունավետ հարմարմանը, կարծրատիպերի հաղթահարմանը և առավել բարենպաստ ենթակառուցվածքների ձևավորմանը
- Կարևորվել է հայաստանյան ՋԼՄ-ների աշխատանքի արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ բանակի և զինձառայության վրականիշի բարձրացման առումով: Մասնավորապես, անհրաժեշտ է բազմազանացնել և բարելավել զինվորական առօրյան լուսաբանող տեղեկատվությունը, լիարժեքորեն անդրադառնալ զինձառայող կանանց կերպարին՝ կանխելով հնարավոր թերընկալումներն ու ասեկոսեններով առաջնորդվող հանրության կարծրատիպերը